



Մեծ Հայուն,  
Անզուգական Ռևուլյոն,  
Հմուտ Քահանէրին, Մրբազմ Քերպողին,  
Անբասիր Եկեղեցականին,  
Եռու Շնորհալիին,  
Սուրբ Յակոբեանց գահական,  
Ն. Ա. ԵՊԻՇԵ ԱՐՔԵՊՈԽՈՎՈՎՈՍ ԳՈՒՐԵՑԱՆԻ  
Յիսուսիայ Քահանայուրեան Յոբեխանին առքիւ  
ՀԵՂԻԹՈՒՈՅԻ  
Նուզուրեան Ազգ. Վարժարանի Ռևուլյոնը առքիւ  
Կը յայնէ:  
Եթ յուրին բարձաննն, իր անկեղծ համակրանց  
Աւ կ'ազօք:  
Արեւածա ու խաղաղ կեանիին համար:

ՏՆՈՐԻՆ Գարեդին Տիւրէէրեան  
Յունան Յովհաննէսան Յակոբ Աւագեան Անահիտ Կ. Նաւասարդ Միքարիի Մարտիան  
Սահակ Անտոննէսան Արշալոյս Շահրոզեան Մատէն Թոգաւալեան  
Հեղիսովոլիս, 25 Հոկտեմբեր 1929



## ԱՄԵՆԱՌԱՋԻՇԻ

Տ. Տ. ԵՊԻՇԵ Ա. ԱՐՔԵՊՈԽՈՎՈՎՈՍ ԳՈՒՐԵՑԱՆ  
ՊԱՏԲԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Ամենասահման Մրբազմ Պատրիարք Հայ'ր

Պեղակեհան Վարժարանի ՏՆՈՐԻՆԱՌԹԻՄՆԵԼ եւ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ Ամենասահման Մրբազմութիւն Քահանայուրեան մասաւանդ իրենց հիմնան համարով զայտում եւ երախտավիճուրիւնը ոզեկան այն բարձր վայերնենց համար որոնց իր արձեկը Մրբազմ աղբիւր կանգնած է կես դոր շարունակ, եւ յիշելով թէ Ձեր Մրբազմուրիւնը անցելով մեջ պատուած է Պեղակեհան Վարժարանի՝ հոն ռւուցանելով եւ ապա կրկնակ անզամներ անոր բնրացքը հովանաւուելով, կը բերեն իրենց ընորհապար սիրը:

Արգիսական խորին ակնածանօթ

Օննիկ թ. Պէրպէրեան	Ճահան թ. Պէրպէրեան	Նուրհան թ. Պէրպէրեան
Գեղամ Երամեան	Մարտիրոս Արզոյեան	Քերովրէ Կոստանդեան
Սուրէն Բարախեան	Lahargouette	R. Ullmann
Մարտիրոս Պալայեան	Յակոբ Քումրուեան	



## ԱՄԵՆԱՌԱՋԻՇԻ

Տ. Տ. ԵՊԻՇԵ Ա. ԱՐՔԵՊՈԽՈՎՈՎՈՍ ԳՈՒՐԵՑԱՆ,

Բարձրաւունին Մրբազմ Պատրիարք Հայ'ր

Մրբազմուրեանց Առաքելական Արոռոյն

ՊԱՏԲԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Խնդրեմ, բոլ տու՛ք մեզ, կրտսկան հոմես աշխատաւուներու, ՄԱՆԻՍԱԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՐԱՆԻ Տնօրինուրեան եւ Ռևուլյոնական Մարմանն, այն տողերով խնարհաբար ներկայացնել Հայաստանեայ Եկեղեցւոյ յոյժ պատուական եւ ամենասիրելի Հայրազետիք, կրտսկան անզուգական ռամսիրայիլ, կրօնաբոյ բանատեղուրեան չնազ պատէտի՝ մեր

ամպատում հիացման, խորագոյ երախտավիտուրեան, որտովին ընորհուորութեանց եւ հենուանոց արտայոցաւրինները՝ Մըբազնուրեանդ համայնական բարեբասիկ ձեռնադրութեան յիանուանլին, Ասկեայ Յորելիանին, առքիւ:

Եցիւ երկին ընորհն Զեզ, Ամենալավատիւ Մըբազն Հա՛յր, անեղծ առողջուրիւն, արեւատուրին եւ նույզ խաղաղուրիւն, որպեսի դեռ եւկա՞ւ սարիներ արժանապին բազման Մըբաց Յակոբինց Գանին վրայ՝ Ձեր բնածին զերազանց բարութեամբ և խոնական իմաստուրեամբ հովուե՛ք աշխարհին չորս հովերուն ցուուած մեր գրքախ Ազգին, որուն սիրու ո՛յնան ուժքին տրուած է զարեւով, կը տրոփէ այժմ եւ պիտի տրոփէ բնածին հեռասպեկի բուռն սիրով, մասնաւոն՝ երբ բազման են Առամերական Ս. Արտուրյաց վրայ Ձեր Ամենապատուրեան հնան՝ հազուազիւս արժանիթներով օծուուած անձնին Հովուապեսներ՝ ի փառս Հարատանեաց Եկեղեցւոյ:

Հայցելով ջերմագինն Տիրուանին օրհնուրիններդ ու Հայրական բարձր նովաճիգ մեր և Վարժարանին վրայ՝ որդիական ակնօնուրեամբ կը համբոււենի Մըբազնուրեանդ օծուուածն եւ մնամ խոնարհ կրտական մշակներն Ազգին Հայոց

Սովոր Մաներական, Զարուհի Մաներական,  
Հիւնապիւր - Տնօրինուհի համանուն Վարժարանի  
Առուցչական Մարմինն եւ Առակերտուրիններ

26 Հոկտ. 1929 ԳՈՀԵԲԻ - ԵՊԻՊԱԾՈՒ



ԳՈՀԵԲԻ, 25 Հոկտեմբեր 1929

Առ. Վատակառուր և Բազմերախ Յորելիան

Տ. Տ. ԵՊԻՆԵ Ա. ԱՐՔ. ԴԱՒՐԱԿԱՆ

Անոր ոռուն կեանին նուիրում համակ  
Ու նոխ սեզան եզու իմբնընայ զենան  
Գիրի, զգրուրեան բիւր ներնուն ուսմանց,  
Որուն շունչն ու վարեն, զեր այօրք լուին  
Յուսիկ երկնեցին շրեազ ընտանին  
Հայու հաւատքի հազիւուր զբնդին:  
Որու կեանքը սոսկ ու ամենուն բարի  
Գրծիսն ամսպերեն Հայու երկնեցին  
Միւս ի վեր կանգնի, զեր փառս փայլի,  
Որուն յուշը սոսկ, սրբալոյս իւզի  
Խրեւ իւզ զուարը, կը մեզմն ամեն  
Յուերն Հայուրեան . . . .

Այս Հօր Պատուական, ձօնին եւ տրուո  
Դաստիսու ամեն ԹԱՇՃԵԱՆ ԿՐԹՈՒՐԱՆԻ  
Երենց ողջ իրենքն արեւանս կինոց  
Ու յերկիր ի խոնարհ, հայցն Բարձրեակն  
Անբառամ պրանկ, սրբալուս կինոց . . . .

Տնօրինուհի ԹԱՇՃԵԱՆ ԿՐԹՈՒՐԱՆԻ  
Վ. Մ. Թաշենան Քոյշեր եւ  
Առուցչական Մարմին



Ամենապատիւ Տէր,

Տէր Եղիշէ Սրբազնն Սրբեալուկ. Դուրեհան

Սրժանընալիր Դահակալ Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց  
ի Ս. Երուսաղէմ

Ամենապատիւ Ս. Հայր.

Զեր Բարձր Սրբազնութեան Քահանայական ուրախալի Յիսուսնեակի առթիւ, պատիւ ունիմ չնորհաւորի զջեղ և բարեմազթել Զեր Բարձր Սրբազնութեան պատուական կենաց երկարութիւն եւ քաջողջութիւն, ի պայծառութիւն Հայ Եկեղեցւոյ եւ ի խնամս Զեր Հօսմու:

Ապաքէն Հայ Եկեղեցին մխիթարուած կ'զգայ ինքինքը՝ ունենալով յանձին Զեր Ա. Սրբազնութեան Հոգուապիս մը, որ իր յիսնամեայ բազմարդիւն ծառայութեամբ պայծառուցացած է Եկեղեցին եւ իր սրբազն պերճախօսութեամբ քարոզած է եւ կը քարոզէ միշտ կենաց Բանը եւ կ'ուսուցանէ Առեւտարանական ճշմարտութիւնները, ոչըզ և վարդապետութիւնը՝ ճշմարտապէս առաքելական հարազատ ոգւով և նմանութեամբ:

Զեր Բարձր Սրբազնութիւնը, իբրեւ մին Հայ Եկեղեցւոյ մեծանուն հայրապետներէն, ախոյեան և պաշտպան հանդիսացած է Հայ Եկեղեցւոյ ուղղափառ զաւանութեան եւ առաջնորդած է հաւասացեալներուն, մեծերէն մինչեւ փոքրերը, հաւասաքի, սիրոյ, եղբայրութեան եւ ճշմարիտ աստուածգիսութեան մաքուր ուղիները, իւր պատկառելի անձնաւորութեան կենցաղով եւ օրինակով: Ոչ միայն այսչափ, այլ նաև գրական բազմարեզուն արտադրութիւններով եւ հեղինակութիւններով, իբրեւ ներհուն խմաստամերքանասէր և իբրեւ զգայուն և փափկածաշակ բանահիւս, ճոխացուցած է Հայ լեզուն և գաղրութիւնը, փառազարդելով զայն բանաստեղծական և բանասիրական-գրական փայտն էջերով:

Մեծ եղած են և են Զեր արդիւնքները նաև իբրեւ Ռւսուցիչ, և երջանիկ են անոնք որ յստ Զեր ուսանելու բախսն ունեցած են:

Անմոռանալի են ինձ համար այն գեղեցիկ օրերը, յորս Զեր Բ. Սրբազնութիւնը Վարժարանիս աշակերտներուն կ'աւանդէր հայ լեզուի, կրօնի և խմաստափրական ուսմանց գասերը, որոնց կ'ունկնդրէին աշակերտները անձանձրոյթ, ճաշակելով քաղցրութիւնը Զեր մեղքածորան շրթներէն հոսող բառերուն:

Պարծանք մըն է Հայ Ազգին և Եկեղեցւոյն, որ ունի զԶեզ իր ծոցին մէջ և պատիւ մարդկութեան Զեր անձնաւորութիւնը, յաչս օտարաց խալ սիրելի և ակնածելի:

Եւ արդ Զեր Բ. Սրբազնութեան Յիսուսնեայ Յորեկեանի և միենոյն ատեն Զեր անուան տօնին, իբրեւ Ազգի բարոյական և մտաւոր յառաջդիմութիւնը խորհրդանշող մեծանուն վաստակաւորի տօնին առթիւ կը մատուցանեմ չնորհաւորութիւններս և մաղթելով որ Բարձրեալը յամս յամայր պահպանէ Զեր թանկազին կենաց օրերը եւ արժանի ընէ զԶեզ տօնելու նաև Զեր քահանայական և զրական վաստակոց ագամանդեայ Յորեկեանը.

Մնամ Զեր Բ. Սրբազնութեան

խորին յարգանաց հաւաստեօք

Յ. Գ. Նիկողոսիան

Նախկին Հիմնադիր-Տնօրին

Նիկողոսիան Վարժարանի՝ ի Կ. Պողիս



Ամեն, Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Գուրեման  
Երուսաղէմի Ա. Պատրիարք

**Անուշիկ Սրբազնութեան.**

Կը սիրեմ յուսալ որ Զեր պատուական առաջութիւնը կատարեալ է, որուն համար աղօթաղ է հայ ժողովութը:

Այս պահուստ Զեր Յիսուսմեայ Քահանարարթեան Յորելեանին առթիւ ուժգին կիրապով կը բարախին բոլոր այն սիրակը, որոնք Զեր մօտէն վայելելու բախար ուժեցած են, հոգ չէ թէ անոնք կը գտնուին օտար երկնքի ու օտար աստղերու ատկ: Ես ամէն օր երեւակայութեամբ կուգամ Երուսաղէմ քաղաքը, Յիսուսի Սուրբ Տաճարը, վայելու համար այն բոլոր հոգեպարար խրախնանքները, որք պիտի կատարուին ի պատի Զեր տաղանդին: Հազար երանի՛ տեսողաց:

Կը ցաւիմ որ բառեր ու նախաղասութիւններ կը պակսին ինձ արտայայտելու համար իմ սրտաբուխ զգացումներաւ:

Անուշիկ Սրբազնութեան, թէե կը փափաքէի զրել Զեր սակայն չէի համարձակեր:

Անցեալ կիրակի օր մեր առաջնորդը, Գորեգին եպս. Խաչատուրեան, ինձ քաջակերեց որ ուղղակի Զեղի զրեմ, որքան որ կընամ զործածել իմ ժանդասած զրիչս: Համբուրելով Զեր Սուրբ աջը, միամ միշտ աղօթող Զեր անգին կենաց արելաւառ թեան համար:

Զեր նախակին աշակերտուհին  
ՆՈՒՄԾԴ ՊԵՄԼՔԵԱՆ (Տ. ՆԵՐՍԵԼԵԱՆ)

1929 Մայիս 15

Pas. Calif.



Ա. ԱԱՐԴԻՍ  
ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻ ԼՈՒՏՈՒՆԻ

20 Մայիս 1929

**Առ Բարձրապատիւ**

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Գուրեման

Շնորհագարդ Ա. Պատրիարք Հայոց

Երուսաղէմի

**Բարձր. Սրբազն Պատրիարք Հայոց**

Զեր Սրբազն Հայութեան Քահանայական նուիրման Յիսուսմեայ պահծալի Յորելեանի առթիւ, Երջանիկ կ'զգայ նաեւ նուաստս անարժանաբար մատուցանելով իր ջերմագին մաղթանքները, հայ պատկառելի եկեղեցականութեան օրինակելի վերեւանիկ կեանքն ու արդիւնաշատ զործունէութիւնը խորհրդանշանող սա գեղեցիկ օրուան մէջ սրտազին խնդակցութեամբ հիացումի անկեղծ զգացումներ յայտնելով ննորհազարդ Յոբելարի:

Խոնարհաբար մատչելով ի համբոյր օծեալ ու Աջոյն

Զեր Բարձրապատիւ Հայութեան  
որդիական ակնածանօք  
ՄԵՐՈՒԺԱՆ ՔՆՅ. Տ. ԽՈՄԲՈՎ.



1929, Յուլիս 13 Ամերիկա-Ազգական (Եթովպակիա)

Գերաշնորհ

Տ. Բարդէն Ա., Եպսկ. Կիւլէսէրեան

Մէջ այժմէնի նարեկն մէջաս սայերէնի ապտէն:  
Ով որ ինձ բառ մը ուսոյց սուզիի զիս իւր ծառան բառ:

Սրբական Առաջարկած

Սրբագան Հայր

Հայ Մամաւը հետեւողներ քաջ գիտեն թէ՝ Երուազէմայ Պատրիարք Ամենապատիւ Եղիշէ Ա. Արքավիսկոպոսը Ուսուուցիչ եղած է ո՛չ միայն մամաւաւորներու, այլ նաև Հայ համայնքի. անսաց, որոնք Ն. Սրբաղնութեան մաքի լուսատու խորհուրդներն լմբարդինած են ու կ'մրուշնեն, թղթատելով օրուան Հայ թերթերն, Հանդէսներն, Տառիցայցները և մինչեւ իսկ Օրացոյցները: Ի գէպ չէ, Դուրեան Մատենարագանի շինութեան առթիւ, զերիշել գերոզգեալ արարական ասացուածն. Մէկ այինքնի հարգին փետաս սայերէնի նիս ասպանն. — Ավ որ ինձ բառ մը ուսոյց ստուգիւ զիս խը ծառան ըրաւ: Ծառայք պարտին ծառայել իր Ֆիրոջ, երբ ծառայութեան ժամն հնչէ: Ուստի, Սրբազան Հայր, ընդունիցէք ներփակեալ մէկ Սթէրլինի Զէքն եւ յատկացուցէք զայն Դուրեան Մատենարագանի: Որով եմ և մնամ միշտ խոնարհ ծառայ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՔՃՆՅ. ԿԵՎՃՐԵՑԵՆ



“ARMENIA” CHIGWELL.

Լոնառն, Օգոստ. 5. 1929.

Գեր. Տէր Բարդէն Եպսկոպոս

Սրբագան Հայր.

Ներփակ կը գանեք Հ Անդղ. ոսկի, զորս խնդրեմ հաճեցէք արձանագրել տալ ուր որ անկէ, մին Սիրն ի բաժնեկլին եւ միւսոք Ամեն. Դուրեան Պատրիարքի ՅՈՒՅԵԼԵԱՆՆԻ նուէր փոքրիկ:

Հաճեցէք նաև զիս արձանագրել տալ հետեւեալ գործերուն. Խոնի և Խոս Օրմանականի, Պատմուրին Երուսաղէմի Սաւալանեանցի. եւ Միաբամի և Այցելու Երուսաղէմի, Գեր. Աղաւնունիի:

Երուսաղէմը տակաւ բոլոր Հայութեան ուշագրութիւնը իրեն գրաւելու վրայ է: Լուրջ չարժում մը տեղի ունենալով մեղուածան աշխատանք կը կատարուին հոն ժամանակէ մ'ի վեր. և արգէն իսկ զրական կարեոր կեդրոն մը հանդիսացած է Վենետիկի եւ Վիեննայի հետեւողութեամբ: Ասիկա մեծապէս զնահատութեան եւ քաջալերութեան արժանի է: Կը չնորհաւորեմ սրտագին բոլոր կազմակերպող ու գործագրութեան ճգնող մտքերն ու գործող ձեռքերը: Մի՛մեը արժանաւոր կերպով պակաս մը կը լեցնէ հայ պարբերականներու շըջանակին մէջ: Կարողութիւն եւ երկարատեւ կեանք ու յաջողութիւն կը մազթիմ:

Սրբագան Պատրիարքի Յորելեանին գաղափարը յշացողներ մէծ ծառայութիւն մը մատուցին ո՛չ միայն Ս. Յակորի, այլ բովանդակ հայութեան: Այսպիսի մի ականաւոր անձնաւորութեան արժանաւոր զնահատանք մը սարքելով՝ հայ ազգին պատիւը Փրկեցին, ցուցնելով թէ Հայն ալ արժանիք զնահատող է: Ասիկա Յորելեաններուն Յորելեանը պիտի ըլլայ: Հայոց համար լնդհանրապէս ժլատ գտնուող Նախախնամութիւնը, այս անզամ, սիալմամբ թէ պատահաբար, բարի գտնուեցաւ ներկայ պատեհութեամբ, արժանաւոր մարդը ամէնէն յարմար տեղը առաջնորդելով: Դուրեան Սրբագան թէն էջմիած-

հայ գահուն էր արժանաւոր, եւ տակայն ներկայ պարագաներուն հոն Երուսաղեմի չսփ օգտակար չէր կրնար հանդիսանալ: Արդարեւ Նախախնամութիւնը այս անգամ Հայ աղ զին նպաստաւոր գործ մը անսաւծ եղաւ:

Կը մաղթեմ որ Ազգն ալ միահամուռ արձագանք տայ Յովելիանական Յանձնաժողովի կոչին և աշխարհիս չորս ծայրերէն սիրազեղ արտայացութիւններ և տատ նուէր նիր անգան Երուսաղեմի ի միսիթարութիւն և ի քաջարերութիւն այդ մատորական վիւթակին:

Սրբազին բարձներով և անկեղծ յարգանքներով

Մնամ Զերդ խանարհարար,  
Կ. ԹՌԻՄՈՒԵԱՆ



ԱՏՐԱՍԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ  
ԹԱՏՎԱՄԱԿԱՆ  
ԺՈՂՈՎ

15 Օգոստոս 1929  
ԹԱԿՐԻՉ

Ամենապատիւ Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս

Դուքեանի Յիանամեայ Յովելեանի

Կերպանական Յանձնաժողովին

Առաջատականի Հայոց թեմական ժողովի, թեմական խորհրդի, առաջնորդարանի, գպրոցական հաստատութեանց անունով կը չնորհաւորեն Ամենապատիւ Արքազան Հօր քահանայութեան Յիանամեայ Յովելեանը, իրեւ բարյական բարձրութեան վրայ կանգնած աւետարանի աշակերտի, իրեւ գրագէտ-բանասէր-բանաստեղծի, իրեւ անքասիր հոգեւորականի, իրեւ լայնախոն չըջահայեաց պատրիարքի, իրեւ ազգաէր եկեղեցաւէր-ուսումնասէր հոգուի:

Ցաւ ի սիրու թեմը, չքաւորութեան հետեւանքով, չկրցաւ իր լուժայով հաղորդակից լինել «Դուքեան Մատենադարանի» հոյակաս չէնքի կառուցման, առաջնորդարանը իր դուզնաքեայ չնչին նուէրով՝ 2 անդիսական սոկով՝ կը մասնակցի չէնքի անկիւնի մորին յարգանքներով

Առաջնորդ Հայոց Առաջատականի՝  
Ներսէս Արքեպիսկոպոս Մելիքթիւնին



Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան

Արժանընափառ Պատրիարք Հայոց

յԵրուսաղեմ

Ամենապատիւ Արքազան Յովելեար.

Հայ քերթողական բարաստանին քանի մը վախտ ծաղիկներ բերած ըլլալու զոյլն ծառարութիւնն, արժանացած Զեր Ամենապատութեան ա' յնքան թանիազին զնահատումին, համարձակութիւնը կուտայ ինձ Զեր Արքազանութեան յինամեայ Յովելեանին առիթով ընծայուած մեծարանքի ու յարգանքի համազային արտայացութեան մէջ իմ համեստ քաժինս բերելու և իմ խորունկ հիացումն յայոնելու Զեր բանաստեղծական ոգբական անհաւասարելի տաղանդին, որպէս շատ անկեղծ արձագանզը՝ հողիին ամինչն քաղցր ակունքներէն բխող զերմ խանդաղատանքին:

Զեր Ամենապատութիւնը, իր աստուածային կոչումէն անջատարար, իր զմայելի

արուեստին ու խորագիւղ մորթին ճառապայմանովը մեր խմացական աշխարհին ամենէն վուեմ ու լուսուար երեսյմներէն մէկը կը հանդիսապրախ այսօր, մեր սրաները ապօրելով հարաբառութեան ու ցնծութեան ապօրէն բարախուն եռանդովը:

Արդարեւ, ինչ զերապոյն երջանկութիւն հայ ցեղին համար, իր հաւատքին ու հոգեկան հարսութիւններու սրբազնն պահպանումին նուիրուող Զեր պաշտելի անձնաւուրածեան մէջ ողջունել ու պահծացնել երինաստուր չնորհը Զեր քերթողական և խմացական արժանիքներուն մեր հաւաքական կեանքի բազմաթիւ մարզերուն վրայ ցոլացած:

Կը իմորիմ, Ամենապատիւ Սրբազնն Յորելեար, որ թուլառութիւն չնորհէք ինձ համբուրելու Զեր Ա. Աջը, սրտապին մազթանքներով և որդիական խորին ակնածանոք՝

18 Ապրո. 1929

Խոնարհարար

Թ. Ա.ԶԱՅԵՑՅԱՆ

Աղջ. Պատրիարքաբարան



Կ. Պոլիս, 25 Ապրո. 1929

ԱԹՈՌ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ՄՐԳՈՑ ՅԱԿՈԲԵԱՑ

ԵՐՈՒՍԱԼԵՄ

ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Ամենապատիւ Տէր

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Հայոց Ա. Երուսաղէմի.

Մեծանուն Սրբազնն Յորելեար.

Զեր Ամենապատութեան Քահանայութեան և Աւսուցչական գործունէութեան բարերաստիկ Յիսոնամեակին ասթիւ Հայ Ժողովուրդը, ընտրանի թէ հասարակ, զիտուն թէ տղէտ, եկեղեցական թէ աշխարհական, անհուն խնդութեամբ կը բերէ իր մեծարանքի բաժինը Զեր Բարձր Սրբազնութեան:

Այդ պարտականութիւնը ես ալ կը փափաքէի անձամբ կատարել, սակայն դժուարին պարագաներ արգելք եղան նպաստակիս իրագործման: Աւստի, ներկայիւս կը փութամ սրտապին բերկրանքս և ցնծութիւնս յարոնել Զեր Բարձր Սրբազնութեան, իր փափառաւոր Յիսոնամեակի հանգլառութեանց առթիւ:

Զեր Ամենապատիւ Սրբազնութեան նկատմամբ ազգովին յայտնուած այնքան սրբատապին մեծարանքին համար կը հրճուիմ, վասն զի կը ճանչցուին ու կը զնահատուին Զեր արդիւնաւոր աշխատութիւններն ու օգտաշատ ծառալութիւնները: Զուտ տոհմային զատիքարակութեամբ մնած Զեր միտքը եւ Հայ Առաքելական Ա. Եկեղեցւոյն ողիով օծուն Զեր հոգին այնպիսի զարմանալի թափչքներ առին, որ կրցան ըմբոշնել համաշխարհային զրական հրաշչակերանները, եւ արդ բալորը ի սպառ զրիք, յիսուն տարիներ անընդհատար, հայ նորահաս սերունդներու օգտին: Զեր բարձր հմտութեամբ լուսատու փարոսը հանդիսացաք հարիւրաւոր ուսանողներու մաքին, Զեր հոգեւորական շունչով Դաստիարակը՝ հաղարաւոր բարեպաշտներու հոգեւոր ու բարոյական կեանքին, եւ Զեր բազմակողմանի հմտութիւններով ու անխոնջ պրագտութեամբ գերազանց Մշակը հայ զրականութեան:

Դուք, Սրբազնն Հայր, որպէս Բանաստեղծ, Քրագէտ, Բանատէր, և հոգեւորական մարգին մէջ որպէս քաջաքարոզ հովիւ, Աստուածարան և Մեկնարանող, ո՛չ միայն լուսաւոր Դիմք մը, այլ մանաւանդ Զեր բարձր կարողաթիւններուն հետ Զեր չնորհայի եւ աւետարանական քաղցրաբարոյ կենցաղովը հայ եկեղեցականութեան պարծանքը կը հանդիսանաք:

Ահա, Սրբազնն Հայր, այս են Զեր հոյակապ անձին նկատմամբ խտացուած իմ համեստ մասածութերու և, հետեւբար, չերմապէս խանդավառուած Զեր բեղուն գործու-

նէութեան Յիսոնամեակի առթիւ, որսազինս կը մաղթեմ, որպէսզի Աստուած օրհնէ ու արդիւնաւորէ Զեր բոլոր ջանքերը, աշխատութիւնները, փափաքները, որսնքայ եկեղեցւոյն եւ Ազգին փառքին համար են, եւ պարզեւէ երկար ու բարօր կեանք, ի միաւթարութիւն Հայ Ազգին եւ յօդուտ Ս. Յակոբեանց Մթուոյն և Միաբանութեան:

Համբուրիւ Ս. Աջոյդ՝

Մնամ խորին մեծ արանց հաւատակաք  
ԱՄԲՈՍ ԵՊԻՄԿՈՊՈԽ



P. H. CRETE

Grosvenor House  
21, Old Court House Street,  
Calcutta, 1 Հոկտեմբեր 1929.

Պատուակալ Նախազահ և Ատենապետ

Յորելինական կեզր. Յանձնաժողովի

Ամեն. Ս. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան Պատրիարքի  
յերուապէմ:

Գերապատիւ Հայր.

Հստ խոստանան հասուցանելու մի հազար (1000) սոկի վասն «Դուքեան Մատենադարանի» շնութեանն, ծրաբեմ ի ամայ մի բարախ Ա<sup>թ</sup> 72/13 թուեալ 30 Մեպահմբերի, յաջողակ Ս. Պատրիարքի վասն 500 սոկիի, այս բնդ անցեալ Մարտ ամսէ առաջածս գումարին, կատարելազգործեմ խոստունքս, եւ սպասեմ կարգալու ձեզանէ դումարիս անկորուտ սուցումն:

Նամակս այս պիտի հասանի Զեզ փոքր ինչ յասաջ քան Յորելեանի հանդէսի օրն: Վասն սրոյ շատ շնորհակալ պիտի լինիմ Զեզանէ եթէ բարեհաճիք իմ կողմանէ շնորհաւորել Նորին Սրբազնութեանն, և լիչէք խոնարհութեամբս, թէւ անձամբ հեռու ովտի լինիմ հանդէսի օրն, սակայն չպիտի մոռանամ ազացելու առ Աստուած որ տայ իւրն երկար եւ առողջ կեանք որ ձեզ տարիք գեռ շարուակի իւր Պատրիարքութեան պաշտօնն յօդուտ մեր ազգին:

Երբ Մատենադարանի շնուռածքն վերջանայ, ուրախ կը լինիմ եթէ մի պատեկերն առաքէք ինձ, միենոյն ժամանակ խողեկն միշէք արդեօք կը ցանկանէք ունենալ վասն Մատենադարանի քանի օրինաք Վենետիկ ապած «Հայ Տարագը» և Յավհաննէս Պատրինի «Պատմութիւն Քրիստոսի», ես յօժարութեամբ պիտի առաքեմ վասն զործածութեան Մատենադարանիի:

Մնամ սղջունիւ և յարգանոքս

ՊԵՏՐՈՍ Հ. ԿՐԵՏ.



Բարձրաշնորհ Ս. Հայր.

Զեր Բարձր Սրբազնութեան յոյժ յիշատակելի Յորելեանին առթիւ, փառնք և պարձանք Հայ Դպրութեան, գործով և արդեամբ այնքան բեզուն և լրութեամբն՝ ազգանուէք վաստակով ողողուն, ի խորոց սրախց վերընծայուած բիւրաւոր մրմունչներու եւ մաղթանքներու հետ՝ հաճեցէք ընդունիլ իմ ալ սրտազին շնորհաւորութիւններս եւ շերտազին մաղթաքներս Զեր արեւշատութեան համար: Էսականի երախտապարտ Զեր բազմաթիւ աշակերտութիւնն եւս կը ձայնակցի ինձի մասուցանելու համար Զեր այս առթիւ իր բոլորանուէք պաշտամունքի խունին և խորին մեծարանց առնաւատշեայն:

Մատուցեալ ի համբոյի Ս. Աջոյդ՝

Մնամ միշտ Զերդ անձնուէք

Մ. ՍՈՒԼԻԹԱՆԵԱՆ

Բերա, 2 Հոկտեմբեր, 1929

Էսական Վարժարան

ARMENIAN RECTORY,  
MANCHESTER.

229, Uppur Brook Street

6 Հոկտեմբեր 1929

Ամենապատիւ Տէր

Տ. Եղիչէ Ս. Արքեպոս. Դուքեան

Հայրախնամ Պատրիարք Ա. Երաւաղէմի

Ամեն. Արքազան Հայր.

Զեր Ամենապատութեան զրկեցի Զեր Քահանայական Յիսոնամեայ Յորելեանին առաջիւ Շապրեգանքեան Բարողներո Խորագրով հաստարակած զիրքո, որ երփներփեան բուրումնաւէտ փունջ մըն է Զեր Եկեղեցական աշակերտներու զգացումներէն քաղուած և աղուցուած ծաղիկներու:

Մ'զ Հարաշաղարգ և անուշակ Հայրո, երախտազիտական զգացմամբ համբուրելով աստուածարեալ Ս. Աջդ, կը մազթեմ բոլորով սրտիւ որ Երկինք արժանացնէ զմեզ տօնելու Զեր ազամանդեայ Յորելեանն ալ:

Մնամ անձնուէր և խոնարհ որդին  
Գեհոննի ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆՆ



ԽՆԱՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ  
Ս. ԼՈՒՍՈՒԹՈՒԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ

Ա.ՋԴ. ԿԵՐՄ. Վ.ԱՐԺԱՐԱՆԻ

ՂԱԼԱԹԻՈՅ

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Ս. Արքեպոս. Դուքեան

Պատրիարք Առաքելական Աթոռոյ

Ս. Երաւաղէմի

Առաքելաշնորհ Արքազան Հայր,

Խնամակալութիւնս հաճոյքով ստացած էր Զերդ Բարձր Արքազնութեան Քահանայութիւնս և զրական զործունէութեան Յիսոնամեայ Յորելեանին համար կազմուած Կիեզը. Յանձնաժողովու Մրագիր-Յայտագիրը:

Խնամակալութիւնս՝ յարգանոք խոնարհելով Զերդ Ամեն. Արքազնութեան պատկառելի անձնաւորութիւնն, աննման տաղանդին, անբասլի համբաւին և վսեմ հանճարին առջե, հոյակապ և շքեզ առաքինութիւններ, որոնք ա' յնքան պանծացուցին Դուքեան անունին հետ նաև Հայ Եկեղեցականութիւնը, թանկագին պատիւն ունի, յանուն Ազգ. Կեղրանական Վարժարանի Զերդ Ամենապատուութիւնն մատուցանելու իր որդիական և սրազին չնորհաւորութիւնները, և իր հեռաւոր մասնակցութիւնը բերելու ամսոյս Զերդ օրը կատարուելիք Յորելեանական հանգխառնութիւննց:

Ամեն. Արքազան Հա՛յր. Դալաթիոյ Ս. Խուսաւորիչ Եկեղեցին, որուն բեմն ալ յաճախ օծուած է Մեծ Վարդապետիդ պերճիմաստ քարզուներով, և Ազգ. Կեզը. Վարժարանը, որուն գատարանները վայելած են բազմահմուտ հայկարանիդ և մեծատաղանդ բանաստեղծ-զրագէտիդ հմայող ու առինքուող ներկայութիւնը, իրենց պատմութեան էջերուն մէջ անջնջելի կերպով արձանագրած են անունը հոյակապ Յորելեարիդ:

Ի՞նչ մեծ բախտաւորութիւն մը պիտի ըլլար Կեդրոնականին համար, եթէ ան ունենար հարաւաւորութիւնը իր փափաքած ձեռվ ու չափով մասնակցելու այդ Յորելեանին, որ պիտի խանգապաէ բոլոր անոնք, որոնք՝ առանց նկատի անենալու համզումի, տեսակետի և նոյնիսկ գաւանանքի առբերութիւնները, իրենց սրտին մէջ կը տածեն խորունկ և անվերապահ պաշտում մը՝ հանդէպ Զեր Բ. Արքազնութեան պատուական և թանկապին անձին:

Թրքահայ կիսադարեան կրթական ար բոյնը, սակայն, չզրկուելու համար ծրագրեալ «Դուրեհան Մատենագարան»ի հաստատութեան մասնակցելու պատիւէն, կը փափաքի «Քանի մը քարեր» ունենալ անոր չէնքին, և կամ «անկիւն մը» անոր զարակներուն մէջ:

Աւստի, ներփակելով մեր լուման, կը խնդրենք որ Զեր Բարձր Սրբազնութիւնը բարեհաճի ընդունիլ զայն՝ իրը հաւաստին ինսամակալութեանս և Կեղրանականի կազմին սրտագին և անկեղծ զգացմանց:

Տայր Երկինք, որ Զերդ Ամեն. Սրբազնութիւնը տեսնէր երկար և երջանիկ տարին չարք մը, ի վասս Ազգին և ի բարգաւաճումն հայ զրականութեան և Հայ. Ս. Եկեղեցւոյ:

Մատուցանելով մեր ակնածալից մեծարանքները, և համբուրելով Ամեն. Սրբազն Հօրդ Ս. Աջը.

Մնամք ամենախոնարհ որդիք

Ի զիմաց ինսամակալութեան Դաւաթիոյ

7 Հոկտ. 1929 Դաւաթիա (Կ. Պոլիս) Ս. Լուս. Եկեղեց. և Ազգ. Կեղք. Վարժարանի

վ. Ատենապալիրի Ատենապահութեան

(ԱՐԵՎ) Լեհուն Տնօթելեան ՏՕԲԲ. ԳՐԻԳՈՐ Յ. Քիշիշելլի

ՀԱԳԵՒՈՐ ՀՈՎՀԻ ՀԱՅՈՑ

Ի ՎԻԵՆՆԱ

№ 470

Վիեննա, 7 Օկտ. 1929

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբազն Արքեպոս. Դուրեհան

Արժանընտիր Պահակալ Առաքելական

Ա. Յակոբեանց Աթոռին յերուսաղէմ

Բարձրաշնո՞րհ Տէր,

Աւստրիոյ մայրաքաղաքին՝ Վիեննայի փոքրաթիւ գաղութին ևս, զիսաւորութեամբ իր անարժան Հոգեոր Հոգիւին, կը փութայ իր խոնարհ բայց սրտագին մաղթանքներն ու չնորհաւորութիւններն ուղղել Զերդ Բարձր Սրբազնութեան յառաջիկայ անուան և յինամենայ կրկնակ ծառայութեանց կրկնակ յորելեաններուն առթիւ:

Կը մաղթենք յերկնաւորէն որ պարզեէ Զերդ Բարձրապատուութեան կար և կարողութիւն գեռ բազմաթիւ տարիներ արդինաւէտ ու ազգօգուտ գործունէութիւնն մ'ունենալու:

Մատուցանելով մեր յարգանքն ու մեծարանքն Զերդ Բարձր Սրբազնութեան, խոնարհաբար կը մատչիմք ի համբոյր Ս. Աջոյդ.

Տրուպ Ծառայ

Հոգեոր Հոգիւ Հայոց ի Վիեննա  
Եղիշէ ՔՀՅ. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Յ. Գ. Յառաջիկայ Կիրակի, 13 Հոկտ. Ա. Մատրանս մէջ տեղի կ'ունենայ յատուկ միշտակի մաղթանք ու հանգէս ի յարգանս բարձրաշնորհ Յորելեարիդ:

Նոյն

BANQUE OTTOMANE

GALATA

Constantinople

Կ: Պոլիս, 9 Հոկտ. 1929

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբազն Դուրեհան

Արժանընտիր Պատրիարք Ա. Տեղեաց

յերուսաղէմ

Ամենապատիւ Սրբազն Պատրիարք Հայր,

Ներկայիւս կը փութամ մատուցանել իմ չերմազին չնորհաւորութիւններս և սրտագուխ մաղթանքներս մեծանուն Յորելեարիդ՝ կատարելի խիստ արժանի Յորելեանին առթիւ:

Արբագան Հայր, յանչափս կը փափաքէի Բարձրաշնորհ Արբազնութեանդ Յորելեան նին առթիւ յերասաղէմ հմտուելիք Մատենագարանին հարկ եղած ծախոց նվաթական ժառայութիւնս ի սպաս զնել. բայց խամեծ ցաւ սրախ, քանի որ գործաւոր մըն եմ, չկրնալով այդ փափաքիս համնիլ, և չուզիւով միանգամայն Բարձր. Արբազնութեանդ անուան կանգնելի այդ սիրալի կոֆողին առթիւ անմասն մնալ, փութացի ի սորու նրանակեալ հրնգ զիրքերը յանձնել Պատրիարքական Փոխանորդ Դեր, Ամբատ Եպիսկոպոսի Պազարեանի, գրկելու համար Զերդ Արբազնութեան:

Եթէ Բարձրաշնորհ Արբազնութիւնդ արժան կը համարի և կը հաճի ընդունիլ զանը նոյն Մատենագարանին մէջ, հաճեցէք հրամայել, որու որ անկէ, նոյն զրգերը փոխազդրել երասաղէմ:

Գրքերը հետեւալներն են.

Մէկ ձեռք բառարան	Ֆրանսահայ	Գ. Լուսինեան
»	Անգլ. Թուրքերէն	Բէտհաւս
»	Ֆր. Անգլիերէն	Բէտհաւս
»	Անգլ. Հայերէն	Յակոբեան
»	Պատմութիւն Պալքանեան Պատերազմին Ա. Անտոնիան	

Յուսալով որ իմ սոյն գոյզն նուէրս չնորհ պիսի դանէ Բարձր. Արբազնութեանդ մօտ, կը փութամ կանխել խորին չնորհակալութիւններս:

Մնամ համբուրի Ա. Աջոյն  
Բարձր. Արբազնութեանդ  
և կարօս Ազօթքին  
ի. Ծ.  
Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ



## ՈՈՒՄՈՒՆՈՀԱՅ ԹԵՄՈԿԱՆ ԳՈՐԾՈՒԹԻՒ ՄՈՒՄԻՒՆ

27, Bulv. Carol, Bucuresti

Nº 405

10 Հոկտեմբեր 1929

### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Արք. Դուրեան  
Պատրիարք Երասաղէմի

Յանուան Ռումանահայ թեմին և բովանդակ ռումանահայութեան՝ կուզանք մեր յարգանքին ու ակնածանքին հարկը բերել Զերդ Բարձր Արբազնութեան, իր հոգեւոր կոչման յինամհակի տօնին առթիւ:

Իրեւ մէկ մասնիկը հայ ժողովուրդին սփռուած աշխարհի վրայ՝ ջերմ սրտով է որ մեր խոնարհ ողջոյնը կը բերենք խառնել համազային այս տօնին, զոր հայ ժողովուրդը կը տօնէ այսօր խոնարհելու համար իր մեծազոյն զաւակներէն մէկուն յիսուն տարիներու վաստակին առջեւ:

Աւ այս առթիւ կը մաղթենք Զերդ Արբազնութեան նաեւ շատ օրեր, Հայ Եկեղեցւոյ և հայ գպրութեանց փառքին համար:

Նախազահ Ռումանահայ թեմ. Մարմինի

Առաջնորդ Հայոց Ռումանիոյ  
ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊՈՍ. ԶՈՂՐԱԲԵԱՆ

Բարտուղար Յ. Ա. ՍԻՐԱԽԵՆԻ	Անդամներ թեմ. Գործ. Մարմին	
	Ա. ՄԱՆԻՍԱԼԵԱՆ	Գ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
	ՄԻՄԵՐՆ Վ. ԹԵԱԶԵԱԵԱՆ	Գ. ԼԵՒՈՆԵԱՆ



ԹԱՂ. ԽՈՐՀՈՒԻՐԴ ՀՈՅԱՑ  
ՏՐԻՊՈԼԻՍ - ԵՒԲԱՆԱՆ

10 Հոկտ. 1929

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքոր. Դուրեհան

Արժ. Պատրիարք Առք. Աթո. Արքոց Յակոբեանց  
յԵրաւանցէց

Գերաշնորհ Ա. Պատրիարք Հայր,

Կը ցաւինք որ Ձեր Ամենապատութեան Յորելիանական հանգիսութեանց անձամբ ներկայ չի պիտի կրնանք զանուիլ . ուստի ջերմուածէս կը չնորհուորենք և կը վերասաքենք մեր որդիական անվելք մազթանքները, իմողրելով Բարձրեալէն երկար ասրիներ անխախտ եւ անսասան պահել Ձեր Արքազնութեան հոյակասպ ներկայութիւնը Առաքիւ լական Ա. Աթոռույդ վրայ :

Որդիական խորին յարգանօք

Կը մատչինք ի համբոյք Պատր. Ա. Աջոյդ

Ի զիմաց Թրիփուլի թալ. Խորհուրդի

Ամենազպիր Ամենապետ

Ա. ՄԱՀԱԿԻՃԵԱՆՆ Մ. ԱՐԾՌՈՒԽԵՅ



Բարիչնորհ Արքազան Հայր

Հայր Եղիշէ Դուրեհան

Պատրիարք Երուսաղեմայ

Վաղամեսիկ բանաստեղծ Պետրոս Դուրեհան, պաշտելի եղբայրը Ձերդ Բարձր Արքազնութեան, իր գոհար խոհերուն վերտառութեանց միոյն մէջ այսպէս էր արտայարուած մի օր :

« Հանճարը վիճին մէջ զանկ մը եղաւ, առանց մարգեսութեան եթերին մէջ զիսաւոր մը ըլլալու . . . »: Այդ հատընտիր տողերը զբած պահուն կրնա՞ր մակարերել արգեօք թէ իր անունը բանաստեղծ մակղիբով պիտի յաւերժանար մի օր զավնիներու յազթապանծ շարքով մը, թէ իր փոքր եղբայրը կուսակրօն եկեղեցականութեան նուիրուած իր օծուն զրչով, արտակարդ կարողութեամբ Ա. Երուսաղեմայ պատրիարքական գանձ պիտի բարձրանար և հուօկ ուրիմն յիսնամեայ յորելեանի մը փառապսակը կրել կարող պիտի ըլլար իր վաստակաբեկ ճակտին . . . եթէ զիսնար Պետրոս այսօրաւան Դուրեհան բարեհամրած զերգաստանի անուան չուրջ հիւսուած փառքը՝ պիտի բաէր այնմ. ոչ՝ զոյդ հանճարները զանկ չեղան վիճին մէջ . . . այլ՝ մարգեսութեան եթերին մէջ մէյմէկ զիսաւորներ . . .

Արդ, Աստուածընտիր Հայր, այսօրուան հանդիսականաց ցնծ երգներուն հետ կուգամ խառնել իմ ալ ակար ձախն Քալիֆօրնիոյ աստր ափերէն, մազթելով որ զես շատ ու շատ երկար տարիներ պայծառապեկ հորիզան մը ճաճանչէ ծերանապարդ Հայրապետիդ անխոնչ զիսուն եւ Ձեր փառմ ճակար փայլի իրեւ ասաղ մը անչէջ ու վճիռ :

Թող Առուր Յարութեան տաճարը թնդայ հիմերէն որ եղեր փառք պատիւ տոհմիդ ու հոտիդ . . .

Մնամ ջերմուշերմ օրհնութեանցդ կարօս

Ամենամիսնարհ աղամին Զեր  
Վերժինի Տէր Մկրտչաններ

1929 Մեկտ. 10

Los Angeles, Calif.



## Ամենապատիւ

Տ . Տ . Ե ղ ի շ է Ս . Ա ր ք ե պ ի ս կ ո պ ո ս Դ ո ւ ր ե ա ն

Ա ր ժ ա ն ը ն ա վ լ ի Պ ա տ ր ի ա ր ք Ս . Ա թ ո ո ւ յ ն

Ե ր ու ս ա ղ է մ ի

Թոյլ տուէք որ խոնարհաբար համարձակիմ մատուցանել սրտազին չնորհաւորութիւններս Զեր Քահանայութեան և Ռւսուցչութեան Յիմնամեայ Բարերաստիկ Յորելեանին առթիւ : Դոհութիւնն Բարձրելոյն, որ, կ'արժանացնէ Զեր Ամենապատութիւնը, ի միոիթարութիւն և յուրախութիւն մեզ, տեսնելու իր բեղմնաւոր գործունէութեան այս երջանիկ Յօրելեանը :

Սրբազն Հայր, Զեր բովանդակ կեանքը եղած է արդիւնաւոր աշխատութեանց ըրջան մը : Զեր Բարձր Սրբազնութիւնը ապրած է կեանքը Հոգեկորականի, կեանքը Ռւսուցչի, կեանքը Գրագետի . բոլորին մէջ ալ բեղուն ու արգասաւոր :

Որպէս Հոգեկորական, յօրէ անսի որ հույրեցաք Աստուծոյ Տաճարին և Հայ Բեմին ծառայութեան, Զեր բովանդակ կեանքին մէջ օրինակելի և պատկառելի ընծայեցուցիք զԶեզ, արտափայլելով միաժամանակ Զեր մաքուր սրտին բարութիւնն և խկապէս հայրապատիւ ընթացքը : Զեր հմտալից ու հմայիչ քարոզութիւնները, օծուն Ս. Գիրքին ոզիով, մեղրի նման կը հոսէին Զեր ըրթունքէն և կ'արձագանդէին եկեղեցւոյ սրբազն կամարներուն տակ, առաջնորդելով միշտ հաւասացեալները հիացումի և միոիթարութեան : Զեր գործունէութիւնը տակայն չէ սահմանափակուած միայն այս մարդին մէջ, այլ ընդարձակուած է այն, Արմաշի թէ երւսապէմի մէջ, պատրաստելով ու ընծայելով Հայ եկեղեցւոյ և Աղջին հոյլ մը մշակներ, որոնք ներշնչուած Զեր կրօնաբոյը ոգիով և համբարած Զեր հմտութենէն կարեւոր պաշարով, աւելցուցին փալլը մէր Ս. Եկեղեցւոյն :

Որպէս Ռւսուցիչ, լիսուն տարուան այս երկարաձիգ ըրջանի մէջ, կրթեցիք Հայ մանուկն ու պատանին մաքուր բարոյականով մը և կերտեցիք անսնց սիրան ու հոգին Բարւոյն, Գեղեցին ու ձշմարտին բարձր գաղափարականով և կազմեցիք անհատականութիւններ, որոնք աւելցուցին փառքը Հայ Մտաւրականութեան : Զեր պատրաստած կրօնաշունչ զասագիրքերը ոչ միայն երեկուան ու այսորուան, այլև գաղուան ու յաջորդական սերունդներուն առաջնորդն են ու պիտի ըլլան :

Որպէս Գրագէտ, Զեր լեզուազիսութիւնը ու բոլոր հմտութիւնը և Զեր լուսաւոր միտքին արտազրութիւնները ի սպաս զրիք հայ միտքին զարգացման : Հայ այրուքնեքին և Հայ լեզուին կազմութեան պարագաներուն ու օտար լեզուաց հետ ունիցած փոխյարարերութեանց մասին Զեր տեսութիւններն ապացոյց են Զեր խորազնին ու քննական ուսումնասիրութեանց : Հայ Պատմութեան ու բանասիրութեան նկատմամբ խաւարակուռ զարերու մէջ հոս հոն ցանցնուած հատուկսոր հատուած ու զրչազրեր լուսաբանեցիք քննագատի առողջ հայեցուածներով ու նոր ինորոյ կերտեցիք զայն : Արագէս Սրբազն զրականութեան ամէն ճիւղերուն մէջ յաջողեցաք ի վեր հսնել Զեր բազմակողմանի հըմտութիւնն ու տաղանդը : Զեր հրատարակած հովուական, քննարերգական, քերթողական ու գասական հատորները մէրմէկ հոյակապ կոթողները կը կազմեն Զեր փառքին և լուսաւոր փարոսը Զեր մեծ խմացականութեան :

Այս գեղեցիկ յատկութեանց վրայ կուգայ կ'աւելնայ նաև պարտաճանաչի գերազանց յատկութիւնն ալ, որով ընդունեցիք պաշտօններ, զորա Աղջի վատահեցաւ Զեղի ու Դուք սիրեցիք բոլորը ու սիրուեցաք բոլորէն, օգտակար ըլլալով ամենուն : Սրբազն Հայր, Դուք սիրուեցաք ոչ միայն մերիններէն, այլև օտարներէն իսկ, որոնք ականջաւուր էին Զեր բարի համբաւին և որոցմէ շատ շատեր ականատես եղան ու հմայուած խոնարհեցան Զեր բազմակողմանի — արդիւնք Տոհմիկ զասագիրակութեան — հմտութեան առջև :

Ս. Յակորեանց Առաքելական Աթոռը, որուն արժանաւոր գահակալն է Զեր Ամեն-

նապատառութիւնը, բովանդակ Հայութեան հետ խիստ ուրախ է ու խանգամառաւած, այս զեղեցիկ և յաւէտ անմռանալի Յորելեանին ասթիւ և մեր սրակը հիսուքանչ բացանչութիւններով կը գովարանեն Զեր փառքը, Զեր կարողութիւնը, Զեր մեծ համբաւը, սրոնք կը բարձրացնեն Հայը:

Սրապին կը մազթեմ, որ Աստուած բնդ երկոր սրանէ Զեր թանկազին կեանքը ի փառ Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, ի պարծան Ս. Յակոբեանց Աթուառն և ի մխիթարութիւն Քրիստոնի Հայ բանաւոր փաքրիկ Հօմին:

10 Հոկտ. 1929

Աղջ. Պատրիարքարան

ի Գումզարաւ

Խոնարհարար մատչելով ի համբար Ա. Աջոյդ

Մնամ որդիական ակնածանուք

Քարառուզար Փախանորդարանի

ՅՈՒԹԻՌ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ



թ. 7-10-929 Պօթուան

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպոս. Դուքեան

Մեղուաշան Պատրիարք Առ. Աթոռոյ

Ա. Երուսաղէմ

Ամեն. Հոգ. Ծնողդ իմ,

Երբ ուրոյ աշխարհու, որպէս աալ երկրի», լինելով «գործակից Աստուածոյ», առառածային կայծն որ ի Զեզ, ի մանուկ հասակէ լուսաւորեց, համեմեց, բացավառեց Զեզ հանդիպելու բախոն ունեցող բոլոր ոգիները, զաելով, բարձրացնելով, կազմելով զանոնք մարմաւոր հրեշտակներ, օժտեալ անձնութեանութեան չնորհով:

Ամեն. Հոգ. Ծնողդ իմ,

Բազմաշաբչար ազդի այն բոլոր անհատները Զեզ կը պարտին իրենց երջանկութեան բազէները թշուառութեան, հալած անաց, նոյն իսկ անձկութեանց մէջ, սրովհետեւ ներշնչեցիք իրենց գումարիներ, հաւատքը՝ թէ վերջապէս յաղթանակը բարին է:

Ամեն. Հոգ. Ծնողդ իմ.

Զկարողանալով այլազդ ցոյց տալ իր երախտապիտութիւնը, կը համբուրէ Զեր Ա. Աջոյ, ի չնորհաւորութիւն Զեր Յիսուսմեակին մազթելով կեանք երջանիկ Ամեն. Հօրդ:

Կոչեցեալն ի Քէն

Ներսէս (Քէնթ.) Ա.Ա.Քելեսն



Պարիս, 12 Հոկտ. 1929

«Ե. Դուքեան» Յորելինական Յանձնամոլովին,

ի Ս. Երուսաղէմ

Մեծ հիացումով ու խորին յարգանօք կուզամ չնորհաւորութիւններս ու միանգամայն բարեմազմութիւններս յայսնելու Սրբազն Յորելեարին՝ Ամենապատիւ Տէր Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեանին, զիանական և բանաստեղծ Պատրիարքին Սրբոյ Երաշաղիմայ Աթոռին, սիրելոյն համօրէն աղջմնւ:

Ի համբոյը մատչելով Սրբոյ Աջին և ապաւինելով օրհնութեան նորին Ամենապատուութեան,

Եմ խոնարհ ծառայ

Կ. ԲԱՐՁՐԱԳԵԱՆ

## 20Ն ՇՆՈՐՀԱԿՈՐԾՎԱՆ

Առ Հոգ . Տէրն իմ . Բարձրաշնորհ Տ . Եղիշէ Սրբազնն Արք . Եպիսկոպոս Դուռեւան  
Պատրիարքն Սրբոց Յակովիանց Աստքելական Աթոռությ Ազգիս , որ ՚ի Ա . Երուսալէմ .  
Ի լրումն Յիսոնամելիքն Քահանայական Ա . Օծման .

1879 յԱԿԻՒՑԱՐ — յԵՐՈՒՍԱԼԵՄ 1929

Բանհիւնեալ ի Փարիզ

ՄՐՑԱԳԻՒՆ ՄԵՇԱՐԱՆԾՐ

1

Եղիշէդ զու անդուզակա՞ն՝  
Կեկավարող քաջարթնակա՞ն՝  
Խակակա՞ն Հա՛յր՝ մատաղերամ  
Շըրջապատող սանուց հայեկան ,  
Եկն պարզե՞ւ յար փայլական .  
Սրբազն՝ պետ՝ Քոյդ գաւազան  
Բամող խըմքից ի լուսարփեան  
Բանակետղըն զարգացական ,  
Անխոնջ ջանիւք Զեր մարզական ,  
Ջրարթաձի՞ր շընորհական ,  
Առատարաշին ներշնչակական ,  
Նըմանասալիք նըլիրեցան .  
Ա . Եպիսկոպոս պետ պատուակա՞ն՝  
Մէնաշըռըն խոր հըմտական  
Քոյովք ձըրի՞ւք զարդարեցան ,  
Երջանկարեք հանդիսացան  
Պարմանիք մեր՝ որք խոհական  
Ի սպաս եղան վայելչական  
Արրոյ Տանըն մեր Հայկագնեան  
Կոչման բարձու արժանացան .  
Արոց վասըն՝ գէ՛տ Արբազան  
Պարտակա՞ն Քեզ Ազգն Արամեան .  
Աղւով երախտազիտական  
Սրբազնապանձ Հօրդ աննըմման :

Դուռեւան զարմէն համեստական՝

Ար փայլեցար զոհարակա՞ն՝  
Եիւսեալ պրատի ի խոնարհ տան ,  
Բէն ընծայեաց հօտին Հայկեան  
Երջանկարփառ ՚ի լուս օծման ,  
Արեգ պայծա՞ռ տէրունական ,  
Նորագլւա՞րի՛ Քոյդ Յորելեան՝  
Ցնծութեա՞ն տօն անարխրակա՞ն :

2

Վրտամշապուհ հին Քահանայն՝  
Ռամկականն այս բանհիւնական  
Անմեռ խանդիւ ի շարաման  
Մըրէ , յօդէ մասնակցական  
Շուրջ պատելոց յայս բերկրական  
Արզոյ դասուց տօնակցական  
Պարակցելով խընգակցական  
Որքան մարմնով եմ բացական  
Իւծիմ թէեւ արկածական ,  
Հա՛յրք եւ եղբա՛րք՝ սապընջական  
Ինձ եղերո՛ւք ընդունարան  
Մենացելոյս ի Փարիզեան  
Քաղաքամայրն ժըխորական :

3

Բարձրաշնորհ Սրբազնն Տէ՛ր ,

Զեմ մերձակայ առ Արբազնապանձ Տէրդ , զի մատեայց ի համբուրել զէնորհաբաշխ  
Ա . Աջն , որ եղաւ ի զլուխ իմ ի Ա . Եկեղեցւոյն Հայոց Փարիզի . սա՛կայն , մերձ եմ  
հոգւովս առ Զիկ : Ի ժամուն՝ յորում կատարի արդք հանդիսազրութիւն լրման Յիսոնա-  
մէկին քահանայական սրբալոյս օծման Զերոյ , մասնակից եմ ի բացուսո՛ ընդ գեր-  
յարգոյ հանգիստազիւսն , որք շուրջ պատեալ կան զԶեօք , ունիմ սփուել զհոգերուղիս  
մըրունջօն իմ յոտս Ամենակալին վասն Անդին Կենած Սրբազնն Տեսոնդ :

Ապա՛ ըստ վայելուչ կարգպատթեան Բարձր . Տ . Թորգոն Սրբազնն Արք . ին-կա-  
թողիկոսական Արքանընընտիր Պատուիրակին՝ համախումբ զնալ ունիմք ի սրբան յարդար-  
եալ , կատարել եւ աստ զպատշաճաւոր հանդէսն ի միծարանս Արբազնափալ Յորել-  
եարիդ , որում պարզելոցէ Տէր կեանս արեշտաս ի մեծ խնդութիւն Ազգիս և ի վա-  
յիլո Ա . Աթոռուց :

Մատչելով հոգւով ի խոնարհ ողջազոյրս ,

Հոգ . Հոգ . Հայոց Փարիզի և շըջակայիցն՝

ՎՐԱՄՇԱՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՒՀ ՔԻՊՈՐԵԱՆ

(ի Տանէն Արջուկենց) Սագալաւ=Նիկոպոլսեցի

## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Դուռիան

Արժանընտիր Պատրիարք Հայոց

Ս. Երևանապէմի.

## ՄԵծատաղանդ Սրբազնն Հայր.

Զեր Բարձր Սրբազնութեան քահանաւութեան Յիսուսմեայ բարեգէո Յորելեանին առթիւ, իրրե արուազն ի քահանայից, սկիզբէն ի վեր հիացող մը լինելով Զեր Ամենաւ պատուութեան մաքրակինցաղ, ախտար հոգեորականի կեամքին, կրթական, զրական, խմասաւութրական և եկեղեցական մարզերու մէջ ի յայտ բերած Զեր աննախլնթաց, բազմարզիւն գործունէութեան և ազգօգուտ ձեռնարկութեանց, այսօր՝ երկսուպէւս կը համարձակիմ հնորհաւորել զԶեր Բարձր Սրբազնութիւն:

Միենայն ատեն՝ սրտապին և չերաջերմ մազթանօք՝ խնդրելով ի բարերար Տեսանէ մերմէ կեանս ձիգս և բարերաստիկս պարզեել Զերումի Ամենապատուութեան, յամայր ամս, ի փառս Հայաստաննեաց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և ի պարձանս ազգին Հայոց: Ամենախորին ակնածանօք և համրուրիւ Ս. Աջոյի՝

Խ. Ծ. Վ.Ա.ԶՈՒ. ՔՀՅ. ԱԽՅԵԱՆ

1929 Հոկտեմբեր 12

Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցային Փարիզի

## Ամենապատիւ

Նիկոսիա, 12 Հոկտ. 1929

Տէր Տէր Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռիան

Պատրիարք Ամենայն Հայոց

## Ամենապատիւ Սրբազնն Հայր

Հայ ժողովուրզը այսօր կը տօնէ իր սիրական և անձնուեր Հայրիկին Տօնախմբութեան տարեգարձը և անհուն ցնծութեամբ կը հաշակէ իր Յորելեանը. Երանի անմայ որք առիթը ունին ներկայ գանուելու արդ Ս. Քաղաքին գերազանցօրէն բարձր Պատրիարքին ձօնուած հանդէսներու և վայելել իր բարձր հովանին:

Այս առթիւ, իմ անցօր գրչով չեմ կարող սրտիս անհուն զգացմանց մէկ դոյլն արտայատութիւնն իսկ ընել, և սակայն եթէ ոչ մօտից գէթ հեռուէն կը ձայնակցիմ, անթիւ ըրթներէն բխած աղօթից, աղաչելով առ բարին Աստուած որ տայ մէր Սրբազնն Հայրիկին թանկապին կենաց կատարեալ առողջութիւն և խաղաղասէր տարիներու երկար շարք մը:

Ուստի՝ Ամենապատիւ Սրբազնն Հայր, հաճեցէք ընդունիլ Զեր անարժան և երախտագէտ սանուհոյն սրտապին մաղթանքները:

Խոնարհաբար համրուրելով Զեր Ս. Աջը՝  
ՄԱՐԻ Յ. ՄԱՂԱՅԵԱՆ

## ՀԱՅ ԽԹՍՆԱԿ

## ՀԱՆԳԵՅ

ԿՐՈՅԱ-ՔԱՐԱՅՈՒԿԱՆ ԻՆ ԳՐԱԿԱՆ

Թիւ 757

Կ. Պոլիս 14 Հոկտեմբեր 1929

Բանկալթի, Բօնդարկդ թիւ 16

## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Սրբ. Արքեպ. Դուռիան

Արժանընտիր Պատրիարք Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց

յերւսապէմ

Շնորհազարդ Սրբազնն Հայր.

Թոյլ տուէք, Հայր Սրբազնն, Հայ. Ս. Եկեղեցւոյ խոնարհ պաշտօնէիս՝ հիացումի անկեղծ զգացումներս մատուցանել Զերդ Սրբազնութեան, իր քահանայութեան յիսնամեայ Յորելեանին առթիւ:

Զեր կէս դարու գործօն կեանքը, կեանք մը եղած է ինքնազարգացման և սերունդ-ներու հոգեւոր և խմացական զարգացման նույրուած, կեանք մը որ յարաձուն վերելք մըն է գէպի մտաւորական եւ բարոյական անմատչելի բարձրութիւնները, կեանք մը միսթիք խոկամներու և բանաստեղծական նորչնչումի, կեանք մը նույրումի՝ աշխարհիկ մտածումներէ, պայքարներէն վայելքներէ չատ վեր, կեանքը տիպար որբակը ոն եկեղեցականի, աստուածատոր չնորհքի եւ տաղանդի, եւ միւեւնոյն ատեն յարատեւ, ու զիտակից, ու բեղնաւոր աշխատանքի եւ խոր հմտութեան:

Ազգին ի ափիւսու աշխարհի ցրուած մտաւորականութիւնը այսօր միահամուռ կը ներբռողէ, կ'ուսումնասիրէ և ամենաբարձր գնահատութիւն մը կը բերէ այդ օրինակելի, այդ տիպար կեանքին, ներչնչարան մը բալոր անոնց որ գէպի աղնիւր, գէպի մաքուրը, գէպի հոգեւորական եւ մտաւորական խոէալլը ձկուում մը ունին, որ բարերար է ինքնին թէ իսկ հնարաւոր կ'ըլլայ հասնիլ խոէալ բարձրութեան, որուն վրայ կը գտնուի Զերդ Սըրբագնութիւն:

Այդ մտածումով ահա, Հայ կոսնալ բարերախտ կը զգայ ինքզինքը՝ Առաքելաջորհ Յորելեարիդ նույրելով իր Սեպտ-Հոկտ-ի միացեալ թիւը, իր շուրջը հաւաքած պատուական աշխատակիցներով, որոնք — և անոնց հետ ամսագրիս խմբագրութիւնը — իրենց հիացումի բաժինը կը բերեն հոգեւորական բարձր գէմքիդ բազմակողմանի տաղանդին և ձիրքիրուն:

Ասով, սրբակրօն հովուապետիդ յարգանքի սրտազին հարկ մը մատուցանելով հանդերձ, կը կարծինք ծառայած ըլլալ մասնաւորապէս մ'եր նոր սերունդին, անոր առջև պատկերացնելով տիպար գէմքը, որու ամբողջ կեանքը աղնուութիւն, սրբութիւն, բարձրացում եղած է միշտ մտքի վայելքներու խոէալ ոլորտներու մէջ, որու պէտք է ձգտի ինք ալ:

Ենորհաց Աստուածը զմայլելի ձիրքերով օժտած է Զեր Սըրբագնութիւնը, որ զիտացած է ուժաւորել զանոնք ու բազմապատկել:

Մեր խորունկ հիացումի անկենջ հարկը մատուցանելու առթիւ կը խնդրենք, Հայր Սըրբազան, որ հաճիք ընդունիլ զայն իբրեւ այրիին լուման՝ մտաւորականներու արժէշքաւոր արտայայտութեանց մէջտեղ, և այս առթիւ կը խնդրենք հայրական օրհնութիւնը Զերդ Ամենապատութեան, որուն ի համբոյր կը մատչիրք օծեալ Ա. Աջոյն:

Ամենախոնարհ ծառայ և որդի ԱՄՐՄԱՅՐ Ա. ՔՀՅ. Կէջիկինեան

Ամենապատիւ

Կ. Պոլիս, 14 Հոկտեմբեր 1929

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Երուսաղէմի

Ամենապատիւ Ս. Հայր,

«Նոր Դպրոց»ը հպարտութեամբ կը խորհի թէ ինքն ալ տեղ մը կը զրաւէ Զեր Ամենապատութեան յիշատակներուն մէջ, իբր հաստատութիւն մը որ վայելած է Անոր համակրութիւնը և քաջալերութիւնը:

Ու եթէ պարագաները թոյլատու ըլլալին, առաջիններէն պիտի ըլլար ան իր ակնածու գորովի և երախտագիտութեան առհաւատչեայն մատուցանելու Զեր Ամենապատութեան՝ Անոր բարերաստիկ Յորելեանին առթիւ:

Հաւաքական այդ սրտազի արտայայտութիւնը ընծայելու անկարող «Նոր Դպրոց»ը կը համարձակի խնդրել Զեր Ամենապատութեան որ բարեհաճի անոր Հիմնադրին անուամբ զրկուած գոյզն նուէրին մէջ տեսնել «Նոր Դպրոց»ի հիմնադրիներուն, ուսուցչական մարմնոյն և աշակերտութեան յարգալից երախտագիտութեան զրաւականը, ինչպէս նաև անոր հոգերուղիս մաղթանքը Զեր Ամենապատութեան արեւատութեան համար:

Մատչելով ի համբոյր Զերդ Ամենապատութեան Ա. Աջոյն,

Մնամ որդիական ամենախոնարհ մեծարանօք

Յ. Թ. Հինդեան

Կ. Պոլիս, 15 Հոկտեմբեր 1929

**Ամենապատիւ Տ. Եղիշէ Սրբազնն Արքեպիսկոպոս  
Առաքելաջնորհ Պատրիարք Ա. Երևանաղէմի**

**Ամենապատիւ Սրբազնն Հայր,**

Զեր Ամենապատութեան արգաւանդ և մաքուր գործունէութեան յորելեանը անգամ մը ևս և աւելի կենալանի կերպով կը պատկերոցնէ անուշ և պանծալի միշտականերով լիցուն հոգւոյս՝ բոլոր այն արժանիքները և առաքինութիւնները, որնց վրայ հաւանալու և որոնցմով տոգորուելու գեղեցիկ առիթները ունեցած եմ պատանեկութեանն մէջ՝ իրը Անոր խոնարհ մէկ սանը, և երիտասարդութեանն ընթացքին, իրը Անոր համակրութեան և բարեկամութեան արժանացած մէկը:

Ու եթէ ամէն հայ խորունկ պատկառանքով և անհուն սիրավ իր հոգւոյն խորը կը կրէ Զեր Ամենապատութեան չքնաղ անձը, որքան աւելի խորունկ է մեծարանքը և աւելի խանդակաթ է գորովք մէկու մը, որ այնքան մօտէն և այնքան երկար ատեն այդ պատուական Անձէն բղիսած ազնուացուցիչ և թովիչ ազգեցութեան տակ է գտնուած:

Եւ որքա՞ն աւելի հոգերուղիս՝ այն ջերմագլուխ մազթանքը, զոր Զեր Ամենապատութեան կը մատուցանէ իր խոնարհ որդին՝ Անոր բարեբասարիկ Յորելեանին առթիւ, մաղթանք երկար կեանքի՝ երջանկութեանը համար այն Ազգին, զոր Ան կը սիրէ այնքան անկեղծօրէն և զիտակցօրէն:

**Մատչելով ի համբոյք Զերդ Ամենապատութեան Ա. Աջոյն  
Որդիական ամենախոնարհ յարգանոք  
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐԱՌԵԱՆ**



«ՆՈՐ ԼՈՒՐ»

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Վարդիա, Մէտէսէ Փողոց. թիւ 23

**Ամենապատիւ**

S. S. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուռիան

Արժանընտիր Պատրիարք Ա. Յակոբեանց Աթոռույն

յԵրևանաղէմ

**Ամեն։ Ա. Հայ'յը,**

Իբր մին Հայ Մամուլի վաղեմի եւ համեստ աշխատաւորներէն եւ մօտէն զիտակ Պոլսոյ, Արմաշի և Երևանաղէմի մէջ Զեր Բարձր Սրբազնութեան ունեցած երկարամեայ արդիւնաւէտ ու ազգօգուտ գործունէութեան, Զեր Ամենապատութեան Ռւսուցչական և Քահանայական Յիշնամեայ արժանաւոր Յորելեանին առթիւ, որ տեղի պիտի ունենայ մեծահանդէս, ամսոյս 26-27 ին, Երևանաղէմի և հանուր աշխարհի բոլոր հայաշատ կեղծրոններու մէջ, խանդակառ մասնակցութեամբ բոլոր մերազնէից, կը խնդրեմ որ ներկայիւս բարեհաճիք ընդունիլ նաև իմ որդիական ջերմագլուխ չնորհաւորութիւններու և սրտապին խնդրակցութիւններս, իշարս հազարաւոր բարեմաղթուններու եկեղեցական թէ աշխարհական։

Մաղթելով ի խորոց սրտի որ բարձրեալն Աստուած կատարեալ առողջառթիւն և արեշատութիւն պարզեւէ Զեր Բարձր Սրբազնութեան եւ Հայ տառապեալ եւ տարաբախտ աղջը՝ Հայ. Առաք. Ա. Եկեղեցոյ սփոփարար ու կենարար հովանիթին ներքէ՝ զեռ երկար տարիներ վայելէ Զեր հայրական հոգածութիւնն ու հովանաւորութիւնը, եւ արժանանայ ցնծութեամբ տօնելու Զեր 75 ամեայ Յորելեանը։ Մատչելով ի համբոյք օծեալ Ա. Աջոյդ, մեամ միշտ Զեր Ամենապատութեան ամենախոնարհ և անձնուէր որդի՝

Լեհովն ՄիջմԱնեան (Լեհովնեկ)

Խմբագիր «Նոր Լուր» Օրաթերթի

Կ. Պոլիս, 15 Հոկտ. 1929

THE ARMENIAN EVANGELICAL CHURCH  
OF NEW YORK CITY  
152 East 34th Street

Հոկտեմբեր 2, 1929

A. A. BEDIKIAN. PASTOR

Գեր. Տ. Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան  
Ա. Յակոբայ Վանք  
Երուսաղէմ

Սրբազն Հայր.

Կը փափաքիմ Զեր Սրբազնութեան միջոցաւ հաղորդել Ամենապատիւ Պատրիարք Հօր, Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի, իմ ջերմագին չնորհաւորութիւններս և մազ-թանքներս իր քահանայածման լիսնամեայ տարհարձին առթիւ: Ես այ հեռուէն խո-նարհարար կը միացնեմ ձայնս համազգալին այն համերգին որ գրուատիքի, հիացման, ինչպէս նաև երախտազիտութեան խաղերավ կ'երգէ այս պահուս անոր անձնաւորու-թեան և ծառայութեան արժանեաց փառաբանութիւնը: Յիրաւի մեր ազգային պատմա-կան միակ հարասութիւնը կը կազմեն հոգեկան արժէքները, որոնք մարմացած եւ կո-ժողացած են այնպիսի կեանքերու մէջ որպիսին եղած է Դուրեան Պատրիարքի կեանքը ի միջի այլոց նմանեաց: Անոնք որ այս իրողութեան խորունկ զիստակցութիւնը ունին առաւել չափով կրնան գնահատել այսպէս ապրուած անհատական կեանքերու ճշմարիտ արժէքը: Ուեէ մեծ մարզու մը նկարագրին արժէքը, ըստ իս, աւելի նշանակելի է քան իր ծառայութեան արժէքը: Մարզիկ, իթէ մեծ են, միշտ աւելի մեծ են քան իրենց զործը: Դուրեան Պատրիարք մեր ազգի մեծերէն մէկն եղած է, և անոր համար կը դասուի մեր մեծերուն կարգը, որովհետեւ իր նկարագրը մեծ եղած է առաւել իսկ չա-փակ քան իր զործը: Մնաց որ իր ծառայութիւններն ալ, եկեղեցւոյ ամենաբարձր և ա-մենապատասխանատու զիրքերուն մէջ, ազգին յաւերժական երախտազիտութեան ար-ժանի կացուցած են զինքը: Իր իմացական չքնազ կարողութիւնները իր զիսուն ոսկե-պատկեր ու մեր սիրանաց և ներշնչմանց աղբերը եղած են:

Ազօթքս՝ այն բարի Աստուծոյն որ զինքը մեր ազգին պարզեցը է, այն է որ գեռ-չառ տարիներ չնորհէ իրեն որպէսպի ցաւատանչ Հայութիւնը սփոփանք զանէ իր սըր-տին մէջ, որ պարծանքի առարկայ մը ունենայ յանձին անոր իր ներկայ հոգեկան չքա-ւորութեանը մէջ, որ վերջապէս աւելի զիւրաւ ճանչնայ և պաշտէ Յիսուս-Քրիստոսը, որուն տիպար աշակերտն ու ծառան է ինք:

Անկեղծ յարգանօք և ողջունիւ  
Զերդ ծառայակից Տեառն  
Ա. Ա. Պետրիկեսն



Գերապատիւ

Մերուպ Եպիսկոպոս Նշանեան  
Առենապետ Դուրեան Յորել. Կեղը. Յանձնաժողովի  
Երուսաղէմ

Գերապատիւ Ա. Հայր,

Պատիւ ունեցայ ստանալու Զեր 24 Յունիս թուակիր նամակը եւ կը ներէք որ Բա-րիգէն բացակայութեանն պատճառաւ պատասխան յապաղեցաւ:

Թոյլ տուէք նախ եւ առաջ Զեկի յայտնել թէ, սկիզբէն ի վեր խանդավառ հիացող մը եղած եմ Ամէն. Եղիշէ Արքեպիսկոպ. Դուրեանի եկեղեցական եւ զրական, ինչպէս և

քարոզական եւ ուսուցչական երկարամեայ բեղմաւոր գործունէութեան, որ այսքան գեղեցիկ արգիւնքներ առւած է եւ մեր ազգին համար եղած է օրհնութեան մշտահոս աղբեր մը: Հետեւաբար ամենամեծ համակրանքով կը մասնակցիմ իր յիսնամեայ Յուրելեանին եւ ամենաջերմ մաղթանքներ կ'ընեմ իր երկարակեցութեան համար:

Միեւնոյն առթիւ, իր իմ անկեղծ հայցմունքիս անհշտն մէկ արտայայտութիւնը, ներփակ Զեղի կ'ուզզեմ հազար ֆրանքի գումար մը, խնդրելով ընդունիլ զայն յօպուս Զեր օգտակար ձեռնարկին, որուն կը մաղթեմ վակասար յաջողութիւն:

Ամենախորին յարգանոք

Ե. Ա. Ա. Թ. Օ. Շ.

8 Հոկտեմբեր 1929  
11 Սքուար Ալպոնի, Բարիզ

### Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Գուրիան

Պատրիարք Հայոց Ա. Երևանապէմի

Շնորհաւորութեան Հրապարակային պարտականութիւնն կատարելէ յետոյ Նոր Լուրի միջոցաւ, կուզամ անհատապէս ալ շնորհաւորել Զեր Բարձր Սրբազնութիւնը, քահանական Յիմսամեակին առթիւ:

Այս թուականը հաճելի յիշատակ մը կ'արթնցնէ մտքիս մէջ: 50 տարի առաջ, Ա. Կարապետի եկեղեցին բերաւ զիս, Զեր ընտանեկան պարագաներէն եւզինէ անուն օրիորդը, երբ Զեր Բարձր Սրբազնութիւնը, իր ձեռնադրութեան քառասունքը կը բարձրէր նոյն եկեղեցւոյ մէջ: Տակաւին վեցամեայ մանուկ՝ լսեցի Զեր առաջին ընթերցումը Աւետարանին, որուն արժանաւոր աշակերտն ու քարոզիչը եղաք յետոյ:

Ամէն անգամ Ա. Կարապետի այդ պահարանը մտնելու առթիւ, կը յիշեմ մանկութեան այդ օրը՝ որուն վրայէն 50 տարիներ, փորձութիւններով, տառապանքներով լի երկար չըջան մը անցաւ, բայց Դուք Զեր աննկան հաւատքով և օրինակելի կեանքով, ծառայացիք Ա. Եկեղեցւոյ և արժանաւորապէս բարձրացաք յաթոռ առաքելական:

Ազգին այս բազմաստանց վիճակին մէջ, կը մաղթեմ երկար և առողջ կեանք Զեր Բարձր Սրբազնութեան յօպուտ երուսաղէմի Աթոռին, որուն պետք կը գտնուիք:

Ազգը իրաւամբ կ'ակնկալէ տակաւին մեծ օգտակարութիւններ, համաձայն Ա. Աւետարանի, ուր ըսուած է, «Արում շատ տուաւ շատ խնդրեսցի ի նմանէ»:

Արքիական խորին մէծարանոք և համբուրիւ Ա. Աջոյդ

15 Հոկտ. 1929

Ա. ՄՈՒՊԱՀԵՍԱԾԵՑՆ

Բարձրաշնորհ Տ. Եղիշէ Սրբազն Արքեպիսկոպոս

Արժանընափեր Գահակալ Սրբց. Յակոբեանց Առաքել. Աթոռոյն

ի Ա. Երևանապէմ

Պատուական Ա. Հոգեծնող իմ,

Քահանայական Յիմսամեեկի մեծ տօներնիդ՝ համայն Ազգինն է, մանաւանդ բոլոր հոգեծին որդւոց խինդն ու ցինծն է:

Վասնզի պատուականաց պատուական Սրբազն ծնող մեր՝ խկապէս և շատ իրաւամբ արժանի էիք յորելինական այս հանդիսապրաւթեանց:

Խնորհաբար և սրտապին կը մաղթեմք Սրբազնապանձ ծնողիզ մերում արեշատ և փառաւոր կեանք, որ Ազգն ընդերկար վայելէ Զերդ Բարձրաշնորհ Սրբազնութիւնն ի խնամն Առաքելական Աթոռութ և ի բարախութիւն որդիացելոցու: Շնորհաբաշխ Ա. Աջոյդ Հայրական մատչելով ի համբոյր որդիական ալիսածալից սիրով,

Եմ Հոգ. որդի և խնամք ծառայ

ԳԱՐԵԳԻՆ ՔԱՅ. ՏԵՎԱԿԵԱՆ

15 Հոկտեմբեր 1929

Փարիզ

Պաշտօնեայ Ա. Եկեղեցւոյն Հայոց Փարիզի

27 RUE DES SABLONS.

PARIS. XVI<sup>e</sup>

**Ամենապատիւ**

S. S. Եղիշէ Սրբազն Արքեպիսկոպոս Դուռիան

Պատրիարք Ա. Աթոռոյն Երուսաղէմալ

Սրբազն Հայր,

Երբ ճարտար գրիչներ՝ աշխարհիս չորս ծագերէն, Զեր Ամենապատութեան Քահանայական Յիսոնամեակին համար սքանչելի տողեր կը չարագրեն, և Զեր գրական, հըմասկան ու բեմական անվիճելի կարողութեան գովքը կը հիւսեն, ես՝ բժիշկի տկար զրբչովս ի՞նչպէս կընամ արտայայտել իմ զգացումներս Զեր այս մեծ Տօնին առթիւ:

Զեր Սրբազնութիւնը զոր պատիւ ունիմ ճանչնալու բաւական տարիներէ ի վեր և զոր մօտէն ալ զնահատելու բարեպատեհութիւնը ունեցած եմ Բարիզի մէջ և այլուր, անկեզծօրէն կ'ըսեմ թէ Հայ Եկեղեցին մեծ փառքն է:

Դուք, Սրբազն Հայր, Զեր կէս գարու Եկեղեցական կեանքով յոյժ բեղմաւոր եղաք Ազգին, Զեր զբչով, լեզուով և դասախոսութիւններով, ասոր վկայ՝ Զեր հասուցած աշակերտները, որոնք այսօր թէ Զեզ և թէ մեզ մեծ պատիւ են:

Այս ասթիւ իմ ամենաջերմ խնդակցութիւններս ու չնորհաւորութիւններս յայտնելով Զեր Սրբազնութեան, կը սիրեմ յուսալ թէ զեռ շատ երկար տարիներ ժիր զործունէութեամբ Ո. Աթոռին և Ազգին մեծ արդիւնքներ պիտի ընծայէ Ամենապատիւ Եղիշէ Սրբազն Արքեպիսկոպոս Դուռիան,

Որու Ա. Աջոյն մատչելով ի համբոյր

Բարիզ, 17 Հոկտեմբեր 1929

Մնամ խոնարհաբար  
(Տիկ.) ԱԼԻԱԶՎԵՐՏԻ ՈՐԴԻ



**Ամենապատիւ** S. Եղիշէ Արքեպոս Դուռիան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

**Ամենապատիւ** Ա. Հայր,

Զեր Քահանայութեան Յիսոնամեայ Յորելեանի տօնին առթիւ, կուգամ միացնել իմ հիացման ու սիրոյ զգացումներս մեծարանքի միահաղոյն արտայարութեանց, որ Զեր Ամենապատութիւնը կը պաշարեն այս պահուս: Հայ ազգը, յայտնելով Զեզի իր երախտագիտութիւնը Զեր մտաւոր ու հանրային բազմավաստակ գործունէութեան համար, Զեր անձին մէջ կը պատուէ ու կը պահացնէ իր լաւագոյն աւանդութիւններն ու իր սրտի և մտքի բարձրագոյն առաքինութիւնները: Կը մաղթեմ Զեր Ամենապատութեան երկար կեանք, որպէսզի Զեր լուսաւոր գէմքը զեռ տարիներով չարունակէ մեր աղջային հոգեկան ու մտաւոր հորիզոնին վերև իբր քաղցր ու սրտապնդիչ ու մաքուր ջան մը ճառագայթել:

Ամենասիրալիր յարգանքներով

Ա. 20ՊԱՆԵԱՆ

Փարիզ, 17 Հոկտ. 1929



## Ամենապատիւ

Տ. Եղիչէ Արքազան Արքեպիսկոպոս Դուռիան

Հայոցինամ Պատրիարք Հայոց  
Երուսաղէմ

## Արքազան Հայոց,

Զեր Ամենապատութեան Յիսոնամեաց Յորելեանին առթիւ, թող տուէք Զեր ամինամարհ ծառացին իր խնդակցութիւնն ու չնորհաւորութիւնն խնճարհարար զնել յոս Զեր գահոցից և իր սրազգին մաղթանքները ուղղել առ Աստուած, Ար երկար ու անփորձ պահէ Զեր թանկազին կեանքը և արժանի ընէ Ազգը՝ տօնելու նաև Զեր Բարձր Արքազան եօթանասուն և հինգամեալը:

Մատչելով ի համբոց Ս. Աջոյ Զեր Ամենապատութեան

Կը մամ որդիւական խորին պատկառանոք

17 Հոկտ. 1929

Ամենախոնարհ ծառաց

Նիկոսիա

Լեհաստ Մ. Զիլինկիինըն



## ԹՐԹՈՎԱՆՔ ԵՐԱԽԾԱԳԻՑ ՄՐՏԻ

Աւղանաւած

Մեծ Ռւսուցին և Փառաշուք Յորելեարին

Առաքելաշնորհ Տ. Տ. Եղիչէ Ս. Արքեպիսկոպ Դուռիան

Պատրիարքի Հայոց Ս. Երուսաղէմի

## Երջանիկ Հայոց,

Պարիկ մը ցոյց տուաւ Քեզ իմաստութեան աղբիւրը, երբ դուն, չնորհալի մանուկ, չառ կանուխ ման կուզալիք, չուարուն և ապշահար, Խոսկիւասրի բարձունքին վրայ, լքած սղաւոր անալիք, ուր բանաստեղծ եղբայր մը իր վերջին չունչին և օրհասականի վերջին հոնդիւնին հետ քեզ աւանդեց իր քնարը ըսելով, ա'ռ այս, Միհրանիկ, ահա՛ իմ ժառանգութիւնս, ես անով Մի՛ը երգեցի, գուն երգէ Ասուած: Եւ զուն տարիներով գրկած արդ քնարը, սրբազան աւանդ և քաջցր յիշատակ եղբայրական, սրբութիւնը տաւզեցիր, իմաստութեան աղբիւրէն կշատապինդ յագեցած՝ ուրիշներու ալ պատակը անցուցիր. օրհնեալ ըլլաս:

Սիրելի ուսուցիչս, կը հիմանամ քու վայելած անհուն սիրոյ և իրաւունք կուտամ համակիրներու հակայ թափօրին խանդաղատանքին. որովհետեւ գուն մարզեցիր բարձրագոյն աթուներու արժանաւոր սանեկը, գուն ընարեցիր այն ճանապարհը, որ մեր տահմիկ մատենալրութեան սուրբերուն ոտքի հետքերը կը կրեն, արդ ճանապարհը գավճիներով և ծաղիկներով ծածկուած կ'առաջնորդէ գետի անմահութիւն: Երանի՛ այն ազգին, որ կը ծնի մեծ մարգեր, այն չի մեռնիք և կ'ապրի անսահման ժամանակներ, հեղնելով աշխարհաւեր փոթորիկը եւ վերահաս ալեանեկը:

Դարեր առաջ Սափառ թագուհին, Սողոմոնի իմաստութեան հռչակով խելայել, ծանրազին նուէլներով յաց ելաւ մեծ թագաւորին. ներկայիս ալ Հայութիան ողին իր բազմահագար զաւակներով կուզայ այցելու նուիրական քաղաքին եւ կը չըջապատէ պատրիարքական գահուքդդ ու կը գոչէ. ո'վ մեծդ, քու իմաստութեանդ համբաւը սթափեցուց զիս հոգիս ալեկոծով երազներէ և զուարթացուց զիս: Հայրիկ ես զուրկ եմ Սափառի մը ճոխ գանձերէն, միայն չերժ մաղթանք մը ունիմ քեզ նուեկը և կ'ազաղակեմ, չառ ապրիս:

Այս պահանան Արքոց Յակոբեանց մայրավանքին չքեզ գահիմին մէջ և այլուր ուժգնապէս զուացող լեզուներ կը բացուին զրուատալից բացազանչութիւններով Քեզ նուիրուած. ամէնէն կարող բեմբասացներ պիտի կրնա՞ն գտնել բառ և իմաստ՝ խորաչափելու խմաստութիւնդ. ես կը տարակուամիմ և կ'ըսեմ թէ աննք ի զու՞ր պիտի փորձն չունչ տալ

իրենց զգացումներուն, բայց դուն անոյց քմծիծաղով մը և ազնուական ներսուամտութեամբ ովհափ ընդունիս ամենուն խօսքերը, դուն՝ որուն զաղանիք չեն երեք պերճախօսական սուացքներ և թախներ զեղեցիկ գալութեանց: Այդ ամենուն հետ ուրեմն հաճէ՛ ընդունիլ քու նախկին մէկ աշակերտով այս թսթավանքը իրբե մրգուզ միջամի մը բազիցն, թէեւ ևս այժմ զիսութեան ասոււծայն երկրագուս բժիշներէ անհրաման՝ որոնք չեն ներեր ինձ անմեղ ապաւորութիւններս թղթին յանձնել և կը յափշտակեն զրիչը ձեռքէս, բայց ևս կը ազերսեմ անոնց, ո՞հ, թոյլ տուեք ինձ պահիկ մը միամի, որ ապրիմ խմ անուշ մտածումներուն հետ, որպէսիս եթէ լուս, աւելի պիտի զայրադնին ցաւերս, գուցէ չաւրաշուք հիւանդութիւնը իր մազիները ցցէ ինձ դէմ, ինայիցէք ինձ, իմ եսանդիս մէջ կը յաւակնիմ զայրիկան մը ըլլալ պատմութեան մէջ հոչակաւած այս աւետաւոր բաներն, որ մարտկուած հայրենասիրութիւնէ, մէկ շունչով 50 մզոն տեղ պացաւ անցաւ և ուր ուրեմն չնչառապատ ինկաւ յալրող ենի գառելով ու այնպէս աւետաց Մարաթոնի յազթութիւնը: Ես ալ կ'արհամարհեմ պահ մը մահարիթ սարսափը և ներքին ձայնիս անսալով և ահա ի ծունը խոնարհած, ո՞հ Հայր, փառքից մեծութեան պատուանդանին առջեւ կը կրկնեմ.

Մեծ է յազթանակդ, Հայր, Քեզ փառք յաւէտ,

Զերմիկ համբոյըներ շաւզաց լուսահետ,

Վեհ իմաստութիւն լոկ սիրեցիր դուն,

Հայ զրականութեան մշակ եռանդուն:

Ամենախորին մեծաբանոք առ Թեղ

Աննարհ աշակերտոց

Սիմոն Գյուլ Ամենածեսն

17 Հոկտ. 1929

Դուքինութուն

Ամենապատիւ:

Տ. Եղիշէ Արք. Արքեպոս. Դուքիան

Պատրիարք Ս. Աթոռայն Երուսաղիմայ

յերսուալէմ

Սրբազն Հայր,

Զեր Բարձր Սրբազնութեան Քահանայութեան յիմանմեայ յորելեանին առթիւ, Ս. Աթոռից մէջ անզի աւնենալիք հանդիսութեանց մասնակցելու, և անձամբ Զեր Բարձր Սրբազնութիւնը, Հայ եկեղեցականութեան և Ռւսուցչութեան Հոյակապ Սլունը, չորհաւորելու երանութիւնէն դրկուիլու արդարեւ ախրութեամբ կը համակէ զիս: Կամքէ անհամապատահաւ պատճաններ չորս հոգերաւն յորուեցին Հայիկ որդիները, թալանուած, վիրաւոր, առօրեայ և անմիջական հոգերով ծանրաբենուած, օտար և անձանոթ երկինքներու տակ ապրիւ, ու իրենց ցեղը անվիտը պահել ու ապրեցնելու հարկին մէջ:

Առանդական Հայութեան միմիթարսութիւն մըն է Ս. Յակոբեանց բարձունքէն ձաւապայթով լուսաւորութեան ջանը, Մեծ-Արքապատեան ներկայութեամբը առկայժուած, անոր չունչովը հրահրուած, անոր հոգեովը վառուած: Սլոնի աղջամին զարաւոր կոթուզը, իրմով, և իր ձեռնոտուններով կոչուած է լինելու ներկայի Հայութեան ազգային-կրօնական կեղրանածիկ ոյժը:

Իրբե մին, իր հնազոյն աշակերտներէն, որուն միտքը և հոգին իր առաջին լոյսը և հուրը ընդունած է երեսունէ աւելի տարիներ առաջ անզուցական Ռւսուցչիդ մտքէն բախող ու հոգիէն ցոլացող ճաճանչներէն, և որոնցմով տպաւորուած ու կերտուած է իր էութիւնը, այսօր խորին յուզումով մը կուզամ մատուցանելու հիացիկ և երախտակէտ յարգանքներս Ամենապատիւ Յորելեարից, սրտաբուղիս մազթանքներով տակաւին երկար տարիներ զինքը տեսնելու ի գլուխ Ս. Յակովեանց մէջ իրմով ոկած վերանորոգման գործին:

Մատչելով ի համբոյը Օծեալ Ս. Աջոյդ յարգանոք

Աննարհ Որդիկ

Յ. Յ. Մելիքջնաչ

18 Հոկտ. 1929, Կ. Պոլիս

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայոց,

Անհուն ուրախութեամբ կը փութամ խոնարհաբար իմ սրտագին չնորհաւորութիւնն ներս մասուցանել Զեր Ամենապատութեան յիսնամեայ յորելեանին առթիւ:

Երջանիկ կ'զգամ ինքվինքս որ այս ազգացին ցնծատօնին առթիւ ևս ալ բախտը կ'ունինամ մասնակցելու Զեր թանկագին անձին համար բիւրաւոր բերաններէ բարձրացած եռանդապին մազթանքներուն և սրտագին յարգանքի սրտայայտութեանց: Սրդարե, որքան նուիրական է Հայ. Ս. Եկեղեցին, նոյնքան նուիրական է նաև Զեր Արքազան Անձը, որ Հայաստանեաց Ս. Եկեղեցոյ մշտնջենական փառքը կազմող մեր մեծանուն հայրերուն և հայրապետներուն արժմանաւոր յաջորդը եղած էք, և՝ ճշմարիտ Քամադր Աստուծոյ կենդանուոյ, ուր Աստուծած միայն տեղ ունի և Ան միայն կը պաշտօնի:

Որքան պատուական են հայ լեզուն և հայ մատենազրութիւնը, նոյնքան պաշտօնի արժանի եղած էք և Դուք, որ այդ ազգային թանկագին նուիրականութեանց կենդանի և հոյակապ գանձարանն էք, որուն վրայ իրաւամի կը գուրզուրան հայ մտաւորականութիւնը և հայ ազգը համօրէն: Երկնաւոր մեծ վարդապետը, որ այնքան նախանձակմնիքը է յաւիտենական ճշմարտութեանց ուսուցչի պատիւը չնորհելու մէջ, և հարամայական շեշտով պատուէր կուտայ «Մի՛ զոք կոչէք վարդապետ», զի մի է ուսուցիչ ձերը, շատերուն մէջէն Զեր չնորհազարդ անձը բնարած է արժանաւորապէս կատարելու «յաւատուծոյ պատուեալ» այդ սրբազն պաշտօնը, որ արքարե միշտ փառաւորուեցաւ և այսօր ալ հանդիսաւորապէս կը փառաւորուի Զեր Ամենապատութեան՝ մեծ ուսուցառետիք Առաքելաշնորհ և Վեհաշուք անձովք:

Կը մազթեմ ի Տեսանէ որ Երուսաղէմի Առաքելուկան Ս. Աթոռը և Պատուարժան Միարանութիւնը գեռ երկար տարիներ բախտը ունենան վայելելու Զեր Բարձր Արքազնութեան քաղցր և հոգեպարար հովանաւորութիւնն, և Ազգը արժանի ըլլայ տօնելու նաև Զեր արամանդեայ յորելեանը:

Մատչիմ ի համբոյր Ս. Աջոյ Զերդ Ամենապատուութեան  
Արդիական ամենափորին ակնածանօք  
Ս. Յ. ԿՈՂԻՑԻԿԵԱՅՆ

## Ամենապտաիւ

Եղիշէ Արքազան Արքեպիսկոպոս Դուրեհան

Պատրիարք Հայոց.

Երուսաղէմ

Պաշտելի Արքազան Հայոց,

Թույլ տուէք ինձ անխառն զգացումներու և ջերմագին մազթանքներու հիւսք մ'աւ ելցնել այն անթառամ զափնիին, որ կը սրամիէ Զեր Ամենապատիւ Սրբազնութեան փառազանձ ճակարը, հիւսք մը որ միայն պիտի թառամի կեանքիս հետ:

Մենք պիտի տօնենք, մեր սրամին այնքան մօտ, համազգային մեծ տօնք, հոգ չէ թէ մարդկային չար նախանձը մեզ զրից նախաձեննելու զերազանցօրէն մեծ ու եղական պատիւէն, որ մեզ չնորհուած էր Ս. Աթոռոյդ միարան Բարդէն Սրբազնէ: Պիտի բոլորուինք Զեր խնկելի յիշատակ՝ այն նկարին շուրջ որ Զերդ Ամենապատիւ Սրբազնութիւնը ինձ նուիրելու չնորհն ըրաւ, երեւակայութեան աչքերով պիտի տեսնենք Զեր պաշտելի Անձը շրջապատուած աւելի բախտաւորներէ: Պիտի հայցենք երկնից, ինչպէս միշտ, պարզեւել Զեր անդին կենաց տարիներ երկար և երջանիկ խնայելու համար այն գաւր զոր պանձացուցիք և արժանի բնելու այն ազգը, որու փառքն ու պարձանքն եղաք, աւելի փառաշեղօրէն տօնելու Զեր օրհնաներ կեանքի Հարիւրամեակրի:

Մազթանքներու միացնելով սրդիական ակնածանօք համբայներ Սրբազն Աջոյդ փոքրիկ ընտանիքիս անդամներէն ևս, միամ Հայրական թանկագին օրհնութեանցդ կարօտող

Ֆիլատիլֆիա, 17 Հոկտ. 1929

Խնարհ աշակերտուհին  
ՀԱԻԿԱՄԱՐԴ Գ. ԳԼՈՒԺԵԱՅՆ

## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս

Պատրիարք Ա. Երուսաղէմի

Խոնարհաբար կուզամ սրախ անհուն բերկութիւնը չնորհաւորել զԶեր Ամենապատւաթիւն Զեր անուան տօնախմբութեան առթիւ և արժանապէս փառաբանել Զեր Ամենապատուաթեան գործունելութեան Յիսուսիւայ Յօրելեանը:

Երկար և առողջաւէտ կեանք մը մաղթելով, մնամ խորին տկնած անօք

Համբուրիւ Ա. Աջոյդ

18 Հոկտ. 1929

յիւսկիւսար,

ի. Ծ.

ՀՄ ԱՅԵՍԿ ՔՀԵՅ. ԷՐԱԿՐՈՋԵԱՆ



## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արք. Դուքեան

Պատրիարք Երուսաղէմի Աթոռին

Երուսաղէմ

Բանաստեղծին՝ ինչպէս Շնորհալի, Հովիւին՝ ինչպէս Աչտարակեցի, Մատենազիրին՝ ինչպէս Խորենացի, — Հայ Գոլութեան Տաճարին ջահ՝ ժամանակակից մեծ միտքին Յուրելեանին տօնումով՝ Ամենապատուաթեանդ անձին համար կատարուած ազգային պահածացման ցոյցին իր խնդակցական խոնարհ այլ խանդավառ ձայնը և ծափողջոյնը կը միւացնէ, սրգիւական յարգանքով,

Ե. ԱՐՄԷԿՆ

Կարսան, 18 Հոկտ. 1929



## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արք. Արք-Եպիսկոպոս Դուքեան

Առաքելաշնորհ Պատրիարք Ա. Երուսաղէմի

## Ամենապատիւ Սրբազան Հայր,

Ներկայիս երր ամբողջ ազգը Զեր Բարձր Սրբազնութեան Քահանայական Յիսուսիւաթեանը Յորելեանը կը տօնէ խանդավառութեամբ, նուաստ ծառաներս չենք կրնար գաւառին խորը միտրապէլ անտարբեր զիասող երեսովով, մենք ալ մեր պաշտանքին ու հիացումին տուքքը կ'ուզենք վճարել Ամենաբարձր Յօրելեարիդ։ Ուստի միենոյն խանդավառութեամբ կուզանք և մենք ներկայ տողերով մեր խոնարհ մասնակցութիւնը բերել Զեր Յորելինական համապայման տօնին, և կը խնդրենք ընդունիլ մեր սրտազին չնորհաւորութիւնները ու խնդակցութիւնները։

Մատէլով ի Համբուր Զեր Ա. Աջոյն

Մնամք ամենախորին մեծարանօք

18 Հոկտ. 1929

Ազգային Առաջն.

Կեսարիա

ՄՄԲԱՏ ՎՐԴ. ՍՍԼԵԱՆ ՍԵՐՈՎԲԻ. ՔՀԵՅ. ՊՈՒՐՄԱՆԵԱՆ

Տեօրիկ Ազգ. Արք. Կեսարիոյ Առջե. Փոխ. Կեսարիոյ և շրջ.



Հայելոց, 18 Հոկտեմբեր 1929

ՏՐՈ. Բ. Մհեման

Առ.

Ամենապատիւ Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռը հանդեցէք,

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

յԵրուսաղէմ

Ամենապատիւ Ա. Հայր,

Զեր Քահանայութեան Յիսոնամեայ Յորելիսանին առթիւ հաճեցէք, կը խնդրեմ, իրու գոյզն նուէր մ'ընդունիլ «Մարտաշի երեք ամիսները» անուն երկու, որ կը խօսի Մարտաչ Փանասական գրաւման միջոցին աեղի ունեցող գէպքերու վրայ. իրրե ականատես անոնց ձշմարտութեան կը վկայեմ:

Այս գործը գրուած է բաւն խոկ գէպքի ատեն և կը պարունակէ կէտեր, որոնք կը նաև հետաքրքրել ապարայ պատմաբանն և Քէմալական կառավարութեան սկզբնական ժագման ու Փանասական Կիլիկիան քաղաքականութեան ինչ ինչ մասերը լուսաբանել:

Կը խնդրեմ որ, հայտապ գործերու կողքին «Դուռը ան Մատենագարանի» համեստ մէկ խորշին մէջ զետեղուելու պատիւին արժանի դասուի ան:

Որուն համար իր չնորհակալութիւններն ու այս առթիւ իր խօնարհ ու ջերմ բարեմաղթութիւնները կը յարանէ և երկար տարիներ կը մաղթէ հայ եկեղեցոյ մի զաւակը:

ՏՐՈ. Բ. ՄԵԽԵՍ

Առ Ամենապատիւ Պատրիարք

Հայոց Երուսաղէմի

Տ. Եղիշէ Արքաղան Արքեպիսկոպոս

Ամենապատիւ Տէ՛ր.

Աւզեցի, որ տեսողութեանս գժուարութեանը յողթելով այս տողերը ինքո անձամբ գրեմ:

Այսօր երբ Հայ ժողովուրդը ազնիւ ու ինքնարուզիս մզումով տօնում է Զերդ Բարձր Սրբազնութեան յոզնաջան, հայրենաչունչ ու լուսացող գործունէութեան փառապանծ յիսոնամեակը, թույլ տէք ինձ ևս, ո՞վ Հայրդ Հասարակաց, իմ որդիական խօնարհ չնորհաւորանքները բերել Զեր երախտազիտութեան խորին զգացումով:

Բաղցը է ինձ ի միտ ածել, որ Զեր անքիծ, առաքինի եկանքն ու գործը սքանչելի պատկերն է մեր մեծ նախահարց թողած նախարարական աւանդութեանց, որոնց զգաստ ու արթուն պահապանն եղաք ահա ամրողջ կէս դար:

Ու մեր Հայրենիքի այս ամէնէն չարաբաստիկ ու գժխեմ օրերին, երբ աշխարհը այնպէս անգութե եղաւ, երբ ազգերի խորհը միագնեց և իրաւունքի, ազատութեան խաչակիր մեր ազնիւ յեղը վշտարեկ ու նկուն, արիւն - արցունք լացեց մեր անազորոյն թշնամեաց խժդուժ վայրագութեանց երեսից, այո՛, այս խոկ նենդ ու տմարդի օրերին գուք արդարութեան, իմաստութեան ու լոյսի սէրը տարփազեցիք Հայոց աշխարհում որպէս յաւիտնական խոչալը տառապող ու պայքարով Հայ աղզին:

Սահակ և Մեսրոպի գառած կանթեղի գուք անփոնջ ու հաւատարիմ Լուսաբար, Զեր առաքինի ու պայծառ կեանքի այս վամ օրինակով անձեռագործ լաւագոյն յուշարձանը կանգնեցիք Զեր սիրած ժողովրդի սրուած:

Փա՛ռք Զեր և երկար օրերի:

Զերդ Ամենապատիւ Արքազնութեան խօնարհ որդի՝

19 Հոկտեմբեր 1929

Ա. Ա. ՀԱՅՐՈՒԵՍ

Պարիզ

Ց. Գ.— Թողութիւն եմ Հայցում այս անպաճոյն ու տկար գրութեանս համար. որեէ գրական աշխատանք տակաւին ինձ արգիլուած է. տեսողութիւնս շատ է թուլացած:

Եղին

Բերդին, 20 Հոկտ. 1929

Դերապատիւ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռեան  
Պատրիարք Հայոց Երաւանցէմի.

## Արքապան Հայր

Զեր զրական, մանկավարժական և հոգեւորական գործունէութեան յորելեանի առաջիւ թուլ առաք ինձ ևս մասուցելու Զեղ իմ սրապին չնորհաւորութիւնները և անկեզծ շարհմաղթութիւնները: Ցանկամ Զեղ քաջառողջ, երկար տարիներ, այսուհետեւ ևս Զեր ջերմ խօսքով, զրաւոր եւ բանաւոր, ցողելու հայրենի զրականութեան եւ բովանդակ մշակոյթի անդաստանը:

Մնամ խորին յարգանքներով,  
Ա. Ա. Ա. Ե. Դ. Ե. Ա. Ե.

Ուսուցիչ Բերդինի արեւելեան յեղութերի պարոցի:

Աղեքսանդրիա, 21 Հոկտ., 1929

Դուռեան Յորելեանի Պատ. Յանձնաժողովին

Սոյն հանդիսութեան առթիւ՝ գերազանցապէս ճշմարիտ կը զտոնայ այն խօսքը թէ՝ մէկը կայ որ հազար կ'արժէ. և այս մանաւանդ մեր մէջ և այնպիսի ժամանակ մը, երբ մեկնողներու թողած պարապը՝ ուրիշները չեն զար լեցնելու:

Այսքան միամիտ չեմ որ Եկարեան թոխչքով մը փորձեմ մեծ Յորելեարի գովքը հիւսելու, երբ անոր մէկ արժանաւոր աշակերտը՝ Գեր. Տ. Թորգոմ Արք. Գուշակեան՝ իր սոկի զրչովը՝ ամենակարկառուն եղանակաւ ի հանդէս կը բերէ՝ իր անդուզական ուսուցչին լուսաշող կեանքն ու գործը «Արեւ» թիրթին մէջ, պատկերացնելով ու պրիսմակելով ժամանակակից հայութեան ազգային, կրթական կրօնական, բարոյական, քաղաքական և հոգեկան մշակութին ընդհանրապէս:

Մանուկ էի՞ երբ կը լսէինք և անյազ եռանդով կը կարդայինք այնքան հայրքոտ բանաստեղծութիւնները անմահն Պետրոս Դուռեանի որ, աւա՞զ, լուսաճաճանչ ասուպի մը կեանքով փայլեցաւ մեր գրական երկնակամարին վրայ և այնքան չուտ անհետացաւ, անչէջ հուր մը վառելով սակայն հայ զրականութեան բուրգալին մէջ:

Այս անգամ, բարեբախտաբար հոյատեսիլ հսկայ մը՝ զաստիաբակի, սքեմատորի, բանասէրի պատմաբանի, բանաստեղծի, մատնազրողի, հսկութիւն արժանիքներով՝ եկաւ զրաւելու կամ լեցնելու իր վաղամեռիկ հարազատի լքած տեղը՝ մեր մշակութային կեանքին մէջ:

Եւ այսօր ուրախութեամբ կը տեսնենք որ Երաւանցէմի Հայոց Պատրիարքութեան այնքան արժանընտիւ գահակալի քահանայութեան, այլ խօսքով՝ հանրային անբասիր գործունէութեան հոյակապ Յիամամեակը տօնելու կը պատրաստուի մեր ազգը, հերքելով ամանց այն թիւք կարծիքը թէ՝ մէնք թաղել միայն զիտենք:

Մեր ներկայ ճգնաժամային օրերու մէջ տօնեցինք արդէն քանի մը Յորելեաններ, և գեռ կը պատրաստուինք տօնելու Մ. Նուպարեանի, Ա. Ա. Արտոնեանի և այլոց Յորելեանները: Մեր պաշտօնական շըջանակները, մատորականները ու մեծասունները կարո՞ղ էին ուրեմն անտեսել բազմաստանդ Եղիշէ Դուռեանը, որու ճակտին վրայ Աստուած իր մասը զրած է՝ զայն սահզծելու բոպէին:

Թող Աստուած տակաւել շատ երկարցնէ այս մէծ հայուն կեանքը, մինչեւ որ նուիւրականացած տեսնէ՝ Երաւանցէմի մէջ նոր Արմաշ մը կանգնելու իր գեղեցիկ երազն ու նպատակը:

Հ. ԵՐԱՄԵԱՆ

Հաւելու 21 Հոկտ. 1929

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբ. Արքեպ. Գուրեհան

Առաքելաչնորհ Պատրիարք Հայոց

յԵրուսաղէմ

## Ամեն. Սրբ. Հայր.

Երեւ խոնարհ որդի կուզամ չնորհաւորել Զերդ Սրբազնն Հայութեան Քահանանաւութեան յիսնամեայ յորելեանը, և կը մաղթեմ շատ տարիներ յաջողութեամբ վարելու նուիրական պաշտօնդ յօդուս և ի շնութիւն Աղջիս Հայոց:

Այս առթիւ կազմուելիք Գուրեհան մատենագարնի մէջ, այրի կնաջ լուծայի նման, իմ ալ համեստ բաժինս ուզեցի ունենալ, նուիրելով հնա Եղիպատոսի ՅՅուսարելց Մերթի արզի շրջանի Ա. տարի 1. թիւէն սկսեալ, (1915—19) ամբողջ չորսաւէս տարուան հաւաքածոյն, որոնք մեծ պատերազմի ատեն հրատարակուած են, և շատ տեղեր ինչպէս նաև Երուսաղէմը ժամանակին զուրկ էր ատանցմէ:

Թերթերը հրահանգուած տեղ յանձնուելու պատրաստ են:

Համբուրելով Օծեալ Ա. աջ,

Մնամ վշտացեալ որդի Զեր, ՎԱՐԴԱՆ ՔԱՀ. ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ



SIRAGAN ORCHANIAN

Armenian School

MOSUL-IRAQ

22 Հոկտ. 929

Մուսուլ

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբազնն Գուրեհան

Բարեխնամ Պատրիարք Սրբոյն Երուսաղէմայ

Երուսաղէմ

## Սրբազնն Հայր,

Զեր Սրբազնութեան քահանայական Յիսնամեայ Յորելեանի առթիւ հարիւրաւոր եւ թերեւս հազարաւոր չնորհաւորութիւններու երախասալիսական զրութիւններու չարքին՝ հայցողի եւ պաշտղի մը երկոսոն ալ կուզայ իր 200-ի մօտ երկսեռ աշակերաններով միասին՝ մասուցանել իր որդիական անկեղծ եւ շերժ զգացումները՝ այս բարեպատեհ տօնին օրը: Թերեւս նկատի խոկ չառնուի անիկա՝ որպէս անապատի մը հեռաւոր խորքերէն հասնող չնչին և աննշան թղթիկ մը, սակայն իրեւս հոգեւոր թոռն մը (աշակերս Նարուշեան Սրբազննի) պարտականութեան ներքին ձայն մը կը մզէ զիս՝ մատչիլ ի համբոյը Ա. Աջոյդ հայրականի եւ մաղթել բազում երջանիկ և բարերասափի տարիներ՝ յաթու Առաքելական Սրբոյն Երուսաղէմայ:

Սրբազնն Հայր, փափաքելի է ինձ ստանալ ընդփոյթ 8—10 հատոր այս առթիւ հրատարակուելիք զիրքէն, որոնց փոխարժեքը կ'ստանաք ինձմէ անմիջապէս: Կրկին աջ համբոյը թիւ երախամեօք

ՎԻՐԱԿԱՆ ՕՐՉԱՆԵԱՆ  
Տերքի Ազգ. Երկ. Վրձնի. Մուսուլ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՉՈՒՐԴ ՀԱՅՈՑ  
ՄՈՒՏՈՒԼԻ

Մուսուլ., 22 Հոկտ. 1929

Թիւ — 104

**Ամենապատճեւ**

Տ. Տ. Եղիշէ Արք - Եպիսկոպոս Գուրեան

Բարեխնամ՝ Պատրիարք Երուսաղէմայ Հայոց

Երուսաղէմ

Արքազա՞ն Հայր.

Հայ պատմութեան փարվուն էջերուն վրայ գեղեցիկ և պատմական գրուագ մըն աւ կը յաւելու այսօք՝ կատարելով սրտազին Յիսոնամեայ բարեբաստիկ Յորելեանդ Քահանայութեան։ Արաբատեան հայրենի աշխարհի բարձր ստանէն մինչեւ հասարակ հայ հիւղակի մը խորչը կը բարեբանուի սրբութիւնդ հայրապետական՝ որպէս անբասիր և պաշտելի եկեղեցական, գրական մեծ հանճար և որպէս ճշմարիտ պաշտօնեայ Աւետարանի։

Սրբազա՞ն Հայր. մենք՝ իրեն հեռաւոր անկիւնի մը խաղաղասէր զաղութը թէե բախուր չենք ունեցած ճանաչելու անձամբ զջեր Սրբազնութիւնն, այլ սակայն կարգալով ամենուրեք Զեր բազմօգուտ և անօրինակ զրուածքն, կ'ունենանք մեծ հիացում, ծնկաչօք պաշտում և խոնարհ պատկառում Զեր անսենթենիթ և հմայիչ պատկերին առջեւ։ Սայն բարեպատճեն և խորհրդաւոր տօնին առթիւ թաղականութիւնն իր ամբողջական կազմով և հանգերձ Մուսուլի համար Հայ ժողովրդեամբ պարագ ունի մատուցանել իր անկեղծ և սրտազին շնորհաւորութիւնները և մաղթել բազում երջանիկ և բարեբաստիկ տարիներ Զեր Սրբազնութեան։

Մատչելով ի համբոց Ա. Աջոյդ Հայրականի, կը մասնք որդիւկան յարգանքներով ի զիմաց Թաղական Խորհուրդի Հայոց Մուսուլի

Ամենապահիր Ատենապետ Նախագահ

Գ. Ճինվեջեն ՏՕԴԹ. Ա. Վ. Ա. Ռ Ճեն Գ. Բ. Տ Յ Կ Ո Բ Ե Ա Ն

ՀԱՅ ՈՐՈՑ ԵՒ ԳԱՂԵԱԿԱՆԱՑ

ԽՆԱԾԱԾՈՐԻԹԻՒՆ

Ա. Եցուղարիմ Եկեղեցի

Քեա, Կ. Պալիս

Կ. Պալիս, Բերա, 22 Հոկտ. 1929

Թիւ 1311

**Ամենապատճեւ**

Տէր Տէր Եղիշէ Ա. Արք. Եպիսկոպոս Գուրեան

Աղջմուսիր Պատրիարք Ա. Վանուց Երուսաղէմի և

Արժանաւոր Գահակալ Առաքելական Աթոռոյն Ա. Տեղեաց

Երուսաղէմ — Պաղեստին

Ամսոյու Զեին քրիստոսաւանդ Ա. Տեղեաց մէջ արժանաւորապէս և մեծվայելուչ կերպով տեղի կ'ունենայ Նորին Ամենապատուութեանդ քահանայագործութեան յիսնամեայ Յորելեանը։ Այդ առթիւ տիեզերքի չորս ծագերուն տարտղնուած վտարանդի հայութիւնը իրեն միաձոյլ զանգուած միակ յուզումով մը կը փոթորկի. յուզում, որ ժողովուրդները կ'ապրին հազուագէպօրէն երբ կը բախտաւորուին փառաբանելու աստուածատուր հանճարը, իրենց մեծազոյն և արժանաւոր գաւակներուն մէջ մարմնաւորուած։ Ամէն հայ, որու սրտին մէջ որ Աւետարանի ճշմարիտ հաւատքէն չիթ մը կաթած է, ու ամէն անկիւն, ուր Սահակ-Մեսրոպեան պրազան գործէն ճանճանչ մը սպրգած, այս եւ բանելի պահուն, զմայլելի սրտի մը անդիմադրելի հմայքը, անզարագրելի հոգիի մը

անսահման վեհութիւնը և ամէնիմաստ մտքի մը անհան սաւատնումը կ'առպի։ Աւ այդ ամէնուն գեղակերա համազբութիւնը կազմով Նորին Սրբաթեանդ անձը այս վայրկեաւ նիս կը տիբապիտէ մեր ամէնուս սրտերուն, հազիներուն, այնքան հարազտորէն խորհրդանշելով աստուածային բոլոր կատարելութիւնները։

Այն մեծվայելուչ հանդիսութիւնները, որոնք կը կատարուին այս նպաստակաւ, կը սպանծացնեն Նորին Սրբաթեանդ անձն մէջ, Մէծ Եկեղեցականը, Աւետարանի ճշմարիս Հոգիւը, ներհուն բանասէրը, անխոնջ զիտաւնը, անհաւասարելի տրիտոնը, սասուածաշունչ բանաստեղծը, կատարեալ խմաստակը և մեծ վարժապետը։ Թայլ թող որոշի, Ամենապատիւ Սրբազնն Հայր, մեզի անարժանաւոլապէս մօտենալու երկիւզած օրէն զահոյքից, որուն վրայ ամերան վեհապանօրէն կը բարձրանայ ամէն կատարելութիւններով օժմուած ձևարիս Մարգը, և ողջունելու հայութեան ժամանակակից մեծագոյն զաւակներէն մէկը, և այս պատեհութեամբ մասուցանելու սրբազնին ճորժաւորութիւններու հետ որդիւական անկեզծ զգացումներու խանգարաթ հաւասարեցները։

Նորին Ամենապատուաթեանդ թանկազնին կինոցը համար անսահման արեշատութեան բարեմաղթութիւններով կը մնանք

Մատչելով ի համբոյը Ամենապատուաթեանդ Ա. Աջոյն

Որդիւական ամենախորին յարգանօք և ակնածանօք

Ի դիմաց Կ. Պոլսոյ Հայ Որբոց ու Գաղթականաց Խնամատարութ. Վարչական Ժաղավայ  
Գանձապետ Ամենապատուաթեանդ Ամենապատուաթեանդ

Միջըն, Ալլաջաձեան ՏՕԲԹ. Ակէկոնք Մկրտիչ Էկաման, Անդամք՝ ՎԱՀԱՆ Ապէրէնեան, Եսիմո Սուրենեան, Մելիք Բ. ԴԱԶԱՐՈՍՍԱՆ

1929 Հոկտեմբեր 22

Գահիրէ

Ամենապատիւ Տէր

Տ. Եղիշէ Սրբազնն Արքեպիսկոպոս Դուռիեան

Արժանընտիր Պատրիարք Հայոց Երուսաղէմի

հն. հն. ան

Երուսաղէմի

Ամենապատիւ Սրբազնն Հայր,

Դուքեան անունը եղած է մէկը այն շատ սիրելի անուններէն՝ որոնք մի՛շտ ալ թոված են զիս ամենուն հետ. զժուար է ըստ՝ թէ զայն ներկայացնողներէն, որն է զերազանցը՝ ինքնատիպ տաղանդի եւ պաշտում հարկադրու իմացական ու բարոյական շնորհներու մէջ. անոնք կը չփոխուին իբրաւու հետ իրենց բարձրութեամբ։

Իմ սիրելի ծննդապայրս, Պարտիզակ, զերազանց բախտար սննեցաւ երկար ատեն ըլլալու դրեթէ առաջն զաշտը Անոնցմէ Մէկուն, Զեր պաշտելի Սրբազնութեան կրօնական ու կրթական սիրավէ՛ զործունէութեան. շատ փոքր էլ զժրախտաբար չքնար հայրենիքիս այդ Ասկեղարաւուն, եւ հազի՞ւ կը ցիշեմ իբր Տեսուչ Զեր այցելութիւնն ու անցքը վարժարանի ընդարձակ սրանէն, ծաղկացէն, ուր՝ զեռ անտիվական մանուկ, կը ծուարէինք շարք շարք. չունեցայ բախտար Զեր առջին ծննդապայրու, բայց արգէն Զեր աղին կը սաւանէր կրթական արգ սիրելի հաստատութեան մէջ, որուն մժնուրութ մի՛շտ զաժուկ ու խանցած մնաց Զեր չունչովը՝ Զեր միկնելէն վերջն իսկ ընդերկար։ Ի՞նչ խորանկ տպաւորութիւն, ի՞նչ անեզծ զրոշմ, ի՞նչ քաղցր ու սիրելի լիշտատկ զոր թողած էլքը առհասարակ ամենուն մտքին մէջ, ու փոքրերս մեծերէն սովորեցանք սիրել Զեր Անունը եւ ունենալ զայն միշտ մէկ շրթներուն վրայ, զեռ կը ցիշեմ սիրավեղ խանդաղատանքի այն տարօրինակ զգացումք՝ սրով Պարտիզակիցին ցոյց կուտար զիւղին բարձունքին վրայ այն տունը, որ բախտը սննեցեր էր ըլլալու իր «Հայր Սուրբ» ին վեհագոյն վեհականը եւ գիւղին զաւարագեղ զերեկմանոցին մէջ, հինաւուրց կաղնիներու

չուքին տակ, տեսակ մը ուխտավայր դարձած էր այն պարզուկ այլ վսիմ չբրիմը՝ որուն վրայ կը կարգայինք, բարի և առաքինի ծերունիք մը անունէն վերջ՝ «Հայր Պետրոսի Դուռըն», «Երանի՛ որոց ի Տէր նննեցին» . . . :

Կ'անցնին տարիները, որոնց միջոցին մե՛ծ պատիւն ու փառքը չե՛ն դադրիր բնաւ քայլ առ քայլ հետեւելէ Զեր պատկառելի Ալբեցեալ Սրբազնութեան՝ Արմաշէն Զմիւռնիս, Զմիւռնիային Պոլիս, Պոլիսէն Երուսաղէմ, ուր կը բազմիք արժանաւորապէս Առաքելական Աթոռին վրայ Ա. Յակոբեան Մենաստանին՝ ուր վերադարձուցիք Շղթայակիրի և իր նմաններուն փառաւոր օրերը, զրավան ու կրթական այնպիսի պանծալի վերածնութիւնով մը, որ կրկնապէս սիրելի գարձուց գարաւոր Մայրավանքը հանուր Հայութեան:

Բագանդակ Հայութիւնը անձկութեամբ կ'ըսպաէլ ապաքէն որ Սիոնի բարձունքէն հաչէ՛ր Յորելի փողը՝ անցնող կէս զարը յայտարարելու համար. կէս գարը այնքա՞ն ըլքեղ, այնքա՞ն չնորդալի, այնքա՞ն բազմերես գործունէութեան մը. ականջ կու տանք արյ ձայնին՝ որ չա՛տ անուշ է և կ'արձագանդէ ամենուս սիրակրուն խորութեանց մէջ, առթելով նոյն այն խնդութիւնը՝ որով երբեմն Խորայէլի մէջ կը համակուէին ապատագրութեան սպասող գերիներ, անիբաւուածներ եւ անարդարութեան զոհուողներ:

Այժմ, Յորելեար Սրբազն Հայր, յիսուն տարիներու անդադար վերելքէ մը վերջ՝ հասած այս Պատմաստեան բարձունքին վրայ՝ գիտեցէք արդար հրճուանքով ակնապարար համբայնապատկերը՝ զոր կազմեցին ու կը կազմեն Զեր շունչովը՝ Քրիստոնէական կեանքով ուռնացած եկեղեցիներ, Զեզմով և Զեր բազմերամ աշակերտներով կենսաւորուած վարժարաններ, Հայ պատմութեան, Լեզուի և Դպրութեան զբեթէ խոպան դաշտերուն մէջ լայն ու խո՛ր բացուած ակօսներ, Զեր Հոգուական Սրինգէն արձակուած այնքան անուշ մեղեգիներավ:

Իսկ մենք, Զեր զաւակները, մինչ կը նայինք զիտելու Զեր լուսաճանանչ դէմքը, մեր բոլոր սիրակրովը կ'աղօթինք ու կը մաղթենք որ Երկնք չնորհէն Զեզ գեռ երկա՛ր տարիներ եւ ուկին փսխուի մի օր աղամանդով . . . :

Որդիական ակնածանքով ու կարօտագին համբայներով Զեր պատկառելի Սրբազնութեան Ա. Աջոյն,

Զ. Ա. ԶԱՐՈՂ Ն. Ա. ՀԱՊԵՏԻ Ա. Վ. Ա. ՀԱՅՐԱՎԵՆ (Պարտիզակցի)



### ՄԻՒՅՑԱԼ. ՀԱԴԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Ս. ԱՍՏՈՒՄԱՍԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ՄԻՒԱՍ ՄԱՏՐԱՆ ԵՒ ԱԶԳ. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ

Գահիրէ 22 Հոկտեմբեր 1929

▶ ԳԵՂԵՑԻ

### ԱՄԵՆԱՊԱՄԻ

Տ. Տ. Եղիչէ Ա. Արքեպիսկոպոս Դուռեան

Արժանընտիր Պատրիարք Առաքելական Ա. Աթոռին

Երուսաղէմ

Գահիրէ Ա. Եկեղեցեաց եւ Գեղեցմանաստան Միացեալ Հողաբարձութիւնս, որ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան զործին համար իր գուզնաքեայ ծառայութիւնները ի սպաս զրած է, ներկայիս պարագանութիւնն կը համարէ, Զեր քահանայական յիսնամեակին տոթիւ պատեհութենէն օգտականով, Զեր Ամենապատուութեան ներկայացնել իր մալթանքները և իղձերը, զԶել յամն երկար ակնմելու ի զլուխ Առաքելական Ա. Աթոռի, ի փառս և ի պարձանս մեր Ա. Եկեղեցին, որուն Դուք ծառայած էք յիսուն տարի անընդհատ, ոչ միայն անոր բեմը ճնշացնելով եւ ողեւորելով, այլ և անոր պաշտօնէութիւնը զօրացնելով, կրթուած եւ պատրաստուած եկեղեցականներով:

Այս տեսակէտով անփոխարինելի է Զեր աշխատութիւնը և մենք ուղղակի Զեր վաստակաց արգիւնքէն օգտառողներէն, որ մեր բեմին անձանձը քարոզիչը ունինք, վիճակիս Գեր. Առաջնորդը և Զեր սիրելի աշակերտը, կուգանք մեր ջերմագին չորհաւորութիւննը ներկայացնել Ամենապատիւ Սրբազնութեանդ մաղթելով Զեր երկար կեանք եւ առողջութիւն, որպէսզի նորանոր արդիւնքներով պայծառացնէք մեր Ս. Եկեղեցին:

Ի դիմաց Ս. Եկեղեցեաց եւ Գերեզմանատան

Միացեալ Հոգաբարձութեան

Ամենապպիր Ամենապետ

Ն. ՊԱԼԱՅԻՆ Ա. Ա. ԱՍՏԵՎՈՅԻՆ



Ճիւնիէ - Լիբանան, 23 Հոկտ. 929

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբազն Արք - Եպոկաս. Դուրեան  
Բարեխնամ և Բարեչնորհ Պատրիարք Հայոց

Ի Ս. Երուսաղէմ

Ծնորհագարդ Սրբազն Հայր.

Զեր Սրբազնութեան Քահանայութեան 50 ամեայ Յորելեանը պիտի առնուի քանի մը օրէն արժանաւոր եւ փառաւոր հանդէսով: Այս առթիւ, թէպէտե խնդութեամբ լեցուած եւ հրճուած է հոգիս, ու յոյժ ցանկալի էր ինձ, իրը յետինն եւ արուանդ Զեր Ամենապատութեան բազմաթիւ ու տաղանդաւոր աշակերտաներէն, անձամբ զալ և մասուցանել իմ չորհաւորութիւնն եւ խնդութիւնը. բայց նկատելով որ ո՞չ արծաթ անմիմ եւ ոչ ոսկի, ոչ պնակէ և մատանի, և ոչ խակ գայելուչ հասակ ու փայլուն զգեստ հարսանեկան, ինչպէս եւ տաղանդ ու արժանիք զրական, բեմական, եւ վախճանով որ մի գուցէ իմ ներկայութիւնն շուք և սառուեր մը բերէ Յորելինական հանդէսին՝ փոխանակ փայլի, ստիպուած եմ հեռուէն, հոգւով և ներկայ երկտողով չորհաւորել Զեր Սրբազնութիւնը, և մատուցանել իմ որպիշական անկեղծ և խորին խնդակցութիւնն ու չորհաւորութիւնը:

Կը մաղթեմ չորհալարդ Սրբազն Յորելեարիդ երկար և երջանիկ կեանք, զրական և զրական բազմարդիւն գործունէութիւն ի փառս և ի բարեկարգութիւն Ապղիմական Սթոռին, և միւնոյն ատեն Հայ. Ս. Եկեղեցւոյ, ի պատիւ և ի պարծանս Հայ Եկեղեցականութեան և Հայ Մատենագրութեան:

Յաջողութիւն և ճոխութիւն մաղթելով նաև Դուրեան Մատենագրաբանին և Մատենաշարքին, կը մատչիմ ի համբույր Ծնորհագարդ Ս. Պատրիարք Հօրդ Ս. Աջոյն,

Մնալով Ա. Ծ.

ՓԱՌԵՒ Ծ. ՎՐԴ.



Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան

Պատրիարք Երուսաղէմայ

Սրբազն Հայր.

Իբրև երեսուն և ութամեայ ուսուցիչ — որ բախտը ունեցած է Զեր Սրբազնութեան հետ պատերազմէն առաջ պաշտօնավարելու Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի մէջ — և եռամեայ հոգեռարական՝ ծանօթ երկու ասպարէզներու տատասկու ուղիին, խորին ակնածանքով և հիացումով կուգամ չորհաւորել Զեր Սրբազնութեան յիւնամեայ հոգեռ-

բական - ուսուցչական - գրական գործունեութեան յորելեանը, մաղթելով Ամենակարուցին աւելի երկար կեանք և գործունեութիւն յօպուտ և յուրախութիւն տառապեալ Հայեկեցւոյ զաւակներան:

Որդիական անկեղծ նուիրումով - կարօտ Զեր Սրբադնութեան հայրական օրհնութեան և խրանիրան - մատչիմ ի համբոյք Ա. Աջիդ:

ԴՐԻԳԱԲՐ ՎՐԴ. ՇԱՀԱՄԵԱՆ  
Հոգեոր Հովիս Հայոց Գերմանիոյ

23 Հոկտ. 1929, Բերլին

Dervish Pasha St. № 12

Նիկոսիա 23 Հոկտ. 1929

Առաքելապատիւ

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան

Շնորհազարդ Պատր. Առաք. Աթոռոյ Ա. Յակոբայ

Երուսաղէմ

Առաքելաշնորհ Սրբազան Հայր,

Ներկայիս նուիրական պարտք կ'զգամ իրեւ մի համեստ մշակը Ա. Եկեղեցւոյ, Զեր անզուգական Յորելեանի տօնախմբութեան առթիւ փութացնել Զեր Ամենապատութեան որդիական սրբակուղիս խնդրական սրբառութեան առթիւնով Զեր պատուական Գերապատութեան հանգեցած մէկի աւելի հայութներս անվերապահորչէն յայտնեմ թէ՝ որպէս անձնդիր քաջարի հովի իրաւունք էր և վայելու վայելել ամբողջ հայութեան սրտագին երախտագիտական ու զնահատանքը, բայ որում Զեր Սրբազնութեան համակ կեանքը գարձած է խօսուն պատկեր մը սիրունիկ, յորում միաձայն կը հառագայթէ համաստեղութիւն մը, խմաստաէրի, քերթողի, պերճախոսութեան, հմուտ զրագէտի և աւելին ու զերազանցելին Զեր մաքրակինցաղ սիրուած եկեղեցականի անբաժիր կեանքը, եղական ու տիպար բրաբիոն ու պասկը բոլոր բարեմանութեանց, որ իր ասինքնող ու ներշնչող քաղցրութամբը լուսաւէտ կեցրոն մը գարձած է հասարակաց խորհուրդը գեղեցկացնող:

Մաղթենք որ Բարձրեալն Աստուած երկար տարիներ երջանկութեամբ պահէ Զեր Սրբազնութիւնը Ա. Յակոբայ աթոռին վրայ, որ չնորհի Զեր Ամենապատուութեան Սիրուատել եւս պայծառանայ և լուսաւորուի ի պատիւ և ի փառու Հայց. Եկեղեցւոյ, և ի շինութիւն մտաց ու խորհրդոց: Համբուրգի Ա. Աջիդ Ա. Վեհիդ, Զեր պատուական Հայրական օրհնութեանց կարօտ ամենախոնարհ որդի Զեր

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՔՃՆՅ. ԹՈՒՄԱՑԵԱՆ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա. ԼՈՒՍԱԿՈՐԻՔ ԵԿԵՂ. ՀԱՅՈՑ  
ԱՆԴՐ - ՆՈՀԱՐ ԹԻՖ 19

ՊԵՅՉՐՈՒԹ

Պատուական

Դուքեան Յորելեանի կեդրոնական Յանձնաժողովոյ

Ի Երուսաղէմ

Ն. Ամենապատուութեան Տ. Տ. Եղիշէ Ա. Պատրիարք Հօր Յիսուսմեայ Յորելեանի առթիւ, Թաղական Խորհուրդս կուզայ իր ամենաջերմ բարեմաղթութիւնները յլել Կեզր. Յանձնաժողովոյ միջոցաւ մէր սիրելի ու գիտուն Ա. Պատրիարք Հօր, մաղթելով միանգաման երջանիկ ու բարեբաստիկ տարիներ:

Համբուրգի իր Ա. Աջը, կը միամք միշտ խոնարհ ծառաները.

Ի Դիմաց Անդր - Նահրի Թաղ. Խորհուրդի

Ատենազպիր Ատենապետ

ՆԻԿՈՂՈՍ ԲԵԶԼԻՎԱՆԵԱՆ Թ. ՆՈՐՃԱՀԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
«ՍԱՀԱԿ» — ՄԵՄՐՈՊԱԿ»

ԳԵՂԱՐԿՈՒԹ, 23 Հոկտեմբեր 1929

**Պատուական**

Դուքեան Յոքելեանի Կեղրոնական Յանձնաժողովոյ  
ի Երուսաղէմ

Ն. Ամենապատռութեան Տ. Տ. Եղիշէ Ա. Պատրիարք Դուքեանի Յիոնամիայ Յու-  
րեանին առթիւ, խմբագրութիւնն՝ կը փութայ իր ամենաջերմազին բարեմազթութիւն-  
ները յղել Կեղրոնական Յանձնաժողովոյդ միջոցաւ մեր սիրելի ու բազմազէտ ծերու-  
նազարդ Ա. Պատրիարքին, միանգամայն, մազթելով օրհնարեր և բարեբաստիկ ապրի-  
ներ լրեն:

Համբուրելով Ա. Աջը կը մնամք միշտ իր խոնարհ ու հաւատարիմ ծառան.  
Միջը. Ա. ՆՈԶՄԻԵԱՆ

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ՊԵՅՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

24 Հոկտ. 1929

**Ամենապատիւ**

Տ. Տ. Եղիշէ Արքեպոս. Դուքեան

Բարեջան Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Քանդուած Հայ Արծիւներու բոյնին անտաւն զաւակներս՝ կտոր մը անշունչ թուղթով  
կուզանք թարգման հանդիսանալ տարտղնուած՝ գմբախտ ԶԵՅԹՈՒՆցոց:

ԶԵՅԹՈՒՆցիք խոր յարզանք ունին ամէն անոնց՝ որո՞նք, ցեղին և մարդկութեան  
համար աշխատած եւ օգտակար եղած են:

Դուք Զեր անբասիր կեանքով, ցեղին ժառանգած մեծ հանճարով եւ ազգօգուտ  
գործերով՝ կուզաք պատուոյ մեծ տեղ մը գրաւել Հայ ցեղի արիւնոտ պատմութեան մէջ։  
Հայ սերունդին և ԶԵՅԹՈՒՆցոց հոգւոյն խորքը յաւէտ անմահացած Դուքեան գերգաւ-  
տանը, պիտի օրհնուի, քանի ի՞նքը ցեղը կ'ապրի։ Զեր բոլոր գործերուն մէջ՝ Հայ Ողին  
և ԶԵՅԹՈՒՆի անթիւ նահատակները՝ Զեղ պահապան և առաջնորդ ըլլան և ապրիք շատ  
երկար։ Զեր Յոքելեանի առթիւ լաւազոյն մազթանքներով

Ի գիմաց ԶԵՅԹՈՒՆի Հայրենակցական

Միութեան Կեղը. Վարչութեան

(ԱՆՌԵԲ)

Ամենապատիւ

Ամենազպիք

ԳՐ. Գ. ԳՈՒՏՈՒԼԵԱՆ

ՊԱՂՏԱՍՍԱՐ ՍՈԼԱԹԵԱՆ

**Ամենապատիւ Արքազան Հայը.**

Այնքան հանգիսաւոր ու պաշտօնական խօսքերու, գիրերու քով, որոնք Զեր ներսղ  
ժպիտավոր կը հշուեք հիմայ, գմուար գրուած այս տողերուն ալ բարի եղէք տալու այն  
իրական կակիծը զոր չեմ բացարած, պաշտօնական ըլլալ չկրնալուս։ Բայց կարելի է  
միմիթարուիլ։ Ի՞նչ հարկ, կը խորհիմ, վերազիբներու և շնուած նախադասութիւններու։  
Դուք վեր էք անոնցմէ։

Նիկոսիա, 24 Հոկտ. 1929

Երախտապարտ եմ Զեզի այն չառ գեղեցիկ երեսովին համար որ Զեր միտքը կը կոչուի և Զեր ձեռակերտն է ամբողջութեամբ։ Բայց չէք սպասեր որ երախտապարտ ըլլամ Զեզի Զեր կեանքին համար ալ ։ Վասնզի այդ կեանքին արծաթէ լիութեան ու ասոր թերաստուերին մէջ ես թափանցումն ըրի զիս չարչարող մռայլ խորհուրդին։ Ես վճառած եմ տարիներով գաղտնիքը մեր սրբացած եկեղեցականներուն։ Այսօր կնճիռը լուծուած է։ Ու ի՞նչ սրտառուչ պարզութիւն է ճամբունը որ օգտակար կեանք կը կոչուի։ Երախտապարտ ենք քեզի մինք բոլորս։ Կը սորվեցնէք մեզ համեստ ու քաղցը ըլլալ ու մեզ կը խելամտէք ժողովրդական խղճմտանքին որ մեր պատմիչներան մօտ սրբութեան լուսապատկը կը դառնայ։ Զեզմով այնքան թափանցիկ է այս խորհուրդը։ Ահա՛ թէ ինչու բարիք մըն է Զեր կեանքը։

Ու ինչպէս որ նշանաւոր էջի մը մէջ գաս կ'ուզէք Զեր հին մէկ նախահայրէն, ներեցէք որ Զեր անարժան մէկ աշակերտը գարձնէ Զեր բառերը Զեզի ու ծունկի եկած ըսէ Զեր փառքին

— Բարութեան դաս մը՝ կեանքէ՛դ, Սրբազն ուսուցիչս։

Համբուրելով Զեր համբուրելի Աջը  
Սէրով ու կոկիծով  
Յ. ՕՇԱԿԱՆ

ANATOLIA COLLEGE  
SALONICA, GREECE

Գեր. Տ. Տ. Բարկէն Ա. Արքեպիսկոպոս

Նախազահ Դուրեան Յորելինական Յանձնախումբին  
Երուսաղէմ

Գերաշնորհ Սրբազն Հայր։

Հայոց, Երուսաղէմի արժանայտիր Պատրիարք Ամեն. Տ. Տ. Եղիշէ Սրբազն Արքեպիսկոպոս Դուրեանի՝ քահանայութեան, ուսուցչութեան և զրական գործունէութեան յիսնամեայ յորելեանին առթիւ, համակուած հիացումով, յարգանքով ու սէրով, կը փութանք անբասիր, ներհուն, զգայուն քերթող, պերճաբան Յորելեարին մատուցանել ակնածանօք Պատ. Յանձնախումբիդ միջոցաւ սրտագին չնորհաւորութիւններ և բարեմալթութիւններ։

Ի գիմաց Անլանիկի Անաթօլիա Գուէճի Հայ Ուսանողութեան  
ԲԱՅԹ Յ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

24 Հոկտ. 1929

Սելանիկ

ԱՐԱՄ Ռ. ՏՕՆԻԿԵԱՆ

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱՇԳԱԿԱՑ ՈՐԲԱԿՈՑ

ՀԱՅՈՍՏԵԱԼ 1866

ԽԱՍԳԻՒՆ, ՀԱԼԵՑ-ՕՂԼՈՒ

Կ. Պոլիս 24 Հոկտ. 1929

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան  
Պատրիարք Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմայ

Սրբազն Հայր։

Հայ երախտապէտ ապգը զիտէ զնահատել իր արժանաւոր զաւկին տքնածան աշխատութիւնը։ Ամէն կողմ կատարուած Յորելինական հանգիսութիւնները, բնոյթը ունին պատկերու Զեր նուիրումի գործը, որ արգարև, յոյժ օգտակար և բազմակողմանի եղած է։

Թո՛ւ Ա տուէք, Սրբազն Հայր, որ ես ալ իմ՝ և Գալֆայեան ուխտի քսյրելու համականքի ձայնը խառնեմ համազգային այս տօնակատարութեան, մաղթելով Զեզ երկա՞ր և երջանիկ կեանք, որպէսզի հայ ազքատ զրականութիւնը ճոխացնէք Զեր նիրական և ներշնչուն բանաստեղծութիւններով, ուսումնասիրութիւններով և բանափրութիւններով:

Տա՞յր, թէ երկինք Հայ ազգին նուիրէր Զեզ նման անբասիր, և անձնանուէր եկեղեցականներ, պատկ և պարծանք եկեղեցւոյն:

Ակնածանօք մատչելով ի համբուլ Ս. Աջոյդ՝ մասմ

ի գիմաց Գալֆայեան Աւխտին  
Մայր՝  
Ա.Ջ.Ա.Խ.Ն.Ի. Մ.Ա.Յ.Բ. Կ. Ք. Ա.Ս.Ա.Լ.Ե.Ա.

#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Դուքեան

Հայրախնամ Պատրիարք Առաքելական

Ս. Աթոռոյ Վանուց Սրբոց Յակոբեանց

յերաւաղէմ

Շնորհազարդ Սրբազն Հայր .

Ի ծառայել իմում այնոցիկ, որք են ծառայք Տեառն իմոյ, համարիմ պաշտօն մատուցանել նմին իսկ Տեառն:

Սրբակրօն վարուք, ոսկիաբան խօսիւք, իմաստասէր մտօք, ուղղափառ ուսուցմամբ և օրհնաբեր արգեամբք, լրիւ կէս գար ողջոյն Ամենակալին մերոյ Աստուծոյ ծառայոց Հայրապետիդ, իմոյ սրոտազին մեծարանաց մատուցանեմ զծառայական ողջունազիրաւ:

Եւ յաւուրս մեծի տօնի Յորելինի Զերոյ Արբազնութեան, հայցեմ ի Տեառնէ շնորհել Զեզ աննուազ առողջութիւն, զի մի՛ պակասեսցի ալեօր ի տանէ խրմէ՛, և որպէս լուաւ բագկատարածութեանն Մովսէսի, ի ջախջախել զթշնամիսն Խորայէլի, տացէ՛ և մեզ արժանաւորութիւն մտանելոյ ընդ բազկացդ և շնորհեւք աղօթիցդ արգիւնաւորելոյ զօրհնութիւնն Աստուածային ի վերայ Սրբոյ Եկեղեցւոյ և համօրէն Աղզիս և մեր մեղաւորացս:

Արդիանուէր խանզաղատանօք  
Զերդ Բարձր Արքազնութեան

Նորընծայ Ծառայ  
ՊԱԱԿ ՔԱՀԱՆԱՅ Մ. ԽԱԶԻԿԵԱՆ

24 Հոկտ. 1929,

Գահիրէ

U. C. C. & P.

Beyrouth

Պէլյութ, 24 Հոկտեմբեր 1929

ՊԱԱԿ ԵԿ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՐԻՑ. ՄԻՈՒԹԻՒՆ

Պ Ա Յ Ա Յ Ա Յ

#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս Դուքեան

Բարեխնամ Պատրիարք Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազն Հայր,

Զեր ազգօգուտ ծառայութիւնները ամէն հայու հոգւոյն խորքը զրոշմած է խորին մեծարանօք Զեզ հանդէսի:

Այսօր յարգանքի տուրք մը կը մատուցանէ հայ ժողովուրդը Զեզ՝ իր մեծ դաւկին, որ զիտցաւ ցեղին փոխանցել իր մեծ հանձարը:

Ա. Եղիշեի ամսման հոգին կ'ապրի Զեր մէջ։ Ա. Սահակ եւ Ա. Մեսրոպը ցեղին մէջ  
կինդանացնող Զեր չունչը սերունդներ կըթեց։

Հայ ողին Զեր բոլոր գործերուն մէջ Զեկ առաջնորդ ըլլայ և հայ ժողովուրդը Օշականի մէջ լսէ ու կարգայ ցեղային նկարագիրը կերպող հոգեչունչ քարոզները:

Ասսաք են մեր և մեր հայրեակիցներուն լաւագոյն մաղթանքները Զեր Յարելեանին ըստիւ:

Արդիական խորին ակնածանօք  
և դիմաց Պոլսոյ եւ Շրջ. Հկցկ. Միութեան.  
Ա. գլուխ Ա. պետ  
Յ. ՍԱԼԵԱՆ ՏՕՔԹ. Բ. ԳՐԻՎԱԿԵԱՆ

## THE GOTCHNAG

Հոկտ. 24, 1929

An Armenian Weekly

**40.60.080.5160260.6**

331 Fourth Avenue.

New York

Ամենապատիւ

Տ. Եղիշե Արքեպսիկ. Դուռը եան,

Արժանականիք Պատրիարք Ս. Յակոբեանց Աթոռոյն  
Երուսաղէմ, Պաղեստին

Բարձրաշնորհ Արքազան Հայր,

Զեր Ամենապատուոթեան քահանայացման լիսնամեայ Յորելեանին առթիւ ՀԱ-  
ՅԱՍՏԱՆԻ ԿՈՉԵՆԱԿ ին Խմբագրութիւնը պատիւ ունի մատուցանելու իր սրտագին խըն-  
դակցութիւններն ու չնորհաւորութիւնները։

Թերթիս Ամբագլութիւնը, Հայ ժողովուրդի հոգեոր և իմացական լուսաւորութեան ջերմ նախանձախնդիր, մեծապէս կը զնահատէ այն ջանքերը զորս Ա. Յակոբեանց Միաբանութիւնը կը կատարէ, մասաւանդ Զեր գահակալութեան չնորհարեր թուականէն ի վեր, եկեղեցական, կրթական և զրական մարզերու մէջ:

Թոյլ տուէք, Սրբազն Հայր որ Խմբագրութիւնս, ներկայ պատեհութիւնն օպատուելով Զեղմէ խնդրէ Ամանորի Պատգամ մը, Հայաստանի Կոչնակի ընթերցողներուն ուղղուած, զոր կը սիրենք հրատարակել նոր Տարուան առաջին թիւով։

Կը մաղթենք որ Երկնալին Նախախնամութիւնը Զեզի Հնորհէ Երկար և առողջ կեանք, որպէսպի Հայաստանեաց Հօտը կարենայ ասկէ վերջն ալ շատ տարիներ առաջ նորդուի Զեր իմաստութեան լուսովը և Աներնչութիւնը Զեր առաքինութեանց օրինակովը:

Մնամ ամենախորին յարդանօք

Ի դիմաց Հայաստանի կոչնակի Ամբագրութեան  
ի. կ. Պէննէկըն

## ՄԵՐ ԴՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Նիկոսիա 24 Հոկտ. 1929

## ՆԻԿՈՍԻԱ (ԿԻՊՐՈՍ)

Ամենապատիւ Տ. Եղիշէ Ա. Արքեպո. Դուքեան

Պատրիարք Հայոց

## Երուսաղէմ

Այժմ հասանելի է Սիրելի Սրբագան Հայր,

Հովուական Զեր յոզնամբոխ պարապութերու մէջ, չեմ զիտեր թէ այս տողերուն ստորագրութիւնը պիտի կրնա՞յ մոռցուած հին անունի մը արձագանդը արթնցնել պահ մը: Արժանի պատիքը պիտի ըլլար իրեն համար տեւական մոռցումը, եթէ ան չունե-

նար հոյսկապ Արբագանը երրեք մոռցուած չվլլալու ու զայն, թէե հեռուէն ու բոխն, որդիական կաթողին սիրով պաշտելու չքմիզանքը: Թզուկները կ'աւրուին մեր յիշուած թեան ու համակրանքի տախտակներէն, բայց հսկաները խորաքանդակ զրոշմուած կը մնան հոն: Եւ սա պահաւն, նոյնքան պայծառութեամբ մտքիս առջեւ կը տեսարանազրուի և նոր Դպրոց»ի բարձրագոյն դասարաննը՝ որ, տառնեակ մը տարիներ տուած, չաբաթը երկու անգամ կը լեցուէր քաղցրութեան, չնորհի, զիտութեան ու բանասեղծութեան շացուցիչ լուսովվը, որուն մէջ իմ ալ հոգիս կ'օծուէր աշակերտներու հողին հետ, երբ իբրև ուսուցիչ - ուսանող զմայլազին կը հետեւէր Զեր գասերուն:

Ու այսօր, երբ ազգն համօրէն կը տօնախումբէ պատուական հայրապետիկ յորելեանը, թոյլ տուէք որ ես ալ, Մելգոնեան հաստատութեան անունով ուզգելի պաշտօնական հեռազրէս զատ, իմ որդիական սիրոյն հետ յայտնեմ իմ ջերմ խնդակցութիւններս ու լաւագոյն բարեմազթութիւններս, ու զուրգուրազին համբուրեմ Ալրեդի Արբագանին շընորհալի Ս. Աջը:

Գ. ԿիրԱԿԱՌԵԱՆ



Յոպկէ. 25 Հոկտ. 1929

#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Ա. Արքեպսկ. Դուրեան

Բարեխնամ Պատրիարք Առաքելական Ս. Աթոռոյ  
Երուսաղէմի

#### Արբագան Հայր,

Զերդ Ամենապատութեան Գահակալութեան Դրկ. տարւոյ և անուան տարեզարձէն երջանկաբար զուկազիպող Մեծի Քահանայութեան Յիսեամեայ Յոբելեանի առիրով պատիւ եւ համարձակութիւն ունիմ ամենախոնարհ յարգանքներով յայտնել իմ ջերմազերմ չնորհաւորութիւններս, մալթելով ի բոլոր որոնէ որ նախամինամողն Աստուած երջանկութիւն պարզեւէ Զեղ, և առողջ ու անփորձ կեանքով անսասան պահէ զԶեղ Պատրիարքական Գահաւն վրայ:

Մատչիմ ի համբոյր Աջոյն Զեր Բարձր Արբագնութեան, եւ մնամ

որդիական խորին յարգանքներով  
Երաժիշտ-Ռւսուցիչ Յոպկէի վանուց  
Յ. Ա. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Արք. Արքեպիսկոպոս Դուրեան

Պատրիարք Առաք. Ս. Աթոռոյն Արքոյն Յակոբեանց

Երուսաղէմ

#### Ամեն. Ս. Պատրիարք Հայր.

Արբագայլ և պահածալի Ս. Անունիկ, պատուարեր զահակալութեանդ, անդրանիկ Յիսնամեայ Քահանայութեանդ հաչակաւոր Յորելեանիկ առթիւ, ես և մանկունք իս ծնկաչոք կուզանք համբուրել Արբագան Աջը և մաղթել Զեղ երջանկաբար շատ տարիներ:

Արբագան Աջը համբուրող խոնարհ որպին Զեր

25 Հոկտ. 1929

ՅՈՎՀՈՆՆէՍ ԽՈՉԱԿԻՐ ՔՀ. ՍԻՄԵՈՆԵԱՆ

Եաֆա

Ժամարար Յոպկէի Հայոց Վանուց

## Ամենապատիւ

Տէր Եղիշէ Սրբազնն Սրբեպիսկոպոս Դուքեան  
Սրժանընտիր Գահակալ Առաքելական Առւրբ Աթոռոյն  
Երուսաղեմայ

Սրբազն Պատրիարք Հայր .

Զերմագոյն բարեմաղթութիւններս կը մատուցանեմ Ամենապատութեանդ պատկառելի Յիսոնամեայ գրական գործունեութեան :

Կը ցանկամ բազմարդիւն գրչիր բեղմաւորութիւն . անվիշտ ապրիք տարիներ երկար որ մշտական հնչէ քնարդ անմահ :

Հայր Պատուական , կ'աղաչեմ որ բարեհաճիք ընդունիլ խորին մեծ արանացս հաւաստիքն :

25 Հոկտեմբեր 1929

Երուսաղէմ

Որդիական ակնածանօք

Մատչիս Ա . Աջոյդ

ԱՅԻ ՏԻԿԻՆ ՎԻՐԴԻՆ ՎԱՐԴԻ - ՊԱՏՐԻԿԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ

ԳԱՀԻՐԷ

Գահիրէ 25 Հոկտ . 1929

## Ամենապատիւ

Տ . Տ . Եղիշէ Սրբազն Սրբեպիսկոպոս Դուքեան  
Պատրիարք Ա . Երուսաղէմայ ի Վանս Ա . Յակոբայ Հայոց  
Երուսաղէմ

Ամենապատիւ Սրբազն Հայր ,

Զեր Սրբազնութեան Բահանայութեան յիսնամեակին առթիւ , Զերմագէս կը փափաքէի գալ անձամբ յայտնելու համար իմ սրտազին շնորհաւորութիւններս եւ հոգերուղիս մաղթանքներս , բայց կը ցաւիմ բոելու որ մեր Սրբազն Առաջնորդ Հօր ասկից բացակայ ըլլալուն պատճառաւ , Առաջնորդարանի ընթացիկ և ստիպողական գործերը հարկադրած են զիս , որ չկարենամ կատարել իմ որդիական պարտականութիւններս :

Ներկայ զրոյս յարգանքով եւ ակնածանօք Զերդ Ամենապատութեան կը ներկայացնեմ իրը հարազատ զգացումիս արտայայտութիւնը , իմ Զերմ մաղթանքներս Զեր Սրբազնութեան արեւշատութեան համար , որպէսզի այս վարաբանզի եւ չորս հոգերուն արուած ազգը քայելէ Զեր արդիւնաշատ եւ բազմաբեղուն մտքին արտադրութիւնները եւ Ա . Աթոռը՝ Զեր բարձր հովանին :

Ամէն անոնք որ Զեր Ամենապատութեան մօտէն ծանօթ են , յանձնն Զեր կը տեսնեն արդի ժամանակներու Շնորհալին , որ կը ծառայէ աղդին թէ իր գրչի ու մտքի գործունեութեամբ և թէ հոգւաւական պաշաճով : Հայ ժողովուրդը ընթհանրապէս կը կարուի Զեր մտաւորական աշխատութեան , եւ Ա . Աթոռը՝ Զեր հովուապետական բարձր հովանին :

Աւստի սրտազին զգացումներով հօ ե'ւս կուգամ միացնել իմ հոգեռանդ աղօթքս , հազարաւոր ուրիշ շատերու աղօթքին , որ առ Բարձրեալն կ'ուղղուին այս պահուս աշխարհի չորս կողմը ցրուած Հայերու կողմէ , որպէսզի ամենուս Աստուածը , Զեզ պարգեկ երկար կեանք և առողջութիւն , և պահէ հաստատուն պատրիարքական գահուն վրայ :

Այս ազգը դեռ շատ պէտք ունի Զեր Սրբազնութեան բարձր հովանին եւ մանաւանդ Զեր գրական ձիբքերուն , որոնք կայուած են գատարկութիւններ լնուլ և ջախջախուած ժողովուրդը առաջնորդել բարձրացնելու համար հոգեկան բարձրագոյն ոլորտներուն :

Մնամ որդիական յարգանօք եւ ակնածանօք համբուրիւ Զեր Ա . Աջոյն

ՅԱՐԱՒԹԻՒՆ ՔՀՆՅ . ԱԱՐԳԻՍԵԱՆ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱԿԱՆԱՌ ԵՎԵՊԵՑԻ  
ԳԱԶԻՐԻ, (ԵԳԻՊՏՈՍ)

Գոհիրէ, Հոկտեմբեր 25, 1929

Յորելինական Յանձնախումբ  
Հայոց Պատրիարքարան

Երուսաղէմ

Ամեն, Տ. Եղիշէ Ա. Արքեպ. Դուրեհանի բարերաստիկ Յորելեանին առթիւ հայրաց և հրճուալից՝ կը փութանք Գահիրէի Հայ Աւետ. Համայնքին անխառն խոնդակցութիւնները բերել ազգային հանդիսութեանց, և սրտապին մաղթել, որ Բարձրեալը շարունակէ իր չնորհքին մէջ պահելու նորին Սրբազնութեան մաքրակրօն հոգին և ազգանուէր բաղամաքառն միտքը, գեռ երկար տարիներ օրինակ հանդիսանալու համար իր կեանքին ու գործին վրայ սքանչացողներու ստուար բազմութեանց:

Հիացումի եւ մեծարանքի հաւասարիքներով

(ԱԿԱԲՔ)

Մնանք Զերդ

Յանուն Գահիրէի Հայ Աւետ. Համայնքին Հունիսի Կ. Ա. ՖԱՐԱՋԵԱՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ  
ՀԵԼԻՈՊՈԼԻՍ

Հելիոպոլիս 25 Հոկտ. 1929

Գերազատիւ.

Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան

Ա. Նախագահ Ն. Ա. Եղիշէ Արք. Դուրեհան Պատրիարքի

Յիսուսամեայ Քահանայութեան Յորելիանական Յանձնաժողովին  
Երուսաղէմ

Դերազատիւ Հայր,

Նուպարեան կրթասիրաց Միութեան Վարչութիւնուն ներկայիւս կը յայտնէ իր խորին յարգանքն ու անկեղծ համակրանքն, Մեծ ուսուցչին, Հմուտ բանասէրին, Սրբազան քերթողին Ն. Ա. Եղիշէ Արք. Դուրեհան Պատրիարքի լիսնամեայ Քահանայութեան յուրելեանի առթիւ

Ի Դիմաց նուպարեան կրթասիրաց Միութեան

Առենապետ Առենապիր  
ՏՐԴԱԾ ՀՈՊԵՇԵԱՆ Յ. Մ. ՊՉՈՒԺԵԱՆ

K. M E L C O N

Cairo, 25 Հոկտեմբեր 1929

Saptieh - Cairo

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեհան

Առաքելաշնորհ Ա. Պատրիարք Ա. Յակովայ Վանուց  
Երուսաղէմ

Բարձրաշնորհ Սրբազան Տէր իմ.

Զերդ Բարձր Սրբազնութեան աշխարհականութեան շըմանի լիսուներիքամեայ ուսանող սանը կը փութայ Զեր Սրբութեան կրօնաւորի լիսնամեայ Յորելեանի առթիւ իւր որդիական ջերմ և անկեղծ բարեմազթութիւնները մատուցանել յստո Զեր Առաքելական Ա. Գահուն, մաղթելով Զեր երջանիկ և քաջառողջ երկար տարիներ ի պայծառութիւն Հայուսանեաց Ա. Եկեղեցւոյն և Սալիմական Առաքելական Ա. Վանուց:

Ի համբոյր մատչելով Զեր պատուական Ա. Աջոյն  
Մնամ Զերդ Բարձր Սրբազնութեան  
Ամենախոնարհ և երախազէտ Որդի  
Մ. ԳԱՅՐԻՃԵԱՆ



«ՅՈՒՍԱԲԵՐ»  
ՕՐԱՅԵՐԹ  
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ  
ԳՐԱԴՐՈՒՅ:

Գահիրէ, 25 Հոկտ. 1929

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպսկ. Դուրեան

Աղջլնուիր Պատրիարք Հայոց Ա. Երուսաղեմայ

Սրբազն Հայր,

Բախտը չունիմ Զեղ մօտ ըլլալու, թէկ մօտ եմ միշտ սրսով։

Կը փութամ սրտագին չնորհաւորութիւններս յայտնել Զերդ Սրբազնութեան հրջանից յորելեանին առթիւ, որ պանծացումն է հայ գպրութեան և Հայաստանիայց Եկեղեցին։

Երկուքն ալ, ըլլայ գպրութիւնը ըլլայ եկեղեցին, սպաւո՞ր, շատ քիչերու կարգին և անոնց գլուխն և նահապետը մեծարուած, Զեղ ունին իրեւ սփափանք։

Զեղմով հարուստ կը թուի ինձ հայ ժողովուրդը, ճշմարտորէն, առանց Զեղի՝ աղլքատ։

Թողլ տուէք ինձ, Սրբազն Հայր, որ բոլորին հետ, ես ալ, մաղթեմ, որ հայը միշտ հարուստ մեայ Զեղմով։

Արգիական յարգանքներով  
ԳՈՒԻՐԴԵՆ ՄԱԿՐԱՄԱՐԵԱՆ



Հալէս, 25 Հոկտեմբեր 1929

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուրեան

Պատրիարք Հայոց Ա. Երուսաղեմի

Սրբազն Հայրիկ.

Նորին Սրբազնութեանդ Քահանայութեան Յիսուսամեայ Յորելեանին առթիւ զգացած ուրախութեանս չափն ու սահմանը՝ Զեր հմայքին և անխսնչ գործունէութեան համեմատական է. արդարեւ կեանք մը բեղուն և արգիւնաւոր՝ լի տքնաջան աշխատութեամբ ամէն մարզի մէջ զրեթէ աննման աստիճանով. իրեւ կրօնական՝ ապրեցաք գերազանցապէս օրինակելի, եղալիան և անբասիր. իրեւ ուսուցիչ՝ յարատեւ և խզճամիտ, անհաւասարելի կերպով տիպար. իրեւ պատմագիր եղաք ներհուն և հեռատես. իրեւ խմատասէր՝ խորաթափանց և մանրազնին. իրեւ բանաստեղծ՝ ինքնատիպ և զգայուն. իրեւ քարոզիչ՝ պերճարան և վեհմատա, իրեւ լեզուագէտ-բանաւէլ՝ հմուտ և խորազնին, տարիներու ծանր բեռան տակ կքած՝ կարծես կ'երթասարդանաք հոգեկան նոր աւելնով և աշխատելու անսահման փափաքով առցուն։

Զեղի յատուկ բարոյական կորովն եւ ուսուցանելու անշէջ եռանդը՝ չանյայտանար երեք Զեր բազմերախտ աշակերտին յիշողութենէն՝ ցորչափ կը չնչէ ան, եւ յիբաւի պիտի չի կրնամ երեք ձերբազատուիլ այն խանդագատ. ողիի աղղեցութենէն որ Զերն է, Զեղ կը յատկանչէ եւ տեւական հետք մը պիտի ձգէ սերունդէ սերունդ, իրեւ կամուրջ գործածելով Զեր անթիւ սաները։

Նիւթեական գնահատում մը՝ որչափ ալ մեծարժէք և սրտաբուխ ըլլայ, պիտի չկրնայ երեք արտայատել այն վսեմ ուխտը, որով աղզային ծառայութեան նուիրական գործին տրամադրած էք ինքզինքնիդ կէս գարէ լիվեր, հազուազիւտ յարատեւութեամբ մը։

Սրբազն Հայրիկ, այս հրճուազին օրուան հանդիսութեանց պահուն կ'ապրիմ անուշ եղեմական կեանքը Զեր գաղամեսոիլ սանին՝ անմոռանալի Դարեվանքին, ուր նահապետական սեղանին շուրջ կը վայելէինք Զեր յանկուցիչ չունչին հմայքը՝ կազդուրիչ և

ի հիմայ որ կը տոչորիմ կարօտովք անցեալի գրաւիչ յիշատակներուն, չեմ կրնար ինքզինք զսպել յետադարձ ակնարկով մ'ըմբոշխնելու հուըքը հմայիչ հառատատութեան մը՝ որու հոգին եղաք ընդերկար, և որ, աւա՛ղ, ոչ ես է հիմայ. բայց ուշ բախ ենք որ անոր հոգին Զեղմով կ'ապրի և կը սաւառնի տէրունական Ս. Տեղեաց վրայ միշտ արթուն՝ յաւէտ եռանգուն:

Օգտուելով Զեր երջանիկ Յորելեանին տոթած ցնծութենէն՝ պիտի խնդրէի Ամենաշալէն՝ Հնորհեկ մեզ ընդերկար այն աննման անձնաւորութիւնը, որ Զերն է, և որ իր պատանութենէն ի վեր լոյս սփռած է իր շուրջը երփներանդ փարոսի մը պէս և չյոզնիր բարերարելէ իր բարոյական զաւակները՝ որոնց բարզաւաճան նուիրած է իր անձը յաւէտ:

Արդ, Մրբազան Հայր, մատչելով ի համբոյր Զեր Մրբազնութեան Ս. Աջոյն՝ կը խնդրեմ ընդունիլ Զեր նախկին անհշան սանին անհուն մազթանքներն ու սրտապին չնորհաւորութիւնները:

Զեր խոնարհ ծառան  
ՄԻՍԱՅԻ ՔԵԼԵՇԵԱՆ



ՏԵՂԻԿԵՐԱՎՈՒԹԻՒՆ  
ՊՕՂԱԾԵԱՆ Ա.Չ.Դ. ԵՐԿՈՒԵԴ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ  
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Աղեքսանդրիա, 25 Հոկտ. 1929

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Առաքելական Սթոռոյն

Ս. Երուսաղէմի

Բարձրաշնորհ Մրբազան Յորելեա՛ր,

Աղեքսանդրիով Պօղոսեան Աղդ. Երկսեռ Վարժարանի և Մելքոնեան Մանկապարտէզի կրթական ամբողջ պաշտօնէութիւնը Զեր Բարձրաշնորհ Մրբազնութեան Յիսնամեայ Քահանայութեան Յորելեանին առթիւ, հայ ժողովրդեան՝ մասնաւորաբար եկեղեցականութեան և մտաւորականութեան զանազան աստիճանի և դասակարգի ներկայացուցիչներու՝ հոգեոր մշակներու, բանաստեղծներու, բանաստեղծներու, մատենագիրներու և առհասարակ գրատէրներու և գրագէտներու կարգին՝ մասնաւորապէս և յատկապէս կ'ողջունէ այսօր՝ յանձին Զեր յիսնամեայ բազմարդիւն ծառայութեամբ վաստակաբեկ Ամենապատութեան՝ հայ ճշմարիտ դաստիարակը և գրական մշակը, և խորին հիացումով ու անվերապահ նուիրումով կը խոնարհի Զեր բազմարդուն կեանքի գործունէութեան վեհաչուք կոթողին առջե, և կը մատուցանէ իր պատկառանքի և երախտազիտութեան ջերմագին զգացումներուն հետ՝ սրտեւանդն չնորհաւորութիւններն ու մազթանքները Զեր Մրբազնութեան թանկազին կեանքի երկարութեան և երկարաւու հոգուութեան և հովանաւորութեան բուռն իղձերով, յօդուատ և ի բարեղարդութիւն Ս. Յակովեան հընամենի վանուց և պատկառելի Միաբանութեան:

Մատչելով ի համբոյր Զեր Մրբազնութեան նորհազարդ Աջոյն և խնդրելով Զեր աղօթքըն ու հայրական օրհնութիւններն ամէնքիս և մեր Վարժարաններու ազգային մանկուոյն, ամենախորին ակնածութեամբ եմք և մամդք

Զեր Մրբազնութեան անձնուէր և խոնարհ որդիք

Ուսուցիչ-Ուսուցուհիք Պօղոս. Աղդ. Վրժ. կ. և Մելքոնեան Մնկպրտէզի.

Գ. ՊօՅԱՃԵԱՆ Վ. ՅԼՐՊԼՏԵՐԵԱՆ Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ Ա. ՊՈՒՏՍԱԳԵԱՆ

Վ. ԱՐՄՐՈՒԵՆԻ Ռ. ԶԼՅԹՈՒԵՑԵԱՆ Ս. ՇՈՏԱԽԵՑԵԱՆ Ա. ԹԻՐԵԱԲԵԱՆ

Զ. ՊՕՂՈՍԵԱՆ Հ. Ա. ԳՈՒՅՈՒՄԵՑԵԱՆ Յ. ԶԼՅԻՒՐԵԱՆ Կ. ԴԱՄԻԿԵԱՆ

Յ. ՄԱՀՏԵՍԵՍԵԱՆ Մ. Կ. ՃԻՂՄԵՃԵԱՆ Կ. ՃԻՂԻՆԵԱՆ Վ. ԶԱՐԱՐԵԱՆ

Զ. ՍԵՖԵՐԵԱՆ Վ. ՍՊԱՐԹԱԼԵԱՆ Ս. ՄԻԱԼԵԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ ՓԱՆՈՍԵԱՆ

Ա. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ս. ՏԵՂԻՐՄԵՆՃԵԱՆ Ա.Ի.Ս ԱՃԵՄԵԱՆ

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒԻՐԻ ՀՈՅԱՅ  
ՍԹ. ՀՈՅԱՅ

Մի. Զակօրա, 25 Հոկտ. 1929

**Ամենապատիւ**

S. S. Եղիչէ Ս. Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Առաքելական Մայր Աթոռոց

Երուսաղէմ

Բարձրաշնորհ Արքազան Հայր.

Սրտի անհուն բերկուանքով, մաժուլէն կը անդեկանանք թէ՝ մատերս կը տօնուի Զերպ Ամենապատուոթեան Քահանայական Յիանամեակը:

Այս առթիւ, որքան կը խայտան մեր հաղիները և մեր էութիւնները, ցնծոթեան գրոշ պարզելով՝ ներկայով կուգանք մեր որդիսկական անկեղծ չնորհաւորութիւնները ներ-կայացնելու յաս Զերդ Արքազնուոթեան և ի սրտէ մաղթելու որ Տէրը անսասան պահէ կապինելու յաս Զերդ Արքազնուոթեան, որպէսզի իրեւ անձնուէր պատրիարք Առաքելական Մայր Զերդ Ամենապատուոթենը, որպէսզի իրեւ անձնուէր պատրիարք Առաքելական Մայր Աթոռոց, անշահախնդիր կղերական, գաստիարակ, բանաստեղծ, լեզուագէտ ու իմաս-տասէր, այս օտար ափերու վրայ մեզի միսիթարութիւն ունենանք Զեր հայրական թան-կապին խրատները, զրութիւնները, որոնք կուգան ներկայի հայ կղերին զրական զոհար-ները ըլլալու և տարիներու դժբախտութեանց ընթացքին շիջելու մօս եղող հայ զրա-կանութեան լուսաւոր կանթեղը ու զարդը ըլլալու: Նոյնպէս ի սրտէ կը մաղթենք, որ բաղզը ունենանք Զեր Քահանայական Հարիւրամեակը տօնելու:

Ամենապատիւ Արքազան Հայր, հաճեցէք այս առթիւ ընդունելու մեր որդիսկական շերմ չնորհաւորութիւնները և թոյլ տուէք խորին ակնածանքով մատչելու ի համբոյլ Ս. Աջոյ Զերոյ:

(ԱԿՏԵՐ)

Որդիսկան յարգանքներով՝

Ի զիմաց Թաղ. Խորհրդոյ Հայոց

Սթարա-Զակօրացի (Պուլկարիա)

Ամենապատիւ՝ Ամենապատիւ՝

Կ. Գ. ՔերիՄեԱն

ԽՍ.Զիկ ՓԱՓԱԶԵԱՆ

Պուրկազ 25 Հոկտ. 1929

Ամենապատիւ S. S. Եղիչէ Արքեպիսկ. Դուքեան

Անկուգական Պատրիարք Հայոց

Ս. Երուսաղէմ

Ամենապատիւ Արքազան Հայր

Վաղն ի Ս. Երուսաղէմ, ի Սովիտ և բոլոր Պուլկարիոյ քաղաքներն կը տօնեն Մեծ Յորելեարիդ յիսնամեակն. բախտին դժբախտ մի՛ զուգազիզութեամբն չը պիտի կրնամ ո՞չ մէկին անձամբ ներկայ գտնուէլ, զի վաղն առոտու իսկ կնոջս ու աղջիկներուս հետ կը մեկնինք յԱղէքսանգըիա, շարունակելով մեր տարագրեալի կեանքն եւ ուղղուելով գէպի անձանօթ:

Թէւ անձամբ չը պիտի կրնամ ներկայ գտնուէլ, բայց բոլորիւ սրտիւ ներկայ պիտի ըլլամ այդ հանդիսութեանց, որք անդի պիտի ունենան Մեծ Հայուն, սրբակրօն բարձ-րաստիճան կրօնաւորին, հանճարեղ զրագէտին, հողիներու վրայ իշխող բանաստեղծին և համեստութեան ու պարկեշտութեան հազուազիւս ներկայացուցին ի պատիւ:

Կը չնորհաւորեմ, Արքազան Հայր եւ կը բարեմալթիեմ որ Զերդ բարձր Արքազնու-թիւն ապրի յամս երջանիկ ու երկար կատարեալ երջանկութեամբ և գայելէ տառապեալ ու կոտորեալ Հայութեան երջանկաւէտ օրերն աեսմալու:

Ես և ընտանիքս մատչելով ի համբոյր սուրբ և պատուական աջիդ, կը խնդրեմք որ Զեր Ս. օրհնութիւնները անպակաս ընէք մեղ համար եւս:

Մնամ Ամենապատիւ Արքազնութեանդ խոնարհ որզի՝  
ՅԱԿՈԲ ՀԱՄԱՄՃԵԱՆ

ՄԻՒԽՈՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԱՌԻԹԻՔԻՆ

Ի ՊՐԵՆԱԿԱ

թ. 229

Վելինա, 26 Հոկտ., 1929

Առ Ամենապատիւ և Սրբազան

Տ. Եղիշէ Եպ. Դմիտրեան

Պատրիարք Հայոց Ա. Երուսաղէմի

յերուսաղէմ

Արհապատիւ Յորելեար.

Կարաձմենն ձմենները որթակոտոր ըրին Հայ Անդաստանը և Այգւոյն տէրը սկով համակուեցաւ ի տես կարկոտահար Այգւոյն:

Բայց ուրախութիւնն է սղաւորին երբ յաջորդող գարնան նկատէ իւր Այգւոյն մէջ Մշակներ, որոնք անցեալէն փորձառու և աննկուն իրենց ջանքերու մէջ, անձնատուր են վերակենդանացնել Արդին և հետախաղալ ջնջել աւերին նշարները:

Միմիթարեան Միաբանութիւնն խնդակից Աղդին հետ, ի Զեղ, Սրբազան Յորելեար, կը տեսնէ Հայ Այգւոյն վաստակաէր Մշակը: Դուք անցեալի մէջ նուիրեցիք Զեր կեանքը այդ Այգւոյն ի բարգաւաճանն, և ներկայիս կը վաստակիք անձնազոհ նոյն առարկէզի վրայ, մոռացնել տալու մորմոքեալ սրտերու ցաւն ու կակիծը, զուարժ ապազայի յուսով խրախուսելու վշահարը:

Բովանդակ Աղդը երախտագէտ ունիք Զեր քրտինքներուն, առ Զեղ կը հոսեն ուղարէն անկեղծ զգացումներու և սիրոյ իդձերը:

Բարձր զնահատելով Սրբազան Յորելեարիդ 50 ամեայ գարուններու վաստակը, հովուական և գրական ասպարէզներու վրայ, կուգամ թարգմանը ըլլալու Միաբանութեանս իդձերուն և չնորհաւորական զգացումներուն հանդէպ Սրբազան Յորելեարիդ, անկեղծ մաղթանքներով, որ հաճի Ամենատէրն չնորհել վաստակաւորիդ յամայր ամս, հանդերձ առողջութեամբ ի միմիթարութիւն Աղդիս:

Հաճեցէք ընդուննել անկեղծ զգացումներու հետ, խորին մեծարանաց հաւաստին, որով եմ

Զերդ Սրհապատիւ Սրբազնութեան  
Խ. Ծ. և ԱղօթարարՀ. ՎԱՐԴԱՆ Վ. ՄԵԼԻՔԻՍԵԴԵԿԵԱՆ  
Աթոռակալ Միմիթարեան Միաբանութեան

D. TCHITOUNY

139, Av. de la Gare, 139  
ER ՀՕՆՏ (Տ.-&-Օ.)

Փարիզ - Էրման, 26 Հոկտեմբ 1929

Գերաշնորհ Նախագահ

Դուրեան Սրբազանի Յորելեանին

Երուսաղէմ

Հիացումն ու յարգանքներս,

Վարդապետ, քարոզիչ, գասագիր, ուսուցիչ, հեղինակ, բանասէր, լեզուագէտ, բանաստեղծ, իմաստասէր, տեսուչ, եպիսկոպոս, կրկնակի պատրիարք, թեկնածու կամողիկոս, անբասիր եկեղեցական, ու բազմահմուտ զրագէտ,

Եղիշէ Սրբազան Դուրեանին,

Որ եթէ ապրած ըլլար մեր Ուկեղարու «Թարգմանչաց» մեծ չըջանին, — Մագիստրոսական տիտղոսներով, անյալր, մեծ, ընորհալի մակղիններով մկրտուած, ու Հայ Եկեղեցւոյ սուրբերուն կարգ գասուած պիտի գտնէինք իր պատկառելի անձն ու անունը:

Խոհարհաբար  
ԶիթՈՒՆԻ

ԱԺԴԱԿԸՐ

ՕՐԱԹԵՐԹ  
ՆԱԼԱՔԻԱ

Կ. Պոլիս, 26 Հոկտ. 1929

## ԱԺԵՆԱՎԱՄԹԻւ

Տ. Եղիշէ Արքեպակ, Դուրեան

Արք. Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Արքազան Հայք,

Զեր Յոքելեանին առթիւ ոչինչ ունիմ աւելցնելիք այն տաղերուն վրայ, զոր հրատակեցի կամ զբեցի Ազգարարի մէջ, իրիւ տար թերթին խմբագրապետը: Միայն կ'ուզեմ յիշեցնել Զեր Սրբազնութեան, թէ անձնապէս ալ հաճելի տպաւորութիւններ ունիմ Զեր կեանքէն:

Եթէ չէք մոցած, ընդհ. պատերազմի ընթացքին, Պ. Խօճասարեանի տնօրէնութեան օրով, կասեանի մէջ Զեղի պաշտօնակից ըլլաւու պատին ունեցած եմ: Այդ միւ ջոցին, չափազիութիւն կ'աւանդէն և առիթ ունեցայ Զեր խոր հմտութիւնը տեսնելուն այդ գիտութեան զլմաւոր սկզբունքներուն վրայ:

Եօթը տարիէ ի վեր կը վարեմ Ազգարար և ինձի համար անկեղծ բարեբախտութիւն: մը եղաւ որ կրցայ յօդուածներով եւ խմբագրականներով հիացումս յայտնել այն մեջ մարդուն, որ Եղիշէ Դուրեան կը կրչուի:

Կ'ուզէի այօր հեռազբել, բայց դժնդակ պայմանները արգելք կը հանդիսանան: Այնպէս որ, ստիպուեցայ այս երկոտող փութացնել, անզամ մըն ալ չնորհաւորելու համար յոքելեանը, որուն այնքան արժանի էիք: Այս ազգը կրնայ պարծիլ Զեր անձով և զործով:

Ակնածանքով կը համբուրեմ Զեր Ս. աջը  
ՄԱՆՈՒԻ ԱՍԼԱՆԵԱՆ



Գանտիա, 26 Հոկտ. 1929

## ԱԺԵՆԱՎԱՄԹԻւ

Տէր Եղիշէ Արքազան Արքեպիսկոպոս Դուրեան

Պատրիարք Հայոց Սուրբ Երուսաղէմի

յերուսաղէմ

## ԱԺԵՆԱՎԱՄԹԻւ Արքազան Հայր

Յիսուն տարիներէ ի վեր զբական ու կրօնական ասպարէզի մէջ եւ Ազգին ցարդ անհամար ծառայութիւններ մասուցած անխռնչ վաստակաւորի մը Յոքելեանի առթիւ երբ սովորութիւնը կը պահանջէ որ՝ նոյնիսկ իրարու բոլորովին անտարբեր անձեր տեսակ յարգանքներ ու բարեմաղթութիւններ կ'ընեն, չատ տարօրինակ պիտի ըլլար Ամենապատիւ Ազգականի մը մասին լուռ մատ:

Այն օրը, թերթիւ մը մէջ երբ առաջին անգամ տեսայ Զերդ Ամենապատուութեան Յոքելեանի թուականը, չի մոցայ երբեք, եւ ի յիշատակ մէր ընտանիաց վաղեմի սիրայն՝ այս քանի մը տողը Զերդ Ամենապատուութեան Յոքելեանին առթիւ զրելու հաճոյքն ունենալով հանդերձ, պիտի խնդրեմ որ հաճէիք ընդունիլ մէր անկեղծ չնորհաւորութիւնները, մաղթելով նաեւ երկար կեանք ու յարատեւ յաջողութիւններ:

Արդիական ակնածանք և Սուրբ Աջին համբուրմամբ

Մնամ խոնարհ ծառայ  
ՄԿՐՏԻՉ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ



ԱՅ ԶԵՂԻ ԱԿԱՐ ԵՐԿԱՐԱԿ ՎԱՐԺԱՐԱԿ  
ԵԽ ԶՕՐ ԱՆԴ ՄԱՆՎԱՐԱՏԷԶ  
ՊԼՅՈՒԹ (Լիբանան)

Պէլլութ, 26 Հոկտ. 1929 :

Ո Ւ Ղ Ե Բ Ռ Զ

Առ Շնորհալի Յորելեար

Ամեն, Տ. Տ. Եղիշէ Արք - Եպիսկոպոս Դուրեան  
Հանձարալոյս Պատրիարք Հայոց  
Սրբոյն Երուսաղէմի

Ո՞վ սրբահուր խանդ լուսաղեղ՝ մարմնացեալ,  
Ո՞վ ասալ պայծառ չուշանաշող երկնափայլ,  
Յօդ գըպրութեան և կրօնի ծածանեալ  
Սրբուես չնորհ պերճացոլակ, անալլայլ:

Ո՞վ Յորելեար, Հայր Դուրեան՝  
կեա'ց յար անշէջ յաւիտեան:

Ո՞վ կենսաբոյր բերան սոկի գերազան,  
Ծաւալող սուրբ երանութեան ծիածան,  
Քարւոյն, գեղոյ, ճըշմարտութեան սըրբազան  
Ճառագայթող արշալոյսներ զանազան:

Յարգանք բանիցդ սուրբ, բուրեան՝  
Ո՞վ պերճախօս Հայր Դուրեան:

Ո՞վ հըրեշտակ գերաթըսիչ լուսաւոր,  
Որ սոկեփայլ չողացուցեալ քո չեփոր  
Հընչեցնես Սիրոյ երգը քացրուոր,  
Յապուշ կըրթեալ լըսողները զայն բոլոր:

Պատիւ երգոցդ սուրբ, բուրեան  
Ո՞վ հոհտոր մեծ Դուրեան:

Ո՞վ պերճալոյս քնարերգու սուրբ հանճար,  
Որ գերացեալ յար վեհութեան ի կատար,  
Յիսուն ամեր ածեցիր միշտ սուրբ Քընար,  
Հիանրաշ են քո տաղեր և անճառ:

Պատիւ՝ ոգւոյդ սուրբ, բուրեան  
Ո՞վ բանաստեղծ Հայր Դուրեան:

Ո՞վ առաքեալ զերդ Տեառնեղբայր՝ ի Սիօն  
Սըրբազարդեալ պատարազես երը ի Տօն  
Քե կը պանծայ, պայծառազեղ սուրբ կրօն,  
Ուրախանայ եկեղեցին, օն և օն:

Փառք շընորհացդ սուրբ, բուրեան  
Ո՞վ ճըշմարիտ Հայր, Դուրեան:

Մեծդ Յորելեար, յաւէտ պարծանք ես Ազգին,  
Շուրջըդ փայլող սուրբ ցոլքերով քո կեանքին,  
Յիսուն ջաներդ՝ անշէջ լոյսիդ՝ թանկազին  
Մին քան ըզմիւս կենսանշոյլ, սիրածին:

Պատիւ կեանքիդ աննըման,  
Կեցցե՞ս Հայրիկ մեր Դուրեան:  
ԳիլլՍլէդԱ



ԷՍՈՅԱՆ ԱԶԳ. ԵՐԿՐՈՒԹԻՎ ՎԱՐԺԱՐԱՌԱՆ

Հաստատեալ 1895 ին

ՏԵՂԻՆԱՌՈՒԹԻՎՆ

ԹՂԱ 431

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուռեան

Արժանընտիր Պատրիարք Հայոց

Ա. Երուսաղէմի

Սիրելի Արքադան Հայր,

Զեր Քահանայութեան Յիսնամեայ Յորելեանին առթիւ՝ երբ այս պահուս ամէն կողմ՝ Զերդ Ամենապատութեան Քարոզչական, Գրական, Բանասիրական եւ ուսուցչական բազմակողմանի եւ ամենաբեղուն գուծունչութիւնը կը պանծացնէ ի սփիւռս աշխարհի սփոռուած Հայութիւնը, թոյլ տուէք ինձ՝ Զեր հին համեստ աշակերտներէն մէկուն, որ պէսզի վեր հանեմ Զերդ Արքադնութեան մէկ ուրիշ թանկազին հանգամանքը, որ ըստ իս՝ վերե յիշուածներէն ոչ նուազ մեծ բարիք մը, ոչ նուազ փայլուն պարզե մը եղած է Զեր հասցուցած բազմահազար աշակերտներուն համար: Այդ հանգամանքը Արքադան Հայր, կը խորհիմ թէ Զեր աննման դասիարակի հանգամանքն է, ցեղը կրթելու, ու նուացնելու, վեր բարձրացնելու գաստիարակչական այն վսեմ հոգին է՝ որ կը ներշնչէ Պերճախօս Քարոզիչը, նուրբ Գրադէալը, Շնորհալի Բանաստեղծը և Ներհուն Ռւսուցիչը:

Այդ միենոյն հոգին է որ նոյնպէս հմայած է ու կը հմայէ Զեր գաստիարակած բազմաթիւ ուսանողական սերունդները, այդ միենոյն վսեմ հոգին է որ խաղաղեցուցած է ու կը խաղաղեցնէ վրդովուած միտքերը, այդ միենոյն հոգին է որ սէր և պատկառանք միանգամայն ներշնչած է ու կը ներշնչէ իր անմիջական ըրջապատին մէջ թէ հեռու ները, ամէն կողմ՝ անխտիր:

Թոյլ տուէք ինձ առեմն, Սիրելի Արքադան Հայր, որ իրբե հազարէ աւելի երկուս հայ մանուկ եւ պատանի հոգիներու գաստիարակութեսն գործին լծուած համեստ գաստիարակ մը, և Զեր հին մէկ աշակերտը, պատկառանքով խոնարհիմ Մեծ Գաստիարակիդ այդ Մեծ Հոգիին առջեւ, եւ ի սրտէ մալթեմ Տիրոջմէն, որ այդ վսեմ հոգին տակաւին չա'տ երկար տարիներ ներշնչէ բոլոր հայ գաստիարակները և համայն ցեղը՝ որպէս ի սպաս գրիք Դուք յիշուն երկար տարիներէ ի վեր Զեր ազնուական միտքն ու զգայուն սիրտը:

Այս զգացումներով տողորուած կը փութամ հոգեին շնորհաւորել Զեր Ամենապատութեան Յիսնամեայ Յորելեանը եւ պատկառանքով համբուրել Ս. Աջը:

Որդիական ամենախորին ակնածանօք

26 Հոկտեմբեր 1929

Ա. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Տնօրին Էսական Ազգ. Վրձաց. Բերայի

Առաքելաշնորհ

Տ. Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմայ,

Արքադան Հայր,

Երբ աշխարհի չորս ծագերուն մէջ գտնուած հայորդիները որդիական անխառն ցընծութեամբ մը արժանաւորապէս կը տօնին այսօր բազմարդիւն գործնէութեանդ յիսնամեայ յորելեանը, երբ բանգէտն ու անգէտ սրտարուխ մալթամանքներով կը պանծացնեն

անունդ՝ դասելով քեզ մեր այնքան երջանկայիշատակ առաքեաներու կարողը, երբ հաւատացեալն ու անհաւատն միանդամայն խնարճելով պատկառազգու հաւատքիով եւ այն հաւատքին ներշնչած հոգեկան բարձրութեանդ առջե՝ հոգեպարար զմայլանքով մը կը վերլուծեն սրբավայել կենցաղիով մէն մի անկիւնագարձը, ստորագրեալու՝ իրբեւ մէկ խոնարճ եւ յետին անդամը քեզ ծնունդ տուող մէծ գերգաստանին, այս փղձկեցնող եւ անօրինակ համակրական արտայայտութեանց ի տես չի կրնալով լուռ հանդիսատեսի մը գիրքին մէջ մնալ, կուզամ կեանքիս սա վերջին հանգրուանին մէջ գուցէ վերջին պատճեռքիւն մը այդ արտայայտութեանց միացնել նաև՝ ներկայ թոթով լեզուովս արտարերուած ծերունի սրտիս անկեղծ զգացումները եւ չնորհաւորութիւնները

Մնալով միշտ կարօտ Արբազան օրհնութեանցդ,

Ազօթարար արեւշատութեանդ եւ ի համբոյր Ս. Աջոյդ  
Բերնիջ Յավշանէս Դոկտորնեան

A. MIKAELIAN  
Candie, (Crète)

26, Հոկտեմբեր 1929

Ամենապատիւ

Տ. Տ., Եղիշէ Ս. Դուրեան

Արժանընախիր Պատրիարք Առաքելական Աթոռոյ  
Ս. Երուսաղէմի

Ամենապատիւ Արբազան Հայր.

Զեր Արբազանութեան Քահանայութեան Յիսնամեայ Յորելեանին տարւոյս վերջերը տեղի ունենալիքը վեր վար տարի մը առաջ ազգային թերթերու մէջ կարգացեր էի:

Այսօր Աթէնքի Շեոր Օրոյի մէջ տեսայ յայտարարութիւնն մը, որով կը ծանուցուի թէ վազը Աթէնքի մէջ պիտի կատարուի Յորելինական հանդէս մը, ի պատիւ Զեր Ամենապատութեան Քահանայական Յիսնամելին, և իրաւամբ կ'ենթաղընեմ որ Երուսաղէմի մէջ ալ գուցէ վազուան օրը տեղի պիտի ունենայ Զեր Արբազանութեան արդիւնաշատ և անբասիր Քահանայութեան Յիսնամեայ Յորելեանի փառաւոր հանդէսը, և կը փութամ իմ և իմիններուս ջերմագին չնորհաւորութիւնները մատուցանել Զերդ Ամենապատութեան՝ արեւշատութեան և բարօրութեան անկեղծ մաղթանքներով։

Զերդ

ՅԿԲ. ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Զահէ, Լիբանան, 26 Հոկտ. 1929

Ամեն. Ե. Ս. Արքեպոս. Դուրեան

Առաքելաշնորհ Պատրիարք

Երուսաղէմ, Պաղեստին

Ամեն. Ս. Հայր.

Մեզի համար անգուգական տոիթ մըն է խնդակցիլ Զեր Քահանայութեան Յիսնամեայ Ռուկի Յորելեանին համար։ Այս տոթիւ ընդունեցէք նաև մեր անկեղծ չնորհաւորութիւնները։ Զեզի երկար կ'եանք և երջանիկ տարիներ ցանկանալով կը մաղթենք տօնել նաև Զեր ագամանդեայ Յորելեանը։

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ  
ՄԱՆՈՒԿ ԳԵՐՉՈՒՄԵԱՆ

(Ժառանգաւորաց ուսուցիչ  
Կ. Յարութիւննեանի հօրեղբայրը)

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՐՄ ՀԱՅՈՑ

Գահիրէ, 26 Հոկտեմբեր 1929

ԳԱՅԻՐԷ

## Ամենապատիւ.

Տ. Տ. Եղիչէ Ս. Արքեպ. Դուռիան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

Զեր քահանայական ձեռնադրութեան լինամեակը, որ այսօր կը տօնուի համապատասխանքի արտայայտութիւններու մէջ, արժանաւոր վարձատրութիւնն է որ ազգը կ'ընծայէ Զեր Ամենապատութեան, Զեր բեղմաւոր զործունէութեան համար և միւնոյն ատեն զրաւականը և տրիտուրը այն յարգանքին, որ ունի ազգը հանգէպ Զեր Սրբազնութեան իր զրչի մշակի և ամենահճուտ բանասերի:

Դուք կէս դարու պատկառելի ժամանակամիջոցի մը մէջ, այս ազգին լեզուն մանրագին կերպով ուսումնասիրեցիք և անոր մատենագրութեան վերլուծումը կատարեցիք, խոր հմտութեամբ մը որ անհաւասարելի է:

Իր զարգապետաց վարդապետ, իր քահանայապետ, իր պետ վանական հաստատութեան մը, որ կընայ լուսաւորութեան կեդրոն մը ըլլալ միայն և միմիայն Զեր իմաստուն առաջնորդութեամբ, ազգը տակաւին ջեղմէ կ'ակնկալէ բազմաբեղուն արգիւնքներ:

Մաղթելով որ ազգին բոլոր այս ակնկալութիւնները լրանան, Աստուածային օժանդակութեամբ, կը մատուցանեմ որդիական ակնածանացս հաւաստիքը:

ԱՐՃԱԿ ԱԼՊՈՅԱԶԵԱՆ



ԽՄԲԱԳԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Beyrouth le 26 Հոկտ., 1929

«ԼԻՔԱՆԴԱ»

ԶԷԶՈՔ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՅԻՐԻ

## Ամենապատիւ.

Տ. Եղիչէ Արք. Դուռիան

Արժանընտիր Պատրիարք Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռոյ յերուսաղէմ

Զեր Ամենապատութեան Քահանայական լինամեայ զործունէութեան, զոր լուսապատին անրիծ անուն մը և սրբակեաց կեանք մը, յորելինական հանդէսին առթիւ, «Լիքանան»ի Վարչութիւնս կուգայ յայտնել իր ամենասանկեղծ շնորհաւորութիւնները, մաղթելով բարերաստիկ և երկար կեանք Ս. Յակոբեանց Աթոռոյ արժանընտիր Փահակալիք:

Համազգային խանդավառ ու անհախընթաց յարգանքը, որ յորելինական փառաւոր հանդիսութեամբ մը կը պատկուի, իրական վարձատրութիւնն է Ամենապատութեանդ լինամեայ անրիծ ու անձանձիր նույիրումին: Ցեղը հպարտ է Պատրիարքական զոյգ Աթոռներով Զեր Սրբազնութիւնը պատուելէ վերջ, արագուան գերազոյն յարգանքի միջոցաւ յաւերժացնելով Զեր անազարտ անունը և սոկեղաբեան սոկեղինիկ արժանիքը, որու անմահ յուշարձանները ըլլալու կոչուած են «Դուռիան Մատենագարանն» ու «Դուռեան Մատենաշարը»:

Բարերաստիկ օրերու մաղթանքներով և համբուրիւ Ս. Աջոյդ

Ի դիմաց

(ԱՆԻՔ)

«Լիքանան» Հայաթերթի Վարչութեան

Յ. ՊԱԼԵԱՆ

ԱՐԱՋԱԾԱՅԻ ՄԻՒԽԻԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԵԱՑ  
Կ. ՊՈԼԻԱ

Կ. ՊՈՂԻԱ, 26 Հոկտ. 1929

ԲԵՐԱ

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպսկ. Դուքեան

Արժանընտիր Պատրիարք Առաքելական

Մայր Աթոռոյ Սրբոյն Սաղմայ:

Զեր Բարձր Ամենապատութեան Քահանայութեան Յիսումետելին առթիւ այսօր Ա. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ կատարուած Յորելինական հանգիստութեանց Պոլսոյ Երաժշտապետաց հեր մեր մասնակցութիւնը բերելէ վերջ, կուգանք յայտնել մեր ամենազերմ չնորհաւորութիւնները, որդիական մաղթանքներով Զերդ Ամենապատիւ Սրբադնութեան երջանկաբեր կեանք եւ արեւշտութիւն մաղթելով:

Համբուրիւ Ս. Աջոյդ մնամ որդիական ակնածանօք

Բանկալթիի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Երաժշտապետ Գրիգոր Կիկիլիշիշեսն



## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպսկ. Դուքեան

Արժանընտիր Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի

յԵրուսաղէմ

## Առաքելաշաւիդ Սրբազն Հայր

Ինչպէս Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ տօները աշխարհի ամէն կողմերը միեւնոյն թուականին ու միենոյն օրը կը տօնուին, այսօր ալ Զեր Քահանայութեան յիսնամեակը ուր ուրեք որ հայ ու Հայ Եկեղեցի կայ մեծ ինպութեամբ կը տօնուի:

Սոյն յարգանքի իրաւամբ արժանի եղած էք Զեր առաքելաշաւիդ գործքերովը իր ուսուցիչ, քահանայ, բանին կենաց քարոզիչ, եպիսկոպոս, առաջնորդ ու Հայ Եկեղեցւոյ տօնմիկ թարգմանիչ Ս. Վարդապետաց ճշմարիտ հետեւող ։

Էնդհանրապէս Հայ Ազգիս, մասնաւորապէս Ս. Յակոբեանց մարանութեան յարգանքի ու ուրախութեան այս բարեբաստիկ օրուան տօնին ի սրտէ մասնակցելով՝ կը փութամ խոնարհաբար չնորհաւորել մեծ-Յորելեարգ, մաղթելով Աստուծմէ Զեզի երկար ու առողջ կեանք ի շինութիւն Սուրբ Եկեղեցւոյ, ի բարօրութիւն Ս. Աթոռոյդ եւ յօգուտ Ազգիս։

Մատշելով՝ ի համբոյը Ս. Աջոյդ և խնդրելով հայրապետական օրհնութիւններդ եմ ու կը մնամ միշտ

որդիական ակնածանօք  
ՄԻՍԱԳ ԳԱԶԱԶԵԱՆ

26 Հոկտ. 1929

Աղեքսանդրիս



## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուռեան  
Պատրիարք Արքոյ Երուսաղեմայ

## Սրբազն Հայր :

Զեր քահանայութեան յինամեակը զոր հայութիւնը կ'ողջունէ այսօր, խանդով և հրձուանքով կը լեցնէ ամէն ազգայինի սիրաբ:

Յիսուն երկար տարիներ գուք նույիրուեցաք այս ցեղին, ուսուցանելով, քարոզիով և երկասիրելով:

Այն կինդանի կոթողները, Զեր արժանաւոր աշակերտները, որոնք ի սիմվոլ աշխարհի այսօր, սպասաւորելով ազգին և եկեղեցւոյ և որոնց նահատակ մէկ խումբը՝ իրենց արեամբ փախարինեցին ի՞նչ վաստակ որ տաճած էիք իրենց համար, այն հրաշալի քարոզները որ Զեր առանձնայատկութիւնն են և Զեր գրական գոհարները, որ կը զարգարեն հայ գպութեան բազմազան էջերը, Զեր պանծալի անունը իրաւամբ եւ անջնջ զրոշմած են ամէն Հայու սիրաբ:

Այսօրուան պէս կը յիշեմ Իզմիր, քսան տարիներ տառաջ՝ Վարդանանց տօնի հանգէսին Զեր մէկ ատենախօսութիւնը, ուր ըսեր էիք թէ՛ Ազգը ունեցած է բազում մեծահարուստ անձեր, ուր է հիմայ աննոց յիշատակը, և սակայն գարեր կարեր անցեր է կ'ասպի Վարդանայ անունը, որովհետեւ ազրած և մեռած է ազգին համար:

Նոյնպէս ալ գուք, Սրբազն Հայր, յաւէտ պիտի ապրիք Զեր անբասիր եւ անձնագիր հովիւի, հանձնարեղ գրողի և ազգաշին գործիչի բարձր հանգամանքով:

Ի բոլոր սրտէ չնորհաւորելով Զեր սոյն ոսկեղէն Յորելեանը, կը մաղթեմ որ բարձրեալը գեռ երկար տարիներ ամենայն առողջութեամբ պահէ պահանանէ Զեր թանկացին կեանքը:

Մնամ ջերմ համբուրիւ Ա. Աջոյդ

26 Հոկտ. 1929, Աթէնք

Ամենախօսարհ Արքի  
ՅՈՎՀԱՆՆԵԼՈՒ Կ. ՄՄԲԵԱՆ

## Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուռեան,

Պատրիարք Ա. Երուսաղէմի

## Սրբազն Հա՛յր,

Այս ի՞նչ բարի եւ նշանաւոր օր է այսօր: Ամէն կողմէ կուգան Զել չնորհաւորելու Զեր քահանայութեան Յիսուսիակ տօնին առթիւ:

Արժանի էք այս յարդանքին, վասն զի Դուք ամէն ի՞նչ թողուցիք և Յիսուսին հետեւցաք, 50 տարի վարդապետական պաշտօն վարեցիք, սրբազն հովիւ եղաք, արդարութեամբ, անմեղութեամբ, մաքրութեամբ կեանք անցուցիք, Ա. Երրորդութիւնը սիրեց Զել եւ արժանացուց Պատրիարքական Աթոսին, ասիկա մեծ փառք եւ պատիւ է Ասուծածմէ:

Մենք ևս, մեր բոլոր պարագաներով, մեծ և փոքր, կը յարգենք և կը պատուինք Զել: Դրիչս անկարազ է յայտնել մեր զգացումները, բայց Դուք, Սրբազն Հայր, կ'ըգգաք մեր սիրաբ:

Այս զգացումներով կը փութանք չնորհաւորել Զեր Արքազնութեան անուան տօնը, Զեր քահակալութեան տարեգարձը և Զեր յինամեայ յարելեանը, և կ'ազօթենք որ Բարերարն Ասուծած պահէ զԶել ամէն տեսակ փորձութիւններէ, եւ կարողութիւն եւ երկար կեանք առաջ Զել:

Համբուրելով Զեր Ա. Աջոյդ

Մնամ աղախին Սրբազնութեանդ  
(ՕԲ.) ՄԱՐԻԱՆՆԵ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

1929 Հոկտ. 26

Երիքով

Մարտի Հոկտ. 26

Ամենապատիւ

Տէր Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռեան

Երուսաղէմ

Սիրեցեալ Արքազան Հայր .

Զեր հաւատարիմ բարեկամը ջերմաջերմ չնորհաւորութիւններ կ'ընէ Զեր Բարձր Արքազնութեան բարեգաստիկ Յօրեկեանին առթիւ , ո՞ մեծանուն զերյորելեար , կը մաղթէ Զեր Երկար իեանք եւ ամէն բարօրութիւն :

Զեր Արքազնութեան խոնարհ որդի  
Մելլոր ՆՈՒՊԱՐԵԱՆ

Զեր Յորեկեանին արդելք չըլլալու համար որոշեցի Յորեկեանս յետաձգել 1930 Մայիսին :



Ամեն . Տ . Տ . Եղիշէ Ա . Արքեպոսկ . Դուռեան


Հայոց Պատրիարք Երուսաղէմի

Զեր Բարձր Արքազնութեան 50 ամեայ Յորեկեանին առթիւ , իր որդիական բարեմաղթութիւնները կը մատուցանէ , համբուրելով Արքազնութեանդ Ա . Աջը ,

ԲԺ . Յ . Ա . ԱՇԽԵԱՆ

Աթէնք

26 Հոկտ . 1929



Ամենապատիւ Տեառն

Տ . Եղիշէ Արքեպիսկոպոսի Դուռեան

Ա . Երուսաղէմայ Սրդազան Պատրիարքին

Ա . Յակոբեանց Առաքելական Աթոռոյն արժանաւոր Գահակալին

Ինթացողին զհետ ոտից վարդապետի ճշմարտին ,  
Եւ առաջին Ա . Թարգմանչացն ոսկի գրիչ աշակերտին ,  
Աստուածեղէն իմաստութեան ոսկերերան քարոզողին ,  
Ներսիսի Շնորհալւոյն չնորհօքն լի Հայրապետին ,  
Նարեկացւոյն ոգւովի անբիծ մաքրակենցաղ վանականին ,  
Պառնասայ վեհ բարձանց բնակիչ սրտախոռվ բանաստեղծին ,  
Հարցն Գողթան ծնունդ ընտիր բամբահարին ,  
Լեզուաց բազմաց վարժ ի բարբառ լեզուագիտին ,  
Քերթողահօրն Մովսիսի մերում հանդոյն պատմաբանին ,  
Անխոնջ , անդուլ վաստակելոյն՝ բազմահմուտ բանասիրին ,  
Փիլիսոփայ անյալթ՝ աստուածաշունչ աստուածաբանին ,

Որոյ քահանայութեան զյիսնամեայ

Յորեկեան համայն Ազգս Հայոց ,

Որ ի սփիւռս աշխարհի ,

Տօնէ այսօր ցնծութեամբ ,

Մատուցեալ հանդերձ ընտանեօք

ի համբոյր Հայրապետական Ա . Աջոյն ,

Արդիաբար ինզրեմ զօրհնութիւն հայրական :

Մ . ԿԱՊՐԱՇ

Պէլլութ ,

ի իէ . աւուը ամսեանն Հոկտեմբերի ,

Թուականիս Հայոց Ռթշմթ

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Սրբազն Արքեպսկ. Դուռհան

Արժանընտիր Պատրիարք Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ

Մեծանուն Յորելեար Սրբազն.

Զեր Բարձր Սրբազնութեան Յորելեանը առիթը միայն կ'ընծայէ ինձ յայտնելու այն խորունկ պատկառանքն ու հիացումը զորս կը սնուցանեմ Զեր հանդէպ, ովհեալ Պէր պէրեան Վարժարանի մէջ Զեր ունեցած այնքան օգտաշատ զասաւանդութիւներէն:

Աներկայ եմ որ Ազգը կը տօնէ իր ամէնէն արժանաւոր և բացառիկ ու լուսաշող դէմք մը ներկայացնադ իր Մեծ զաւկին յորելեանը, որուն հանդիսաւթեանց ևս ալ հեռաւէն կը մասնակցիմ բոլոր սրտովս, մաղթելով որ Զեր Սրբազնութեան բարձր չուքք երկար տարիներ անպակաս ըլլայ ազգին վրայէն, որուն բարօրութեան նուիրեցիք Զեր անմատէլի միտքն ու անապական հոգին:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյք

Մնամ Զեր Էրախտագէտ սանը՝

ԶԱՐԵՀ ՄԵՐԵՑԵՑ

27 Հոկտ. 1929

## Բարձրաշնորհ

Տէր Եղիշէ Արքեպսկ. Դուռհան

Սրբազն Պատրիարք Հայոց

Երուսաղէմի

## Սիրելի Սրբազն.

Համեցէք ընդունիլ մէր չնորհաւորութիւնները Զեր Սրբազնութեան Յորելեանին առթիւ:

Որդիս եւ ևս համբուրելով Ս. Աջոյք  
Ի. ՇԱՀԻՆԵԱԾ

## ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

Alexandria, 27 Հոկտ. 1929

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՑԱՆՑԱՆՈՒՄ

P. O. Box 285,

ԱՐԵԲՈԱՆԴՐԻԱ (ԵԳԻՊԵՏ)

Պատ. կեդր. Յանձնաժողով

Դուռհան Յորելեանի

Երուսաղէմ

Ներկայիւս կը փութանք յայտնել Պատ. Յանձնաժողովի թէ՝ Հայ Գիւղատնուհան կեդր. Վարչութիւնս, ի պատի Սրբազն Յորելեարին, այս տարի Եղիպտոսէ, մեր նահասակ սերունդին շառաւիղներէն, Միացեալ Նահանգաց Երկրագործական համալսարանները դրկուած հետեւալ երեք ուսանողները անուանած է «Դուռհան Սաներ»:

1. Պետրոս Նանիկեան՝ ուսանող Թէքսասի Երկր. Գոլէճին մէջ.
2. Յակոբ Յակոբեան՝ ուսանող Հիւսիսային Քարօլայնի Գոլէճին մէջ.
3. Մարտիրոս Թորոյեան՝ ուսանող Քոլորատոյի Գոլէճին մէջ:

Վատահ հնք թէ՝ հայ խոնարհ և աղնիս մշակներու անունով, հայ միուքի մեծագոյն և աղնուազայն մշակն եղած յարգանքի այս անկեղծ արտայայտութիւնը, պիտի արժանանայ Նորին Բարձր Սրբազնութեան հայրական մասնաւոր զնահատանքին, մասնաւանդ որ այդ գիւղատնուես ուսանողները, Երկրագործական ուրիշ ճարտարարուեամնե-

բու շարքին, պիտի հետեւին նաև արդիական հաւաքուծութեան, որ այնքան սիրական միւզը եղած է Սրբազնն Յորելեարին։ Մեծ յուս ունինք որ «Դուքեան Աններ»ը, որպէս հմուտ հաւաքուծներ, մօտաւոր ապագայի մէջ, Հայաստանի անտեսութիւնը պիտի յաջողին օժան «Դուքեան» ազնուացեղ թուչնազգիներով, ինչ որ հրճուանքի ալիքներով պիտի ողողէ մեծ հոգին հայրենաւէր Առաքեալին։

Խորին մեծարանքներով

Ա. ԱՏԵՓԱՆԵՍԻՆ Դ. ՓՈՓԱԶԵՍԻՆ ՄԱՄԲՐԻ Շ. ՎՐԴ. ԱԿՐՈՒՆԵԱՆ  
Քարտուզար Գանձապահ Նախազահ  
(ԱՆՎՐԲ)



Հայր Պրեմմէն Նիւ Եորքէն նամակ մը ուղղած է Ա. Պատրիարքին, որուն մէջ կ'ըսէ Յորելեանի մասին։

— «Ծնողքս շատ գնահատեցին Զեր դրկած պատգամը եւ իրենք ալ բարեմաղթութիւններ կ'ընեն Զեր Յորելեանին առթիւ։

Նատ կը ցաւիմ որ Զեզի մօտ չեմ, բայց պիտի յիշեմ Զեր Ամենապատութիւնը սեղանի առջեւ աղօթելով որ Աստուած Զեզ մեզի պարզեւէ գեռ շատ մը աւելի օգտակար տարիներու համար»։



Ն. Ամենապատութիւն  
Տ. Եղիչէ Արքեպս. Դուքեան  
Պատրիարքարան Հայոց  
Երուսաղէմ

1929 Հոկտ. 29

Երուսաղէմ

Սիրելի և Պատուական Բարեկամաւ։

Ինձ համար շատ մեծ պատիս մը եղաւ ներկայ գտնուիլ Զեր Սրբազնութեան Յորելեանին առթիւ կատարուած հանգիստութեանց, որոնց մէջ իմ վրաս ամէնէն շատ որպաւորութիւն ընող և ամէնէն շատ նշանակութիւն ունեցող պարագան եղաւ Զեր սուրբ պատարագ մատուցանելը իրեւ քահանայ, թափուր ձեկելով պատրիարքական աթոռը։

Ասիկա ամենեւին պիտի չմոռնամ ես։

Երբ Զեր Ամենապատութեան կը մատուցանեմ իմ չնորհաւորութիւններու ո՛չ միայն Զեր քահանայական ձեռնազբութեան յիսուն տարիները կը յիշեմ, — որոնց թիւին վը-րայ չէ խոդիրը — այլ մանաւանդ Զեր հոգեոր առաջնորդութիւնը, Զեր ժողովուրդին հովուութիւնը որ զրաւած է Զեր բոլոր կեանքը։ Այս երկրի մէջ իմ անցուցած տարիներու ընթացքին քիչ մը բան կրցայ սորպիլ այն ազգեցութեան մասին, որ արդիւնքը եղած է Զեր կեանքին։ Եւ ես վստահ եմ որ այս ազգեցութիւնը տարիներով պիտի ապրի շատ, շատ կեանքերու մէջ այս աշխարհի վրայ, տասնեակ տարիներով նոյն իսկ գարերով։

Թող Աստուած պահէ Զեր կեանքը և կարողութիւն տայ Զեզի շատ տարիներ ծառայելու։

Խորին յարգանքներով Զեր Սրբազնութեան  
անկեղծ և խանդակաթ բարեկամ  
ԷՏՎԵՐՏ Վ. ՊԼԵԶՅՈՐԸ



ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՈՒՆ

Համար 1075

Կ. Պոլս, 28 Հոկտ. 1929

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպ. Դուքան

Արժանընալիր Դահակալ Ա. Աթոռային

Երուսալեմայ

Ամսոյ 26ին, Շաբաթ օր, տօնեցինք հսո Զեր Բ. Արքազնութեան եկեղեցարան, ուսուցական և զրական գործունէութեան լինամեակը փառաւոր հանդիսաւթեամբ և ժողովրդական խանդավառ ցոյցերու մէջ: Առաջառան Ս. Պատարագ մատուցինք Եերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, ուր՝ հակառակ անձրեւու օդին ու գործի օրուան, ներկայ էր Երկսեռ խուան բազմութիւն մը ամէն զաստիարգէ, եկեղեցականներ, ապդ. Երեսփոխաններ, Կրօնական և Քաղաքական ժողովոց անդամներ, վարչական մարմիններ, մամուլի ներկայացուցիչներ, մատուրականներ, ուսուցիչներ և ուսանողութիւն, վաճառականներ, արհեստաւորներ, ելն, սրոնք փութացած էին իրենց ներկայութեամբ իրենց յարգանքի ու մեծարանքի բաժինը բերել Արքազան Յորելեարիդ: Ի ժաման Ս. Պատարագի քարոզ խօսեցանք, բացատրելով օրուան տօնին նշանակութիւնն ու կարեռութիւնը ու Զեր Բ. Արքազնութեան արեւատութեան համար մազթանքներ ըրինք, որոնց ժամանակցից ժողովուրգը իր սրուառուչ օամէններով: Յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստան պաշտօն կատարուեցաւ Դուրեան գերդատանի ննջեցելոց համար: Ապա Ապդ. Մատենադարանին մէջ տեղի ունեցաւ մասնաւոր ընդունելութիւն մը, ուր յանուն Մեծանուն Յորելեարիդ ընդունեցինք չնորհաւորութիւններ ու խնդակցութիւններ:

Զեր Բ. Արքազնութեան պատուական անձին հանդէպ ցոյց տրուած ժողովրդական այս անօրինակ համակրանքի ու մեծարանքի արտայայտութիւնը մատուցանելով Արքազան Յորելեարիդ, նաև կատարած կ'ըլլանք այն համելի պարտականութիւնը, զոր մեծայարգ Բրօֆ. Արքահամ Տ. Յակոբեան, Ապդ. Ընդէ. Ժողովի Ատենապետը, զբաւ մեր վրայ նոյն օր Ապդ. Մատենադարանի մէջ իր խօսած ճառովը:

Կրինելով մեր չերժազին մազթանքները, միամք ողջունիւ սիրոյ և մեծարանաց

Աղօթակից

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԵՍՐՈՓ ԱՐՔԵՊՈՎ.

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՌՈԴԻՍ ԱՐՔԵՊՈԽԱԿՈՊՈՍ ԱՆԱՍՏՈՍ ՍՐԲԱԳԱՆԻՒՆ  
ՖԲԱՆՍԵՐԵՆ ՌԻՎԵՐՁԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԻՒՆ:

Ե. Ամենապատուութիւն

Երուսաղէմի Հայոց Պատրիարքին

Ամենապատիւ Տէր.

Հովիւներուն երկնային Պետք հաճած է չնորհել Զեր Զեր Բահանայութեան լինամեակը, և մենք կը փութանք զաւ Զեր Ամենապատուութեան միւս հիացողներուն հետ մասնակցելու համար ընդհանուր ուրախութեան և բերել Զեղի մեր անմենասանկեղծ չընորհաւորութիւնները:

Զեր հովուական գործունէութիւնը, լի՛ եռանգով ու նուիրումով, կը կրէ երկու հոգեոր ծիրքերու կնիքը, սրոնք խօսութիւնն են քրիստոնէական ճշմարդտ կետնքին, այ-

սինքն՝ խորանեկ խմաստութիւն և անկեղծ սէր: Մէկ կողմէն եթէ քրիստոնէական սէրը Զեր Ամենապատուութիւնը սիրեցեալ հայրը ըրած է Զեր հօտին— և այդ սէրն է որ այս վաղնջական վանքին կամարներուն տակ ժաղաված է տարագիրներու բազմութիւն մը և խեղճ որբեր, վերջին պատերազմին զոհել ամէնքն ալ—, միւս կողմէն իմաստութեան ձիրքը, զոր Տէրը պարզեած է Զեր Ամենապատուութեան, Դուք ցոյց տուած էք աստուածաբանական աշխատութեանց և վարդապետութեան մէջ, ինչպէս նաև պատմութեան և գրականութեան փայլուն աշխատութիւններու մէջ, բանասից ծական գործերու մէջ, որով չէք դադրած ճնշացնելէ հայ լեզուին ժառանգութիւնը:

Զեր լուսաշող լայնամտութիւնը, ինչպէս նաև Զեր բարեսրատութիւնը ոչ միայն անխղելի կապերով միացուցած է Զեր Ամենապատուութիւնը Զեր հօտին, այլ նաև երաւասպէմի քրիստոնեայ եկեղեցիներու ներկայացուցիչներուն:

Թուս Օրֆօուաքս Եկեղեցին խորապէս կ'զգայ այն կապերը որք զինքը կը միացնեն Հայոց Եկեղեցւոյն. որպէսեաւ ամէն ատին երկու եկեղեցիներուն ճակատագիրը առնասարակ կապուած են իրարու, և այսօր ալ Հայոց Եկեղեցւոյն վարչական կեդրոնը կը գոնուի մէր Հայրենիքի ստհմաններուն մէջ, որ զրեթէ Հայրենիքը եղած է Հայաստանի թշուառ ժողովուրդին: Ինչպէս միւնոյն աղէտներ և միւնոյն անդոներ, նոյնպէս միւնոյն յորսեր, գէպի աւելի լու ճակատագիր մը կը չարտունակն ամրապնդել Հայոց և Թուսաց միւնթեան զիծերը:

Կը յուսանք թէ Զեր Ամենապատուութեան, ինչպէս նաև Հայոց պատրիարքութեան Յորելեանին այս օրը բարեբաստիկ նշան մը պիտի ըլլայ մէր փափաքներուն ու մէր բաղձանքներուն իրագործման և պիտի ըլլայ նախակարապետը ուրիշ Յորելեանի մը, երբ որ մէր եկեղեցիները ազատուած ըլլան հալոծիչներու և անստուածներու լուծէն:

Թող Տէրը հաճի մօսեցնել այդ հասարակաց ուրախութեան գալուստը՝ լիացնելով Զեր Ամենապատուութիւնը իր օրհնութեամբ և շնորհէ Զեղի երկար և երջանիկ տարիներ տեսնելու վերջին փրկութիւնը:

ԱՆԱՍՏԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՂՈՎ

1929 Հոկտ. 28

Երուսաղէմ



Կ. Պոլիս, 28 Հոկտ. 1929

#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Արքազան Արքեպիսկոպոս Գուրեան

Արժանընտիր Պատրիարք և Պահակալ Արքոց Յակոբեանց

Առաքելական Ա. Աթոռոյն

յԵրուսաղէմ

#### Ամենապատիւ և Շնորհազարդ Արքազան Հայրիկ

Հանուր Հայութեան կողմէ իրաւամբ և արժանաւորաբար ամենուրեք տօնախմբուած Զերդ Ամենապատուութեան Յորելիանական հանդիսութեանց ի Քաղաքիս ներկայ գրտնուիլ իմ կողմէ եւս ամենաքաղցր ու նուիրական պարուականութիւնն մը ըլլալով հանդիր՝ շատ ու շատ կը ցաւիմ որ յակամայ թելացայ անոր մէջ, մի միայն իմ վերջերս ենթարկուած ծանր հիւանդութեանն պատճառու:

Բայց ակամայ պարուազանցութիւնն չէր կընար արգիլել զիս զոնէ գրաւոր կերպով ներկայացնելու Զերդ Բարձր Սրբազնութեան իմ որդիիական ամենաանկեղծ ու յարգալիր շնորհաւորութիւններս Զերդ Ամենապատուութեան արժանաւոր և պատուական Յորելեանին առթիւ, ինչպէս նաև իմ սրուարուզիս ու խոնարհ բարեմազթութիւններս Զերդ Ամենապատուութեան թանկազին արեշատութեան համար՝ ի փառս և ի պատիւ Առաքելական Ա. Աթոռին և հանուր Հայ Ազգին:

Կը ներէք Սրբազն Հայր իմ, որ տկար գրիչս չէ կարող արժանաւոր թարգմանը ըլլալ իմ որսազին զգացումներուն Զեղ հանդէպ, բայց հաւատացէք, պատուական հայրիկ թէ իր Հայ Ազգին յետին մէկ անհատը, Զերդ Սրբազն չնորհազարդութեան հանդէպ իմ տածած խորին մեծարանաց, ջերմազին սիրոյ և երախտագէտ զգացմանց ամենանկեղծ հաւատափառ մինչեւ սքանչացում ու հիացում կը տանին զիս իրաւամբ:

Արդիական ակնածանոք եւ ամենախորին յարգանօք մատչելով ի համբոյր Ամենապատութեանդ Ս. Աջոյն և հայցելով Զեր Սաստածահաճոյ օրհնութիւնը,

Մնամ խոնարհ ծառաց  
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՍՏՎԵԱՆ

### ՄԵՍՈՐԱԿԱՆ ՀԵՄԱՐՁԵՐ

ՔՆԻԱԺԷԿՈ, ՍՈՒԻՏ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Թիւ 1364

Բակամէզօ, 28 Հոկտ. 1929

#### Ամենապատիւ

S. S. Եղիչէ Արքեպիսկոպոս Դուքրեան

Արժանընտիր Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

#### Ամեն, Սրբազն Հայր.

Թոյլ առէք Զեր մէկ կրտուեր աշակերտին յետիններէն մէկն ըլլալ՝ յայտնելու իր հիացումի ու պաշտումի խորունկ զգացումները Զերդ Հայրութեան հանդէպ: Մանկութենէս մինչեւ այսօր Զեր գէմքը կը մնայ տիտան մը եւ մտափապար մը ցանկալի: Եւ եթէ օրուան հոգերը, ծանրաստադուկ աշխատանքը, հեկնեւ վաղքը լուսաւորութեան գործին եռեւէն արգելք կ'ըլլան ինձ յաճախ զրելու Զեր Ամենապատութեան՝ նոր Դուրու Շնորհալիիդ՝ հայրական օրհնութեանդ ի խնդիր, լոյսի կարօտ աչքերս միշտ գէպի Զեղ կը նային՝ Փարոսիդ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ մանաւանդ, թարգմանչաց Տօնին, Մեսորապեան ծեմարանին ալ տօնը դարձած, մեր սրակին միջ, մեր սաներուն, ուսուցչական կազմին ու ժողովուրդի ներկայութեան, հանդիսաւոր կերպով տօնախմբեցինք եւ Զեր խնկելի տարեղարձը, կէս դարս գումարութիւն: Անդին զոր կանգնեցինք մեր լոյսի տաճարին մէջ՝ եօթնարփեան թարգմանչաց եօթը շնորհներով օծուն հայրութեանդ Պարին հասակն էր ան:

Հայրական օրհնութեանդ կարոսով,

Որդիական սրտաբուխ մաղթանքներով,

Եւ համբուրի Ս. Աջոյդ

Մնամ մին Զեր յետին աշակերտներէն

Գէմրդ ՄԵՍՈՐԱԿԱՆ

THE ARMENIAN EVANGELICAL UNION OF AMERICA

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

(ORGANIZED 1902)

30 Հոկտ. 1929

#### Ամեն. Տ. Եղիչէ Ս. Արք. Դուքրեան

Արժանընտիր Պատրիարք Երուսաղէմի

Երուսաղէմ, Պաղեստին

#### Ամեն. Սրբազն Հայր.

Ամերիկայի Հայ Աւետ. Միութեան եկեղեցիները այս մեծ երկրին մէջ, ուր որ հընարաւոր եղաւ, Առաքելական Մայր Եկեղեցւոյ զաւակներու հետ, միասնարար ու խանդավառորէն, տօնախատարեցին Զեր Քահանայութեան Յիսուսինը պատ-

շաճ շքեղութեամբ, յանձին Զեր պանծացնելով բարձր խմացականուրիւնը, անբասիր կզերը և արժանաւոր մարդը, որ եղած է անձնուելու աւսուցիչը գպլոցներէ ներս, պերճախօս քարոզիչը՝ բեմի վրայ և սրբակենցաղ հոգեորականը՝ կրօնական մարզին մէջ։ Զերդ Սրբազնութեան անունով կազմակերպուած Յորելեանակական բոլոր հանդէսները Ատլանտիկանէն մինչև Խաղաղականի ափերը տարածուած հայաշատ կեզրոններու մէջ արտայայտութիւնն էին այն անկեզծ յարգանքին ու հիացքին զոր ամէնքս կ'զգանք Զեր պայծառ ու խորհրդապաշտ անհատականութեան հանդէպ։

Սրբազնի կը մազթենք, որ Ամենաբարին Աստուած արևշատութիւն չնորհէ Զերդ Սրբազնութեան, որ չարունակէք հոգեոր շաւնչով օծուն Զեր բանաստեղծական քնարին լարերը թթվացնել ներշնչութիւն տալու մեր հոգիներուն, Զեր ճշմարտութեան պատգամիերը պատգամել, Միօնի լեռնէն, աւելի ազդու չեշտերով ու տիրականօրէն, ու Զեր սրբանուեր կեանքովը օրինակը հանդիսանալ Զեր հօտին, Զեր բեղուն խմացականութեամբ ու բարեպաշտիկ հոգիին ցոլացումներով լուսաւորուելու, աղնուացնելու և բարձրացնելու համար անոր ալ միտքը, սիրտն ու հոգին։

Որդիական ամենախորին յարգանքներով  
Ի դիմաց

Ամերիկայի Հայ Աւետ, Միութեան  
Նախազահ Յ. Մ. Տէֆոնեսն Քատրիարք Երաւուաղէմի



Թիւ 596

### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիչէ Ա. Արքեպիսկոպոս Դուքեան

Առաքելաշնորհ Պատրիարք Երաւուաղէմի

### Ամենապատիւ Սրբազն Հայ'

Զերդ Ամենապատութեան 50 ամեայ Քահանայական ու մշակութացին Յորելեանի հանդիսութեանց սրտաբուխ սպատրաստակամութեամբ մենք եւս, Պուլկարիոյ Սուաջնորդութիւնս, Քահանայական զառ, Թեմական խորհուրդ, Պօֆիայի թաղական խորհուրդ, Ազգ. Վարժարանի հոգաբարձութիւն, Մեսրոպկան ճեմարան, մշակութային, լսարսուական, մարմնակրթական միութիւններ և Հայ հասարակութիւնը ըերինք մէր մասնակցութիւնը՝ տօնելով Զերդ Սրբազնութեան Յորելահանական հանդէսը։

Առաւօտ մատուցմամբ Ա. Պատրիարքի գոհաբանական մաղթանքներ եղան Զերդ Ամեն. Սրբազնութեան արեւշատութեան համար. յետ միջօրէի, քաղաքիս մէկ չքեղ սրահին մէջ հանդիսութիւնք կատարուեցան, բանախօսութիւններ և խոր յարգանքի արտայայտութիւններ տեղի ունեցան։

Այս առթիւ Թաղ. Խորհուրդս ի դիմաց Պօֆիայի ամբողջ Հայ ժողովրդեան կուգայ յայտնել իւր որդիական խորին չնորհաւորութիւնները և կը մազթէ որ դեռ երկար տարիներ ապրի Զերդ Սրբազնութիւնը, և հայ միտքը, հայ զիրը և հայ բեմը զեռ ևս բախտն ունենայ վայելելու Զերդ Հայրութեան օրհնարեր չնորհքը։

Ակնածական համբուրիւ Ա. Աջոյ Ամեն. Սրբազն Հայրութեան Զերում

Մասմք խոնարհ որդի

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ատենապահ Ատենապետ

ԱՐՏ. ԶԱՔԱՐԵՍՆ Ե. ՑԱԿՈՒԲԵՍՆ

3 Նոյեմբեր 1929

Պօֆիա

(ԱԿԵՐ)



Մանչեսթը 4 Նոյեմբեր 1929

## Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Գուրեան

Արժանալսոթիր Պատրիարք Արքոյ Երաւանէմի

յԵրաւանէմ

## Շատ պիրելի Արքազան Հայր .

Կը խորհիմ թէ՝ ի՞նչպիսի բառեր գանձելով շարագրեմ համակ մը, որով հոգւոյն խուրելն ըզլսած բոլոր զգացումներուն թարգմանը ըլլաց, և այսպէսով միհնոյն առնեալ պարտք մը հատուցած ըլլամ գերազոյն վարդապետի ախտար հետեւողին:

Ճիշդը բաելու համար Բարիգէն անցնելու պահուս էր որ իմացայ ձեր թանկազին Սրբազնութեան յինամեայ Յորելեանի ուրախասոիթ լուրը: Միջանկեալ կերպավ լուսէ թէ՝ տարիներէ ի վիր հայ թերթ մը կարգալու պատիւէն զրկուած եմ. ես որ Իգմիրի մէջ զրեթէ քսան և հինգ տարիներ անլուգհատ բալոր մեր թերթերը կը լափէի, քանի մը առարիներէ ի վեր կամովին դադրած եմ, քանի որ բոլորն ալ կուսակցական թերթեր ըլլալով, իրարու հանդէպ հայնուչներով լեցուն են, և տարակորս չկայ որ՝ այդ թերթերը եթէ կարգալու ջանամ, պիտի ջզայնանամ ու հիւանդ պիտի ըլլամ. ահա այս է զլաւուր պատճառը որ՝ Յորելեանի աւետիւր այս վերջին օրերուս մէջ իմանալու բազին ունեցայ, և ահաւասիկ Մանչեսթը կը շտապեմ զրելու ներկայս, որպէսզի Զեր Բարձր Սրբազնութեան հանդէպ հիացում ունեցողներու շարքերէն զուրս չմնամ:

Սիրելի Սրբազան Հայր. ի աղայ տիսց գպրոցական զրասեղաններու վրայէն մանկական անմեղունակ զոհունակութեամբ կը կարգալինը Հայ. Ս. Եկեղեցւոյ մեծ զաւոկներուն զրուած քնիրը. այդ բոլորն ալ մեծ ախորժակով աչքէ կ'անցընէինք և զիրար կը լրացնէին Խրիմեան, Սլլշան, Սրուանձտեանց, Սլլվազովսքի, Մելք. Մուրասիանց, Օրմանեան և այլք բնդ նոսին, որոնց անունները մի առ մի չեմ յիշեր արս պահուս. չեմ զիտեր որ՝ ասկէ յիսուն տարիներ յեսոյ եկող սերունդին մէջ պիտի կրնան զլունուիլ Հայ Եկեղեցւոյ բանիքրուն մշակներ, որոնք իբր հայ ժողովրդեան ծոցէն բարձրացած հովանաւոր սոսիներ իրենց շուրջը կարենան պահել բազմահազար հայութիւնը ի սիրուս աշխարհի. այս հարցումին պատասխաննելը խիստ գժուարին կացութեան մէջ կը զնեն զիս:

1924-ի Ս. Զատիկլը Սիրնի բարձունքին վրայ ձեր բարձր և սիրելի Սրբազնութեան հովանույն ներքեւ տօնելու բարերազդութիւնն ունեցայ. աչօք բացօք տեսայ զձեզ ձեր աշխատասենեակին մէջ շրջապատուած բարձրազոյն կարգի Ժառանգաւորաց աշակերտներով, որոնց իբր մտքի լուսաւորիչ կը ներշնչէիք Դուրեհաններու հովին և զգացումները. և ես անձնապէս պահ մը միխթարուած էի ի տես այդ բարձր և զնահատելի ընթացքին. սուլայն գարձեալ, միշտ գարձեալ որտիս խորերէն հետեւալ հարցումը կ'ուզեմ ես ինքինքին:

Յետ այսու ո՞վ պիտի պատմէ մեզի ներսէս մեծ հայրապետին պարթե հասակը և փառքէ պսակը. ո՞վ պիտի ներբուծ մեզի Սահակին զրիչն ու արցունքը. ո՞վ պիտի ներշնչէ մեզի Մանզակունին կուրծքն ու կրակը, ո՞ր հայ Եկեղեցականն է որ պիտի ուսուցանէ մեզի Շնորհալիին քնարն ու օրհնութիւնը. և ասկէ վերջը ո՞ր հայ եպիփակապոնն է որ մեզի պիտի ներբարքէ Խրիմեանին իբր հայրիկ գործելակերպն ու ժողովրդականութիւնը, և կամ ո՞վ մեզի պիտի ներկայացնէ Օրմանեանն իբր սիւներէն մին Հայ. Ս. Եկեղեցւոյ:

Բայց ի՞նչ հարկ երկարաբանել այս մասին, ես պիտի վափաքէի որ հայ ազգի բոլոր հաւասարիմ զաւակները ձեր քահանայութեան յինամեակի յորելեաններ առթիւ ուխս մը զնելին իրենցմէ ծնունդ առած հոգեհասորներու սրտերուն մէջ, այս է՝ ապագայ սերունդներն ես արժանահային նորանոր Դուրեհաններու Յորելեաններու տօնելու և այդ ըլլար առ յաւէտ:

Ահա, Սրբազան Հայր, Զեր բարեպատեհ Յորելեանին առթիւ իմ վերջին փափաքս ու մաղթանքս . . .

Եեր Հայրական Ս. Օրհնութիւններն խնդրելով  
Միշտ կը մնամ Զեր հարազատ խոնարհ սանը  
Գրիգոր Պ. Քրթթվելակի

ՊԵՌԻՒՆ, 7 Նոյեմբեր 1929

**Ամենապատիւ**

Տ. Եղիշէ Ա. Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմի

**Ամենապատիւ Ս. Հայր,**

Պընթէն զիւզին մէջ եօթը տարիներէ ի վեր Զուիցերիացի հայասէրներու նուիրատուութեամբ ընթացող Հայ Պալոցը երէկ «Զորեքչարթի օրուան հաւաքոյթ» անունով ծանօթ իր ամսօրեայ մէկ հաւաքոյթը ամբողջութեամբ յատկացուց Թարգմանչաց Տօնին և Զերդ Սրբազնութեան յորելեանին։ Այս առթիւ մէր սաներու կողմէ արտասանութիւններ եղան Զեր ստանաւոր և արձակ զրութիւններէն, և մէր ուսուցիչներէն Տիկ։ Գարմէն (Խոկւհի Աւագեան), որ ատենօք Զեր սանուհիներէն եղած եւ Զեր նետ միաժամանակ պաշտօնավարած է խանեան Վարժարանին մէջ, Զեր մասին կուռ բանախօսութիւն մը ըրաւ, որմէ վերջ մէր 54 երկանու սաներու և 5 հայ ուսուցիչներու կողմէն միահամուռ փափաք յայտնուցաւ երկառողով մը չնորհաւորել Զերդ Սրբազնութեան յորելեանը։

Արդէ, ներկայիւս կուգամ որդիական այդ անկեղծ զգացումներուն իւարդման հանդիսանալ եւ մէր չնորհաւորութիւններուն հետ ներկայացնել մէր չերմ մաւզ անքները երկար ու պաղառատ կեանքի մը համար։

Զերդ խոնարհաբար  
Նշան ՊիկեԱն

(Տեօրէն Պընթէնի Հայ Գորոցին)

Փարիզ, 8 Նոյեմբեր 1929

**Ամենապատիւ**

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ,

**Ամենապատիւ Ս. Հայր,**

Խորին երախտագիտութեամբ ստացայ Զեր Ամենապատուութեան հեռազիրը, ի շընորհաւորութիւն անուանակոչութեանս տօնին։

Կ'օգտուիմ առիթէն, յայնելու համար խնդակցութիւններս համազգայն սիրոյ եւ համակրութեան այն արտայայտութեանց համար, որոնք տեղի ունեցան Զեր Քահանայութեան լինամեայ Յորելեանի առթիւ, և ի սրտէ կը մաղթեմ Զեր Ամենապատուութեան երկար ու բարեբախտ տարիներ, յօդուա եւ ի պայծառութիւն Ս. Սթոռիդ։

Մնամ որդիական խորին յարգանօք  
Գ. ՆՈՐՍՏՈՒՆԿԵՑՆ

Նորապատէ Տ. Տաճառ Եպիսկոպոս Պատմաճեան, Էջմիածինէն կ. Պոլիս վերադառնալէ ետքը, Ամեն. Ս. Պատրիարք Հօր ուղղած իր նորմբեր. 10 թուակիր անձնական համակին վերջը, հետեւել տեղեկութիւնը կուտայ։

— «Զերդ Մըբագնութեան Յիանամեայ Յորելեանը Եւեւանի մէջ տօնեցինք համակիրներու բազմութեան մը ներկայաւրեանը, կրկնեցինք մեր սրաբուղի խնդրուածքը առ Ասուած որ պարզեւէ Ձեզ՝ իմ սիրեցեալ Հոգեւոր ծնողին՝ եւկա կեամ եւ առողջութիւն. ներկայիւս կը կրկնիմ իմ անկեղծ ընորհաւորիներս մաշելով պատկառելի Ս. Աջորդ համբուրման»։

M. GARABEDIAN  
Antiquités  
GENÈVE

ԺԵՆԵՎ, 11 Նոյ. 1920

Ամենալատիւ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուռըան  
Պատրիարք Երուսաղէմի

Արքազան Ռւսուցիչս,

Սիմեոնի վերջին թիւէն տեղեկացայ վաստակաւոր Արքազնութեանդ փայլուն Յորեւեանի տօնախմբութիւնը։ Զեր բոլոր աշակերտաց և ամբողջ հայութեան համար խնդութեան օր մըն է այդ օրը, որուն արձագանզը երկրէ երկիր կը առարծուի Հայ զազութեանը ունեցաւ մէջ։ Արտապին կը չնորհաւորեմ՝ մատչելով Զեր Ս. Աջին և կը մաղթեմ երկար տարիներ ու առողջութիւն։

Արմաշի Գալրեզանքի 1895/97 ի շրջանին Զեր Քննազատական Ազգային Պատմութեան դասաւանդութիւններն ու բանաստեղծական գեղեցիկ պատկերներով մի քարոզները միշտ խոր տպաւորութեան տակ պահած են զիս։ Հոն, այդ շրջանին էր որ մտաւոր ատաղձակազմութեան կազմուեցաւ և երախտապարտ կը մնամ Արքազան Ռւսուցչիս։

Ուրախութեամբ կարդացի այն լուրը զոր Միմն կուտար, ըստ որում Ազգ. Բարեւար մը ստանձնած է Մատենադարանի շինութեան բոլոր ծախքերը. խմացայ նաև որ «Դուռըան Մատենադարան» տիտղոսին տակ հաւաքուած ժողովրդական նուիրատաւութիւնները պիտի յատկացուին (տոկոսները) նոր հրատարակութեանց համար։

Արդ, արդեօք աւելի նպատակայարմար և օգտաւէտ չպի՞մ ըլլար եթէ «Դուռըան Թանգարան» մը կազմուէր, հոն հաւաքելով մեր պատմութեան, գեղարուեստի և առասարակ մեր հին կեանքի նշխարները, որոնցմէ շատ թանկազին բեկորներ կը գտնուին հայ հարաւասներու և մասնաւոր հաւաքածոյ ունեցողներուն քով։ Մեր անցեալի այշ կենդանի վկանները շատ աւելի հաւաքքաքական են մեզի և քաղաքակիրթ ժողովուրդներու համար։ Հայ' թէ օտար բաղմաթիւ անձինք զրեթէ բնաւ տեղեկութիւն չունին մեր անցեալին նկատմամբ ու կը շփոթեն, յաճախ, մեր ընդունակ ցեղը, Ասիական անմշակ ցեղերու հետ Վենետիկի փոքրիկ թանգարանին զատ ո՛ւ է թանգարան չունինք. բայց բաւական մասնաւոր հաւաքածոյներ կան հայերու մօտ, որոնք հատիկ հատիկ ժողոված են ու կը պահեն մինչեւ որ գոյութիւն ունենայ ապահով հայ թանգարան մը անոր նուիրելու համար։ Օտար թանգարաններու մէջ ցանցաւ նմուշներ կան բոլոր Եւրոպայի մէջ, որոնք կարելի է ետ առնել և գետեղել մեր հայ թանգարանին մէջ, փոխանակելով Եւրոպական կամ Արեւելեան հնութեանց հետ։

Քանի մը կոտր հայկական հնութիւններ ես ալ ունիմ զոր չեմ ձեռքէ հաներ՝ հակառակ որ հնագիտութեան վաճառականութեամբ կ'զրազիմ։ Միշտ յոյս ունիք որ հայ թանգարան մը պիտի ունենանք օր մը և անոր պիտի նուիրեմ այդ հետաքքաքական նշխարները։ Այս հոգեբանութեամբ շատ հայեր կան եղիպատու, Բարիկ և Լոնտոն, որոնց քով աւելի հոյակապ նմուշներ կան մեր անցեալին վերաբերով։ Աւրեմն, Ալբազան Ռւսուցիչս, շատ յարմար առիթը չէ՝ արդեօք, հիմա, քննելու եւ իրականացնելու շատ մը հայերու այս երազն «Դուռըան թանգարան» տիտղոսին տակ։ շատ աւելի անմահ անուն մը պիտի ըլլայ Դուռըան անունը կապելով իրեն՝ այսինքն Ազգ. քննադատական պատմութեան հեղինակին անունը թանգարանին հետ միացնելով։

Զոտոնամ ըսելու օր հայ և օտար այցելուներու համար չափազանց հետաքքարական պիտի ըլլայ այցելել հայ թանգարանը կ'ըրակի եւ տօն օրերը 0,50 չլիմն եւ լուր օրերը մէկ շլմն մուտքով։

Կրկին չնորհաւորելով Զեր բեղմնաւոր Յիսոնամեակը կը համբուրեմ Զեր Ս. Աջը։  
Մ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



ՅՈՐԵԼԵԱՆ ԲՐՈՅ. Կ. ԹՈՒՄԱՅԱՆԻ  
ՅԻՄԱՍՄԵԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ  
PROF. G. TOUMAIAN JUBILEE COMMITTEE  
[Suite 404] 276 Fifth Avenue  
NEW YORK, N. Y.

Դեյ. 11, 1929

Ամեն. Տ. Եղիշէ Արքեպոս. Դուքեան  
Պատրիարք Երուսաղէմի  
Պալեստին

Ամեն. Սրբագան Հայր.

Բրօֆ. Կ. Թումայանի Յօրելեանի (որ տեղի պիտի ունենայ 1930 ին սկիզբները) — Կեդրոնական Յանձնախումբը Զեր Քահանայալպութեան Յիանամեայ Յօրելեանին առաջիւ, որ տեղի ունեցաւ Երէկ ի քաղաքիս հանդիսաւոր շքեղութեամբ, կը փութայ շընորհաւորել Զեր Սրբազնութիւնը, և կը մաղթէ որ Ամենաբարին Աստուած չնորդէ Զեզ Երկար ու Երջանիկ տարիներ՝ իբր նոր Լուսաւորիչ՝ շարունակելու Զեր վսեմ գործը, և հոգենորոգ պատգամներով ներշնչելու մեր սիրելի ազգը Սիօնի Երկնամերձ բարձունքէն, և քաղցր խրախոյս և հզօր ազգակ ըլլալու Հայ նոր սերնդեան հետևելու Զեր լուսաշաւիլ հետքերուն:

Մատչելով ի համբոյր Զեր Աջոյն

Ամենախորին յարգանոք

ՓԱՌԿԱԱԿ ԻՍՔԻՆՏՔԻԵԱՆ Ա. Կ. ԿիհլՊէնկեսն

Ամենապպիր

Ամենապետ

598 MADISON AVENUE  
NEW YORK

11 Նոյեմբեր 1929

Ամենապատիւ Տէր

Եղիշէ Արքեպիսկոպոս Դուքեան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

Ամենասիրելի Սրբագան Հայր իմ.

Երէկ՝ զմայլելի աշնան օրով մը, հունձքը կատարեցինք Նիւ Եորքի Հայոց սիրտերուն մէջ Զեր Սրբազնութեան հանդէալ ուռնացած հիացման ու սիրոյն: Իբրև Յօրելեանձնաժողովի անդամ և Զեր Սրբազնութեան հինաւուրց հիացող, հանդէսին մէջ պատեհութիւն տրուեցաւ զգացումներուս հրապարակային արտայայտութիւնն ընելու: «Ի խորոց սրաի» քանի մը խօսք գրած էի, անոնք կարգացի: աւա՞լ որ — ունկնդիրներու մխիթարական փաղաքուշ խօսքերուն հակառակ — այն տպաւորութիւնն ունեցայ որ ասդամանդէ պալատին՝ խեցիէ գուռ շինցի...», ևս որ սիրտիս ամէնէն նուիրական խորչերուն մէջ պիտի ուղէի սուշտուիլ, հոնկէ մարգրիտ գուրս բերելու Զեզի համար....

Թոյլ տուէք որ համարակաց հանդիսութեանց մասնակցել վերջ, առանձնապէս ևս շնորհաւորեմ Զեզ այս Երկտողով, — կ'ենթազրիմ թէ նամակներու գէզի մը առջն կը զանէք գուք Զեզ այս օրերուս, և հետեարար կարձ զրելը Զեզ սիրելու ապացոյց է, — ու մաղթեմ որ զեռ շատ ու շատ տարիներ Ապգն ու Եկեղեցին վայելեն Զեր ներկայութիւնը, և գուք ալ հրծուիք անսնց Երախտազիսութեամբ ու սիրով:

Կը համբուրեմ Զեր Ա. Աջը, և Զեր անուշ ժպիտին ու օրհնութեան կարօտով, կը միամ միշտ Զեր Սրբազնութեան անձնուէր.

ՅԱԿՈԲ ԱՆՑՈՆԵԱՆ

Վալւնո, 12 Նոյ. 1929

## Գերազնորհ.

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպսկ. Դուքեան

Պատրիարք Հայոց Ս. Երուսաղէմի.

## Սրբազն Հայր.

Ներեցէք ինձ, որ իմ անկեղծ չնորհաւորութիւններս ու խնդակցութիւններս յայտնեմ Զերգ Սրբազնութեան, Զեր արժանաւոր գործունէութեան և 50 ամեայ Յորելնաւկան տօնախմբութեանդ առթիւ: Արդարե հայ ժողովուրդը գիտէ գնահատել Զեր Սրբազնութեան ձիրքերն ու բարեմասնութիւնները:

Կը յաղթեմ որ մեր երինաւոր Հայրը անսասան ու անշարժ պահէ Հայ Առաքելական Ս. Աթոռը, եւ անոր պահատանը հանդիսացող Ս. Պատրիարքին երկար կեանք ու առողջութիւն պարզեւէ. վասն զի հայ ժողովուրդը պէտք ունի լուսաւորիչներու եւ անոնց աւանդը պահող հոգեւոր հայրերու:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ

Զեր խոնարհ ծառան,

ՊԱՊԻ. ՔՀՆՅ. ՍՍՐԳԻՍԵԱՆ

Հոգեւոր հովիլ Վաղաճայի թեմին, Ֆրանս:



Պարիզ, 20 Նոյ. 1929

## Սիրելի Սրբազն Հայր.

Բնդունեցէք, խնդրեմ, իմ ալ ջերմազին չնորհաւորութիւնները ու ողջոյնները Զեր գրական և հանրային գործունէութեան յիմնամեակի առթիւ: Ուշացայ. տկար էի, ներողամիտ եղէք:

Մաղթելով Զեր երկար կեանք և առողջութիւն, միամ

Խորին յարգահաօք  
Զերգ ՄԻՒԹ. ՎԱՐՍՆԿԵԱՆ

Փարիզ, 21 Նոյեմ. 1929

## Ամենասիրելի Սրբազնու

.... Ուզեցի յիշատակներէս քանի մը էջ զրկել Յորելինական Հասորին համար, կամ քերթուած մը, որ գար իմ անհուն հիացումս արձագանգել Սաղլմական երկինքին տակ:

Բայց ... ահաւասիկ չեմ համարձակիր շփոթահար երդ մը լսել տալ: Ու չա՛տ հեռու էք, որպէսզի զրելէ առաջ, երջանկութիւնը տայի ինքզինքիս Զերի ներկայանալու և լսելու, Զեր մէկ հրաշալի էջը վերյուշելով:

— «Մե՛ծ վարդապետ, աղօւոր ա. բ. գ. էդ դաս մը տուր ինձիս:

Բառերէն աւելի սրտառուչ, անոնցմէ աւելի թանկազին բան մը ունիմ սիրտիս մէջ. զգացումներուս բովանդակ մերկ անկեղծութիւնը, զոր ո՛չ մէկ քերթուած պիտի կարենար հաղուեցնել:

Կը խնդրեմ, Ամենասիրելի Սրբազն, որ պատիւը ընէք ընդունելու զայն, Զեր մեծ Յորելեանին առթիւ:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍՍՄԵԱՆ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵԳԻՊՏՈՍԻ

Թիւ 1142

## Ա.մենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպս. Դուրեան

Պատրիարք Հայոց Երաւանէմի

Երաւանէմ

Դաւառական Վարչութեան Քաղաքական Ժողովս, որդիական ակնածանօք մատչելով ի համբայր Զեր Ա. Աջոյն, կը ներկայացնէ իր չնորհաւորութիւնները և խնդակցութիւնները Զերգ Ամենապատութեան քահանայական լինամեակին առթիւ, որ միւնոյն ատեն լինամեակին է Զեր հանրային, զրական, ուսուցչական բազմաբեկուն գործունէւթեան։

Զեր մտաւոր գերակշռութեամբ, խոր հմտութեամբ, անժխտելի տաղանդով, այս Ազգին գուրզուրանքին առարկան եղած էք, նոյնիսկ Զեր երիտասարդութեան օրերէն և Զեր ասպարեզի սկզբնաւորութեան ըրջանէն, և այսօր իրը պետք՝ Միաբանութեան մը որ կոչուած է ազգային զերակազմութեան զործին մէջ կարեսը զեր մը կատարելու, Զեր բարձր հոգանաւորութեամբ և հայրական խնամքով, բովանդակ ազգին յոյսը կը ներկայացնէք։

Ազգը Զեզմէ կ'սպասէ իր եկեղեցին ամրապնդումը, իր գարաւոր գոյութեան միակ սիւնը, իր տեսականաւթեան գլխաւոր ազգակը, իր լեզուին և մատենագրութեան հետ, որուն ևս մէծ մշակներէն մին հանդիսացած էք Դուք։

Այս բարեբաստիկ առթիւ ներկայացնելով Զերգ Ամենապատութեան մեր ջերմ չընորհաւորութիւնները և մեր յոյսերը՝ Զեր նոր ու արդիւնաւէտ աշխատութիւնները վայելելու,

Մնամք ուղիսական ակնածանօք

Ի գիմաց Քաղ. Ժողովոյ

Ատենապկիր Ատենապետ

Միք. ՆԱԹԱՆԵԱՆ Կ. Գ. ԱԷՖԵՐԵԱՆ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵԳԻՊՏՈՍՈՒ

Թիւ 1143

## Ա.մենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ա. Արքեպսկ. Դուրեան

Արժանընտիր Գահակալ

Ա. Յակոբեանց Առաքելական Աթոռին

Երաւանէմ

Վեճակիս կրօն. Ժողովը կուգայ խնարհաբար իր ջերմագին չնորհաւորութիւնները ներկայացնելու Զերգ Ամենապատութեան քահանայական լինամեակին առթիւ, մաղթելով Զեզ երկար կեանք եւ արեշատութիւն, որպէսզի հայ ժողովուրզը տակաւին երկար տաեն կարենայ վայելել Զեր բազմաբեկուն արդիւնքները, ի փառս և ի պարծանս Հայ Առաքելական Եկեղեցւոյ, որուն սիւներէն մին էք, ոչ միայն իրը անոր նուիրապետութեան կարեւորագոյն գէմքերէն մին և Առաքելական Աթոռի մը իրը Գահակալ, այլ իրը վարդապետ եւ ուսուցիչ բազմաթիւ պատրաստուած եկեղեցւոյ մշակներու, զորս երբեմ մարզեցիք յԱրմաշ եւ այսօր կը հանդէք յԵրուսաղէմ։

Դուք Զեր կեանքով համդիսացած էք իսկական վարդապետը, եւ այսօր Հայ Եկեղեցւոյ Նուիրապետութիւնը Զեղի կը պարտի իր ամէնէն կարող հովիւները, որոնք առաջնորդելու կոչուած են հոգեւորապէս այս ժողովուրդը:

Հայ ժողովուրդը՝ այսօր միշտակելով Զեր իր եկեղեցական կէս դարու բազմարշիւն գործունէութիւնը, երախտագիտական պարտք մըն է որ կը հատուցանէ և Հայ Եկեղեցին ու անոր պաշտօնէութիւնը պէտք չէ մոռնան այն մէծ ծառայութիւնը զոր Դուք անոր մատուցիք, իր անոր կեանքին եւ կենաւնակութեան մեծ զործաւորը:

Մատչելով որդիական ակնածանօք ի համբոյր Զեր Ս. Աջոյն և Ներկայացնելով կը կին մեր չնորհաւորութիւնները և իր եկեղեցական մեր երախտապարտութիւնը,

Մասմք՝ խոնարհ որդիք Զեր

Անդամք Կրօնական ժողովոյ Գահիրէի  
Ղերանդ ՔչնՅ. Տէր ՆՈՀԱՊԵՏԵԱՆ, ՅԱՐԱՒԹԻՒՆ ՔչնՅ. ԱԱՐԳԻՍԻԱՆ  
ԴԱԻԻԹ ՔԱՀԱՆԱՅ, ԱՐՇԱԽԻԹ ՔչնՅ. ՎԱՐԴԻԵՐԵՍԵԱՆ



### ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ

ԵԳԻՊՏՈՍԻ

Թիւ 1150

#### Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպակ. Դուրեան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

Զերդ Ամենապատութեան քահանայական ձեռնադրութեան յիսնամեակին առթիւ Գահիրէի Թեմական ժողովը կուգայ իր ջերմագին չնորհաւորութիւնները յայտնել Սըրբական Յորելեարիդ, որ իր Պետ Ազգային Նուիրապետութեան ամէնէն կարեոր աթուներէն մէկուն, իր բազմահմուտ մատենագիր և խորաքնին բանասէր, կը պատկանիք համայն հայ ժողովուրդին և Զեր Յորելեանը համազգային տօնակատարութիւն մ'է, ուրուն մենք ևս կը բերենք մեր մամնակցութիւնը, իր Գահիրէի հայ ժողովուրդին ներկայացուցիչ մարմին:

Թեմական ժողովս, սրտագին չնորհաւորելով Զեր յիսնամեայ գործունէութեան այս երջանիկ տարիեգարծը, կը մաղթէ Զեղ երկար կեանք, որպէսզի միշտ բարձր հովանիկ տակ պահէք ու պահպանէք Ս. Յակովեանց Սթոռը, և զայն դարձնէք մտաւոր լուսաւորութեան կեդրոն մը և աղբային զարգացման վարարան մը:

Մատչելով ի համբոյր Զեր Ս. Աջոյն

ի զիմաց Թեմական ժողովոյ

Ամենապալիր Ամենապետ

Գ. Ս. . . . Ն. Պ. Ք. Քեջէծեան

